


Մ. ԴԱՎՐՅԱՆ

ՅԵՐԳՉԱՆԿՈՒԹՅՈՒՆ



more zeitung das

MARQAR DAVTJAN

3931

891-99

7-23

ՄԱՐԳԱՐ ԴԱՎԹՅԱՆ

22 JUN 2007

ՏԵՇ 201

ԽՕՏԲԱХՏԼԵՂ

(Hekajələr)

ՅԵՐՃԱՆԿՈՒԹՅՈՒՆ

(ՊԵՏՐՎԱԾՔՆԵՐ)

AzLQGI MQ
UŞAQ VƏ GƏNÇLƏR ƏDƏBIYYATI NƏŞRIYYATI
Bakı - 1939

Առլեկան կենսագործ
ՄԱՆԿԱԿԱՆ-ԳԱՍԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԻ
Բազմութ - 1939

29.03.2013

27070

ՍՐԱԳԻ ԶԱՅՆԸ

1.

— Կնիկ, քո տունը չըանդպի, առաջին անգամը հունիս, բա խելքը չի կտրո՞ւմ, վոր մի քիչ շուտ ասես :
— Վա՛յ, Սամսոն, հոգիս դուրս յեկավ, մի ճարա
արա, վա՛յ, շուտ արա...

— Դե լավ, մի քիչ հավասարա արա, տեսնենք ինչ
ենք անում :

Սամսոն ապօր կնոջը, Սուսամբարին, բռնել եր
ծննդաբերության ցավը : Կովի լիքը կրծքի առաջ
չոքած ժամանակ նա իր ներսից այնպիսի սուր ծա-
կոցներ զգաց, վոր կիսով չափ կաթով լիքը կովկիթն
ուղեց զեն շաբաթել, բայց մի կերպ զապեց իրեն, կո-
վի մոտից մի քայլ հետ կանդնեց և զույդ ձեռներով
մորը բռնած՝ նստեց տեղը :

Սամսոն ապերը, վոր կնոջից մի քանի քայլ հե-
ռու՝ իշու փալանն եր գրստում, նրա ճայնի վրա հետ
նայեց, կնոջը գետնին փուլած տեսնելով խոկոյն
մոտեցավ ու հարցըց :

— Յանի ցավի՞ ե՞...

— Վա՛յ, ել մի հարցնի, շուտ արա :
ել կարիք չկար հարցը կրկնելու : Ճիշտ ե, թե՛ն



3332-57

Սուսամբարի ցավը յերբեք այդպես հանկարծակի չեր բռնել, բայց ամուսինը գիտեր, վոր արդեն ժամանակն եւ այդ մասին կնոջը դեռ մեկ որ ել առաջ եր ասել, թե.

— Սուսամբար, իմ հաշվով պետք եւ վոր վախտը լինի:

— Զե, հալա կա, — պատասխանել եր կինը, բայց ամուսինն այնուամենայնիվ մնացել եր իր համող մանը:

Յերեխաները, վոր բակի հավերն եյին քշում թառ անելու համար, իրենց մոր ձայնից վախեցած՝ գործները թողած խոկույն նրա մոտ վաղեցին: Սամսոն ապերը յերեխաներին հանդսացըրեց, հավատիցըրեց նրանց, վոր վտանգավոր բան չի պատահել և կնոջը թերից բռնած՝ տուն տարավ: Տանը նա իր ձեռքով բաց արեց անկողինը՝ կնոջը տեղավորեց այնտեղ և մեծ տղային - վահանին ուղարկեց Մարիամ բիբու հետեից:

— Ասիր, թող դլուին իրենց տանը թրջի, մեր տանը լվանա: Մի բոպեյից հետո եստեղ յեղեք, — տղայի հետեկից կանչեց հայրն ու դարձյալ շրջեց դեպի կինը, — դու պառկիր, իսկ յես կաթն ու անասուները տեղավորեմ:

— Վա՛յ, չե՛, մոտիցս մի հեռանա, մեռնում եմ...

— Ել լավ, սրտաճաք մի լինի, բան չի դա, առաջին անդամը չի, — հուսադրեց ամուսինը և նրանեց կնոջ մոտ, մինչև վոր դյուլի մանկաբարձուհու հետ վագելազ յեկավ Մարիամ բիբին — Սամսոն ապոր մեծ քույրը: Մարիամ բիբու հետ սենյակը թափեցին նաև նրա յերկորյակ թոռները, իրենց

հարեանուհին Զաբուհին, տատմեր Յեղանը, հայթուի Սանամը և ելի մի քանի ուրիշ կանայք, վորոնք Վահանի աղմուկից հետաքրքրված իսկույն հարոնք վահանի իմանալու, թե ինչումն եւ բանը:

Այդ որը, յերեկոյան, կոլտնտեսության վարչության նիստն եր, վորի անդամն եր նաև Սամսոն ապերը: Բայց նա կնոջ պատճառով ժողովի չգնաց: Նա միայն դուրս յեկավ բակը, ձեռները գրպանում դրած այնտեղ սկսեց անհամբեր շրջել, սղասելով, թե ինչով կվերջանա կնոջ դրությունը: Քիչ անց տնից ինչով կվերջանա կնոջ դրությունը: Քիչ անց տնից դուրս յեկավ Զաբուհին և ուրախ - ուրախ մոտենալով նրան ասաց:

— Հինգ, Սամսոն ապեր, աչքով լիս, եղ եւ հինգ:

— Ելի՞:

— Հա, տղա յե, բեխերով հորը նման, ծամերով՝ մորը, մի լավ, թմիլիկ տղա յե:

— Ի՞նչ ե լոել եղ տնաշենի կնիկը, բա մենք սկի աղջկա յերես չպետք ե տեսնե՞նք: Ուրեմն նա ուղում չի՞ վոչ մի փեսայի ձվաձեղ տալ:

— Ե՛ս, ձկաձեղն ի՞նչ ե վոր, զրանց ժամանակ ձկաձեղով յերեվի միայն աղուալներին են կերակրելու:

— Թաղա փեսայի համար ձվաձեղի պես համով բան չի լինի: Դե լավ, յես հալա իրավունք չունե՞մ եղ փեսացույի մոտը գնալու, - ինուքը փոխելով հարցրեց Սամսոն ապերը:

— Զե, եստեղ հալա շատ գործ կա, - պատասխանեց Զաբուհին և ինքը դարձյալ ներս դնաց:

Սամսոն ապերը մենակ մնալով՝ մի պահ կանդնեց անորոշ վիճակում, ապա իջավ պարտեղ, ձեռքը

գցեց շորենու ճյուղից և մտքերը պաշարեցին նրան:

— Եհ՛, կյանքում ինչպիսի փոփոխություններ են լինում, — ակամայից դուրս թռավ Սամսոն ապոր բերնից, — Հինդը, Հինդ տղա...

.... Մի ժամանակ Սամսոն ապերը վոչ մի յերեխա յել չուներ: Հինդ տարի յեր, ինչ ամուսնացել եր նա, բայց Սուսամբարը վոչ մի անդամ ծննդաբերության ցավ գեռ չեր զբացել, վորսիսի հանգամանքը գյուղում տեղիք եր տվել բաղմաթիվ ասեկոսների, իբր թե Սամսոն ապոր պատճառով ե, վոր Սուսամբարը չի ծնում:

Սամսոն ապերը յերբ ամուսնացավ՝ մոտ յերեսունուհինդ աարեկան եր: Ավելի ջահել հասակում նա իվան բեկենց գառներն եր արածացնում և ամուսնալու համար վոչ ժամանակ եր դտնում և վոչ ել միջոց: Իվան բեկը յերեք աղջիկ ուներ, վորոնցից մեկը գերազանցում եր մյուսին իր դեղեցկությամբ: Ամեն յերեկո, հենց վոր գառները դաշտից տուն եր բերում, Իվան բեկի աղջիկները գալիս, փաթաթվում եյին այն ժամանակ դեռ յերիտասարդ ու բավականին դեղեցիկ Սամսոն ապոր ու հետը զանազան կատակներ անում, իսկ ինքը լուռ մի կողմ եր հրովարդիկներին և առանց մի խոսքի քշում գտները:

Իվան բեկի աղջիկների նկատմամբ Սամսոն ապոր այդ անտարբերությունը տեսնելով գյուղում ասում էին.

— Իր քշած գառների նման Սամսոնն ել և հանդիսու ու անմեղ. յերեկ տղամարդություն չունի...

Յերբ նա ամուսնացավ Սուսամբարի հետ, յերկար տարիներ նրանց յերեխա չեր լինում և դա ավելաց-

նում եր այն բամբասանքների թիվը, վորոնք մինչ այդ ել քիչ չելին տարածված նրանց մասին: Այդտպիսի խոսակցություններ լսելուց հետո նրանք հաճախ գալիս, տանը նստում եյին լուռ, առանց վորեկն խոսք իրար հետ փոխանակելու, սակայն յերկուան ել նույն խնդրի մասին եյին մտածում՝ նույն միտքն առանց կանուն տեսական մասին մտածում և, այդպես, առանց խոսելու յել, իրար շատ լավ եյին հասկանում:

Սամսոն ապոր մտքից դեռ չի անցել: Մի որ տան առջևի պարտեզի ծառերը ջրելիս նկատեց, վոր ջուրը կտրվեց: Նա բահը գրեց ուսին և առվի ուղղությամբ բարձրացավ: Զրի հունը փոխել եր իրենց հարևանուհին—Յեղանը և իրենց ծառերն եր Ջե-

րում:

— Աղջի Յեղան, եղ ջուրն ինչի՞ յես կտրել, — շատ հանդիսատ տոնով ասաց Սամսոն ապերն ու ջուրը թեքեց իրենց պարտեզի վրա:

Յեղանը լուռ սպասեց, մինչև վոր նա մի քանի քայլ հեռացավ և նրա հետեւից լսելի ձայնով ասաց.

— Շան նման չարչարվիր, բայց ելի շուն ու գելի յե մնալու, տնիգուգ...

Սամսոն ապերը լսեց այդ խոսքերը, մի պահ տեղում մնաց սյունացած և հետո առանց վորեւե պատասխանի հեռացավ այնտեղից՝ ձեռքի զործը կիսատթողնելով:

— Սոնդուղ... Շուն ու գելի բաժին... Ճանապարհին, մինչեւ տուն հասնելը, անվերջ արդ խոսքերն եյին պատվում նրա ուղեղում և տանջում սիրութը:

Կինը տեսնելով ամուսնու մռայլ դեմքը, իսկույն զգաց, վոր նրա հետ զարձյալ մի անախորժություն և պատահել և հարցրեց.

— Ելի ի՞նչ ես թխպել:

Սամսոն ապերը կնոջ հարցը թողեց անպատասխան, բայց քիչ հետո յել մայրը, վոր այն ժամանակ դեռ կենդանի յեր հարցրեց.

— Բա քո դարդը մերը չեմ, մենք չպետք ե իմանա՞ք, թե քեզ ի՞նչ ե պատահել:

Վորդին մորը հանդստացրած լինելու համար պատմեց պատահած անախորժության մասին, վորից հետո բալորն ել վորոշ ժամանակ լոեցին:

— Թող նա յել չղարմանա հետեւ բաց, թմբում փաչա լակուսների վրա, — քիչ հետո ասաց մայրը, սակայն պառավին վոչ վոք չարձադանքեց:

— Եօ՛, ի՞նչներս ե չուն ու գելի մնալու: Մեզնից հետո վոչինչ ել չի մնալու: Յերկու ծառ ե, հրեն նրանք ել իրենք՝ իրենք չորանում են, — ավելացրեց Սուսամբարը:

Կնոջ խոսքերն ավելի վշտացրին Սամսոն ապորը՝ նա ավելի հուղինց և վոչ մի խոսք չդտավ պատասխանելու:

Յեկ իրոք, ի՞նչ ժառանգություն եր մնալու նրանց մեռնելուց հետո: Յերկու կտոր ավաղոտ արտ ունեմ յին՝ գյուղի ամենահեռավոր հողամասերում, մի վոքրիկ պարտեղ, մի հողե խրճիթ և հնուց մնացած կիսաքանդ մի զոմ, վորի մի ծայրում ամառները թառ եր լինում նրանց միակ չնչավոր կենդանին՝ միհատիկ աքլորը, իսկ ձմեռները գոմը մնում եր միհատիկ, վորովհետեւ աղվեսից վա-

խենալով ազլորն ել եյին տուն տեղափոխում, թառ անում սենյակի մի անկյունում պատրաստած հավաքընում: Սրանցից զատ ել ուրիշ վոչինչ չկար: Այն ժամանակ Սամսոն ապերը դիշեր ու ցերեկ աշխատում եր, ուտելու հայն ել չեր կարողանում վաստակել, ուր մնաց, թե վորեւ բան հետաձգեցին:

Այդ որվանից արդեն տասնհինգ տարի յե անցել: Սամսոն ապոր կյանքում տեղի յեն ունեցել բաղմաթիվ փոփոխություններ: Այժմ թերը գցած Արքենու ճյուղից՝ մտածում ե այդ փոփոխությունների մասին: Պարսպապատ բակի բաց դարպասից գալիս ե ամառային զով քամքին, իբրար տալիս վլրենու դալար տերեններն ու իր շունչը թողնելով Սամսոն ապոր ալեհեր դեմքի վրա՝ կրկին անհետանում:

Ներսից լավում ե նորածին մանկան ձայնը.

— Ուա՛, ուա՛, ուա՛...

Հայրը սթափիվում ե:

— Հինգ, հինգն ել մի սորթից... գոնե ես մեկն ել աղջիկ լիներ...

Հետո նա մի պահ մտածում ե այդ մասին: Յերբ առաջին անդամ կինը հղի յեր, Սամսոն ապերն անպայման ցանկանում եր, վոր նա տղա բերի: Կնոջ յերկրորդ, յերրորդ հղիության ժամանակ այդ հարցը չեր գրավում նրա ուշաղրությունը: Զորբորդ և հինգերորդ անդամ յերբ հղի յեր կինը, նրանք արդեն կանգ եյին առնում այդ ինդերի վրա: Սուսամբարն առնում եր.

— Ես մեկը յեթե աղջիկ լինի, շատ լավ կլինի:

— Աղելի լավ կլինի ջուխտակ բերես, ջուխտն ել աղջիկ, — կիսալուրջ, կիսակատակով առնում եր ա-

Տուսինը, բայց սրտով ինքն ել եր ցանկանում, վոր
կինը աղջիկ բերի, — ասում են աղջիկներն ավելի
շատ իրենց հորն են սիրում...

— Ուա՛, ուա՛, ուա՛...

Մանկան ձայնը ներսից դարձյալ սթափեցրեց հո-
րը.

— Վա՛, ես ինչ ճղճղացող տղա դուրս յեկավ: Մե-
ծանա, անպայման յերդիչ ե դառնալու... ասաց
Սամսոն ապերն ու իր խկ կատակից ծիծաղելով
թողեց շլորհնու ճյուղն ու մոռեցավ տանը:

2.

Տրակտորվ հունձ պիտեր,
Այ Սուսամբար, Սուսամբար,
Իմ ջահել վախտս պիտեր,
Ջան Սուսամբար, Սուսամբար...

— Չու՛, ա չու՛, գե չուտ զնա, իմ ջահել վախտս
պիտեր, ջան Սուսամբար, Սուսամբար...

— Հը՛, եդ ինչ ե, սիրահարական յերդեր ել ևս
յերդում, Սամսոն ապեր, — հանկարծ նրա հետեւից
ասաց կոլտնտեսության նախաղահ՝ ընկեր Վաղար-
շակը:

Սամսոն ապերն խկույն ձայնը կտրեց: Առավոտիվա
ծեղին, լույսը դեռ չբացված, նա անկողնուց վեր եր
կացել, կնոյն զգուշացրել, վոր ինքը զնում ե աշխա-
տանքի և հեծնելով եշը՝ գյուղից դուրս եր յեկել: Նա
կոլտնտեսության յերրորդ բրիդադիրն եր: Այդեկութին
արդեն մկանի եր: Խաղողի այդիները դյուղից ահա-
դին հեռավորության վրա եյին դանվում: Լույսը
բացվելուն պես Սամսոն ապերը ճանապարհվեց այն-
ուեղ. վարպեսզի մինչև բրիդադի անդամների հավաք-

վելն ստուգի, թե այդ որը վոր այդիները պետք ե
հավաքեն:

Առավոտիվա զովը բարձրացրել եր Սամսոն ապոբ
տրամադրությունը: Նա սկսել եր բարձր, դուրեկան
ձայնով յերգել: Լուսաբացի անդորրության մեջ տա-
րածվում եր նրա ձայնը, արձագանքում ճանապար-
հեց վերև ընկած բարձրաբերձ ժայռերում և կըր-
կընակի ուժեղացնում: Սամսոն ապերն ինքն ել եր
վոգենորվել իր ձայնից: Նա հետզետե ավելի վո-
գենորությամբ, ավելի յեռանդով եր յերգում, սա-
կայն մերթ ընդ մերթ նրան խանդարում եր եշը:
Սամսոն ապերը հենց վոր բարձրացնում եր ձայնը,
եշն ականջները կախում եր, դանդաղեցնում քայլե-
րը և կարծես թե նա ևս հաճույք եր զգում տիրոջ
յերգից: Բայց Սամսոն ապերը զրկում եր եշն այդ
հաճույքից. նա հենց վոր դանդաղեցնում եր քայլե-
րը, տիրոջ ճիպոտն խկույն իջնում եր նրա ուսին,
եշը սթափիվում եր, արագացնում քայլերը, իսկ Սամ-
սոն ապերը շարունակում եր իր յերգը.

Իմ ջահել վախտս պիտեր,
Այ Սուսամբար, Սուսամբար...

Սամսոն ապերը չեր կարծում, վոր գյուղից հե-
ռու, առավոտը կանուխ, մեկն ու մեկը կարող ե իրեն
լսել: Դրա համար ել նա ավելի վստահ տոնով եր
յերդում: Բայց Վաղարշակի ձայնը նրան հանկար-
ծակի բերեց:

— Սիրահարական յերդ չե, Վաղարշակ, յես այս
յերգը սովորել եմ այն տղաներից, վորոնք գարունքը
յեկել եյին մեղ մոտ թատրոն խաղալու:

— Զե՛, Սամսոն ապեր, չես կարող խաբել: Այն
տղաները Սուսամբարի անուն չելին տալիս: Այդ քո
սեփական յերգն ե:

— Ասենք այդ մեկը ճիշտ ե, յես մի քիչ փոխել
եմ, — քիչ մտածելուց հետո ասաց Սամսոն ապե-
րը, — նրանք Վարդանուշ ելին ասում, յես ել փո-
խել եմ եղ անունը, Սուսամբար եմ ասում...

— Ահա՛, տեսա՞ր, վոր սիրահարական յերգէ,
յս յերգում:

— Ի՞նչ անենք, Վաղարշակ, սիրահարական յեր-
գեր յերգելն ամոթ բան ե՞:

— Նայած թե ում համար:

— Ասենք հենց ինձ համար:

— Քեզ համար... դու մի քիչ ուշացել ես:

— Դու յել մի քիչ սիսալվում ես:

— Միթե՞:

— Հապա...

Վաղարշակն ել հարց չափեց: Նա խկույն հաս-
կացավ, վոր առանց իր լրացուցիչ հարցի յել՝ Սամ-
սոն ապերը պատմելու յե: Մեծերի սովորությունն ե
նման դեպքերում մի պահ լոել, արտաքուստ ցույց
տալ, վոր անտարբեր են, բայց ներքուստ մտածում
են, թե ինչպես արտահայտեն իրենց միտքը:

— Վաղարշակ, մարդու սիրուը մեկ – մեկ հա-
սակին չի նայում; Յես քեզ հիմա մի բան կպատմեմ,
բայց դու այդ մասին ուրիշ տեղ չասես:

— Խոսանում եմ, Սամսոն ապեր, ժողովներից
ու կոնֆերանսներից բացի ուրիշ տեղ չեմ պատմի
ասիր...

— Հա՛, ժողովներում կարելի յե, վորովհետեւ
խոսք մեր տերտերի մասին ե: Դու նրան չես տեսել:
Սնցյալ տարի, հենց վոր դու յեկար մեր գյուղու,
նա նոր եր մեռել: Մեր եղ տերտերը հիսուն տարե-
կան կլիներ, վոր յես պասկվեցի մեր Սուսամբարի
հետ: Նրանց տունը գտնվում եր մեր հին տան դեմ
ու դեմ: Բակում ինչ վոր նրանք անելին, մեր հա-
յաթում պարզ, հայելու պես կերևար: Մեր եղ տեր-
տերն ամեն առավոտ, հենց վոր պատրաստվում եր
ժամ զնալու, Փարաջեն գցում եր ուսը, գավազանը
ձեռքն առնում, մոտենում տիրուհուն, հետը մի
լավ համբուրվում, ապա նոր միայն մոտից հեռա-
նում:

— Յերկի վախենում եր, վոր ժամը կիրկի, տա-
կը կմնա և տիրուհուն ել չի տեսնի:

— Եդ չեմ իմանում, բայց հետաքրքիրն այն ե,
վոր ժամից վերապահնալուց հետո յել, մինչեւ տի-
րուհու հետ չհամբուրվեր, Փարաջան հագից չեր
հանի: Եղ բանը մեր գյուղացիներից շատերը դիտեն: Մեզ մտ միշտ ել ասում ելին, թե աշխարհում նը-
րանց պես սիրով մարդ ու կին չի ճարպի: Մեկ-մեկ
մեր Սուսամբարն ել եր ասում.

— Տեսնում են՞, Սամսոն, նրանք յերեսուն տար-
վա մարդ ու կին են, մենք նոր ենք պսակվել, բայց
նրանց կիսի չափ ել սիրով չենք...

Դե յես ել ի՞նչ պատասխանելի: տեսնում ելի,
վոր մարդու աղջիկը ճիշտ ե ասում: Յես, որինակ,
վոչ մի անգամ եղ տերտերի պես չելի վարփում.
Հավաս չկար: Պատահում եր, վոր սիի շարաթնե-
րով խեղճ կնկանը չելի խոսեցնում: Հազիկ չքափո-

բությանս հետեւից եյի ընկել . ամբողջ որեր չարչարվելուց հետո ել ո՞ւմ մտքովն եր եղավես բան անցնում : Հա , խոսքու խառնեցի , եղ տերտերի մասին եյի պատմում : Մեր իշխանությունը հենց վոր յեկավ , տերտերի յեկամուտն ել ամիր պակսեց : Եղ եր ու եղ . նրա յեկամուտի հետ ասես թե նրա սերն ել չքացավ : Նրանից հետո յես ել վոչ մի անդամ չտեսա , վոր վողորմած հոգի տերտերը տիրուհու հետ ելի ենակես սիրով վարվի : Գլուխտ ինչ ցավացնեմ , տերտերը մեռավ իր տիրուհուց խոռվ : Վերջին տարիներու իրար հետ միշտ կռիվ , զալմաղալ եյին անում :

Նրա մահվանից հետո տիրուհին ասում եր .

— Հոգիս ազատվեց . մի տարի յել վոր ապրեր , միւնույն ե , մի դիշեր յես եյի բարձր դնելու բերնին ու խեղդեյի :

— Հիմա , խոսքը մեր մեջ , վաղարշակ ջան , — շարունակեց Սամսոն ապերը , — դու յել իմ վորդին ես , մեղքս քեզնից ինչ թագցնեմ , առավոտները գործից գալիս կամ վերադառնալիս , յերբ մեկ – մեկ յես եմ մոտենում մեր պառավին , նա ասում ե .

— Այ հալիվոր , դու յել տերտերից բան ես սովորել :

— Զե՞ , ասում եմ , տերտերի յել հերն անիծած , տիրուհու յել , ես հենց իմ խասյաթն ե , ջահել ժամանակ դլուխս խառն ե յեղել , հիմա յեմ . . .

Սամսոն ապերը մի պահ լոեց : Եշ թողնվել եր կամքին և նա դանդաղեցրել եր քայլերը :

— Փյա , ես ինչո՞ւ յե վոտները կախ դցել , — եշի վզին խիելով ասաց նա , — տո չու յե , բա դու

ի՞նչու յես եղավես հետաքրքրությամբ լսում մեր տերտերի պատմությունը , այ հեյվան . . .

Վաղարշակը լուռ եր : Յերբ խոսում եր Սամսոն ապերը , նա լսում եր ուշադրությամբ և վոչ մի հարցով չեր ընդհատում : Բայց յերբ արդեն Սամսոն ապերը վերջացրել եր իր պատմությունը , նա ասաց .

— Այդպես ելի , Սամսոն ապեր , ասում ես սերը մարդու հասակի հետ կապ չունի : Ուզում ես ասել , վոր ամեն ինչ մարդու ապրուստից ե կախված . չե՞ : Տերտերը հենց վոր լավ եր ապրում , կնոջը հետ սիրով եր . հիմա յել դու յես լավ ապրում , դու յես ոլառավիդ հետ լավ : Զե՞ :

— Պարզ չե՞ :

— Պարզ ե , բայց ճիշտ չե : Յես քեզ հետ համաձայն չեմ :

Սամսոն ապերը նման պատասխան չեր սպասում : Նա զարմացած՝ վաղարշակին նայեց : Ի՞նչպես թե իր հետ համաձայն չե : Ինքը յերկար ժամանակ , անդամ տարիներ , մտածել ե այդ մասին , հաստատ համոզվել և հանկարծ վաղարշակին ասում ե , վոր ինքն այդ կարծիքի հետ համաձայն չե : Զե վոր ինքը , Սամսոն ապերը , այդ բոլորն իր կաշվի վրա յե փորձել , համոզվել : Նա յերբ չքավոր եր , աղքատ , բարեկամի մոտ ել չեր գնում , ընկերոջ մոտ ել ու գեղի ընտանիքն ել առանձին մեծ սեր չեր զգում : Առավոտից մինչեւ յերեկո , ամբողջ որն աշխատում եր և յերեկոները հոգնած տուն գալիս հուսահատ , հոգնած , վոչ մի բարեկամի , վոչ մի ընկերոջ մասին ել չեր մտածում : Իսկ հիմա , հենց վոր ունելվոր ե գար-

ձել, հենց վոր ամեն ինչ ճարվում ե իր տանը և ինքն
ել առաջվա նման դիշել - յերեկ չի աշխատում, բն-
կեր ել ե ընդունում իր տանը, բարեկամներ ել, ու
դեպի ընտանիքն առաջվա նման ել անտարբեր չի:
Մեկ որ յերեխաներին կամ կնոջը յեթե չտեսնի, այդ
ամբողջ որը հանգստություն չի ունենա: Ինքը յեր-
կար մտածել ե յեկել ե այն յեղակացության, վո՞
այդ բոլորի պատճառը մարդու ապրուստն ե: Այդ-
պես ե համոզվել Սամսոն ապերը և նրան թվում ե,
թե այլ կարծիք լինել չի կարող: Իսկ հիմա Վաղար-
շակն ասում ե, վոր ինքը համաձայն չե այդ կարծի-
քի հետ, վոր Սամսոն ապերը սիարվում ե:

— Ի՞նչու, Վաղարշակ, ի՞նչու չես համաձայն, —
շատ հանդիսատ տոնով հարցրեց Սամսոն ապերը, հա-
վատացած լինելով, վոր միենույն ե, Վաղարշակը
չի կարողանալու իրենց համաձայն:

— Դու, Սամսոն ապեր, պատմեցիր ձեր տեր-
տերի մասին, շատ լավ, յես ել կպատմեմ հենց իմ
ծնողների մասին: Մենք ել համարյա թե քեզ պես
աղքատ ենք յեղել: Շատ ե պատահել, վոր որվա ու-
տելու հաց չենք ունեցել: Մեր ընտանիքը շատ բաղ-
մամարդ եր ե հայրս ցամաք հայը հաղիվ եր հաս-
ցընում: Բայց, հավատացնում եմ քեզ, յես վոչ մի
անդամ չեմ տեսել, վոր իմ ծնողներն իրար հետ
կովեն, դժոհեն իրարից: Նրանք միշտ ել հաշտ եյին
ապրում, խաղաղ: Հայրս շատ կատակացեր ե հյու-
րասեր մարդ եր: Շատ քիչ որ կպատահեր, վոր մեր
տանն ոտար մարդ, կամ հյուր չլիներ:

Սամսոն ապերը չեր ընդհատում Վաղարշակին:
Նա լուս լուս եր նրան, բայց չեր դտնում, վոր

Վաղարշակն այդ փաստով ե ուզում առարկել իրեն:
Վաղարշակի ծնողների պատմությունը դեռևս չեր
համոզում Սամսոն ապորը, վոր նա սխալ կարծիքի
յե: Այդ նկատեց նաև Վաղարշակը և շարունակեց:

— Իմ ծնողների պատմությունը յեղակի դեպք
չի: Նրանց նման քա՞նի - քա՞նի ընտանիքներ կան:
Բացի այդ, յես վորքան մարդիկ դիտեմ, վորոնք
հրաժարվել են լավ ապրուստից ել, բարեկամից ել,
բայց չեն հրաժարվել իրենց համոզմունքներից:

Վաղարշակի վերջին ասածն արդեն ջոկ բան եր:
Դա խկույն ըրջեց Սամսոն ապոր մտածմունքների
ընթացքը: Նա խորասուզվեց մտքերի ծովը: Յեկ
այնուհետև վորքան ավելի յերկար եր մտածում այդ
մասին, այնքան ավելի խորապես եր համոզվում նրա
ասածների մեջ:

Վաղարշակի պատմածը, իսկապես, շատ հասկա-
նալի մի բան եր, բայց այդ վո՞նց ե, վոր Սամսոն
ապերն այդ մասին չի մտածել, մի՞թե ինքը նման
իմաստեր քիչ դիտե:

— Դու յել ես ճիշտ ասում, Սամսոն ապեր,
մարդու ապրուստից ել ե շատ բան կախված, — շա-
րունակեց Վաղարշակը, — բայց դա դեռ բոլորը չե:
Դու, որինակ, միայն ապրուստի մասին ես ասում,
իսկ յեթե քեզ հարցնեն, թե ինչպես ե ում միջոցով
ձեռք բերիր այդ ապրուստը, ունեվոր կյանքը, դու
արգեն ուրիշ տեսակ կմտածես: Ի՞նչու չեյիր մինչեւ
հիմա յել ունեվոր դառնում: չե՞ վոր այն ժամանակ
աշխատում եյիր գիշեր ու ցերեկ, հանգստություն
ասածը չեյիր իմանում թե ինչ բան ե, և ինչպես յե-
զավ, վոր այն ժամանակ դու ուտելու հաց չեյիր

ձարում, իսկ այժմ այդ մասին ոկի չես ել մտածում:

Վաղարշակի այս խոսքերն ավելի շփոթեցրին Սամսոն ապորը: Նա մի պահ նույնիսկ կանդ առաջ ճանապարհի մեջտեղում և ուղիղ Վաղարշակին նայեց:

— Մի զարմանա, Սամսոն ապեր, դեռ շատ բաներ կան, վոր քո ասածի պես չեն:

— Բոլ լավ, Վաղարշակ...

— Զե՞ւ, Սամսոն ապեր, — իսկույն ընդհատեց Վաղարշակը, — արդեն հասանք, հիմա յես քեզնից բաժանվելու յեմ: Յեթե կուղես՝ մնացածն ել հետո:

Արեւ նոր գուրս եր յեկել և բացվել լայն, կանաչապարդ այդիների վրա: Արեւի վաղորդյան շողերի տակ կարծես թե այդիների կանաչ տերեներից բարձրացել եր զղարշանման գոլորշու մի բարակ շերտ ու բոնել արեւի սուր չողերի առաջը:

Վաղարշակից անջատվելուց հետո Սամսոն ապերը դեռ մտածում եր նրա ասածների մասին:

— Այդպես ելի, Սամսոն ապեր, ասում ես սերը մարդու հասակի հետ վոչ մի կապ չունի, — ճանապարհի վերեկից, նրանից մի քանի քայլ հեռանալուց հետո, ասաց Վաղարշակն ու ծիծաղելով հեռացավ:

3.

Լավ է գյուղն ամառը՝ լուսնկա գիշերով...

Բլուրների ուսերից հանդարտ բարձրանում և լուսնի սկավառակը, եր կիտորնապույն սավանք փուռմ լայն դաշտերի, բաց տարածությունների վրա, հետզհետե ավելի ու ավելի ծավալվելով՝ ընդգրկում

է ամենուր, փունջ՝ փունջ կախվում յերկնասուլաց բարդենիների սրածե՝ նեղ տերեներից, թափանցում ամեն մի թփի տակ, վողողում ամեն մի մթություն: Այդպիսի ժամանակ բգեզներն անդամ դուրս են դալիս թփերի արանքից, զրունում լուսնի առաջ քուլաների տակ և ազատորեն տալիս իրենց գիշերային համերգը:

Վոչ միայն թփուտներն ու ստվերապատ ձորերը, լուսնի քուլաները կարծես թե Սամսոն ապոր սիրան ել եյին թափանցել, լուսավորել ներսում, ներչնչել ինչ վոր անգորը, պարզ տրամադրություն: Կողմանտեսության վարչության նիստից գալուց հետո, տեսնելով, վոր իրենց տանը բոլորն ել արդեն քնել են, ինքըն ել վերցրեց մի աթոռ, մոտեցավ անկողնուն, վոր հանվելիս չորերը զնի նրա վրա, բայց չորերը դեռ չհանեց: Քունը չեր տանում: Վոտքի կանգնեց և բակից դուրս յեկալ:

Նրանց տան առջևով անցնում եր գյուղի գլխավոր ու լայն փողոցը, իսկ փողոցից քիչ ցած՝ աղբյուրն եր: Դիշերիվա լուսվթյան մեջ աղբյուրի հորդաններից թափվող ջրի շրիկոցից զատ ել ուրիշ ձայն չեր լսվում:

Աղբյուրի յերկու խոշոր քարե հորդանների առանքից բարձրացել եր տերեախիտ ու հաստաբուն բագամի հսկա ծառը և նրա տերեներն ու ձյուղերն ահաղին տեղ ստվեր եյին ձգել լուսնի չողերով վողողված ճանապարհի վրա:

Սամսոն ապերը լուս կանգնել եր ստվերի տակ և մտածում եր: Այդ պահին հեռալից, խոսելով գալիս եյին Վաղարշակն ու կիպարիուր — կողմանտե-

սության բրիգադի բից մեկը, վորոնք կոլտնտեսության վարչության ժողովից հետո խոսքի բանվելով՝ դրսում մի քիչ ուշացել ելին:

— Ես ի՞նչ ե, հա նոր ե՞ք տուն դնում, — նըրանց ձայնը լսելուն պես հարցրեց Սամսոն ապերը:

Նըրանք մոտեցան գեղի բաղամենու սովերածածկ տեղը, հասան Սամսոն ապորն ու Վաղարշակը հարցրեց.

— Իսկ դու ի՞նչու չես դնում քնելու:

— Յերեխ ջահելությունն ե մտարերում, — իսկույն ասաց Լիպարիտը:

Սամսոն ապերը չպատասխանեց Լիպարիտին: Նա մի պահ լոեց և հետո, հանկարծ, ասաց.

— Վատ որերը մարդ շատ քիչ ե մտարերում, Լիպարիտ:

— Ասում են ջահելությունը մտարերելը միշտ ել լավ և լինում:

— Նայած թե ում համար:

— Բոլոր նրանց համար, ովքեր նման լուսնյակ դիշերներով պատերի տակ բազմաթիվ անքուն ժամեր են անցկացրել:

Սամսոն ապերը ծիծաղեց Վաղարշակի այդ խոսքերից, սակայն նրա ծիծաղը շատ բոնադրոսիկ եր և շինծու, վոր անկարելի յեր չնկատել:

— Եսպիսի լուսնյակ դիշերներով, Վաղարշակ չան, Սամսոն ապերը վոչ թե անքուն ժամեր, այլ անքուն տարիներ ել և անցկացրել, — ինքն իր մասին ասաց Սամսոն ապերը, — չորսն ժամանակս, որաներում, յերբ սար ելինք բարձրանում, դելերի վախից վոչ թե ժամեր, այլ ամբողջ ամիսներ դիշեր-

ները չելի քնում: Յերեկները, կեսորվա մոտ, մի քիչ ծտի քուն ելի տալիս և դրանով ել ամեն ինչ վերջանում եր: Խոլ դիշերներն անկարելի յեր քնել, վորովհետև գելը կարող եր դալ քնած ժամանակ և իմ բողադից ծակել, արյունս ծծել, և վոչխարների:

Լուսինն արդեն թեքվում եր բլուրի մյուս կողմը, բայց նրանք դեռ չելին ուզում անջատվել իրարից: Վաղարշակը ամելի յեր հետաքրքրովում Սամսոն ապոր անցյալով, սակայն Լիպարիտը շտապեցնում եր նրան: Գիշերն անցնում եր, հարկադրոր եր քնել մի քիչ, հանգստանալ, վորպեսդի վաղ առավոտյան գործի դուրս դալ:

— Գնա, Վաղարշակ ջան, գնա. բաղաքաղը վերջացնելուց հետո կնոտենք և յերկար կիսումնք, — ասաց Սամսոն ապերն ու Վաղարշակը նրա ձեռքը սեղմելով՝ Լիպարիտի հետ հեռացավ:

Սամսոն ապերը մի պահ նայեց նրանց հետևից, հոգոց հանեց և սրտի խորքից ասաց.

— Ինչքա՞ն լավացել են մարդիկ. մինչև հիմա իմ կյանքով ո՞վ ե հետաքրքրովել...

Հետո նա լուր, յերկար ժամանակ նայում եր, թե ինչպես են Վաղարշակն ու Լիպարիտը ուրախ ու բարձրածայր զրուցելով գնում տուն, լուսնի սավանի մեջ մեկնելով իրենց ստվերների մե, յերկար սյունը...

Վաղարշակի և Լիպարիտի գնալուց հետո Սամսոն ապերը գեռ ապասում եր իր տեղում: Քունը չեր տանում, բայց քիչ անց ինքն ել գնաց տուն: Յերբ դարպասից ներս եր մտնում, թթենու վրա թառ յեղած

աքլորը թառիւհարեց թեկերը և կանչեց առաջին անգամ: Ուրեմն կես դէշերից անց եր:

Սուսամբարն արդեն քնել եր: Նրա անկողնու կողքից դրած եր նորածնի որորոցը: Հայրն որորոցի վրայից քաշեց բարակ թանձիֆե ծածկոցը, նայեց մանկան: Մանուկը ևս քնել եր և ըստ յերեւյլին յերազում ծծում եր մոր ստինքները — չմշմփացնում եր շրթունքները և իրար տալիս փակլիկ ծնոտը:

Հայրը մեղմիկ կամթեց փոքրիկի այտից, ժպտամից հայացքով մի պահ նայեց նրան և ապա մոտենաւով իր անկողնուն՝ ինքն ել պառկեց:

4.

Փարթամ, արեածաղկի նման դեղին լիալուսինն իր շրջապատի բոլոր աստղերն ել վանել եր հեռու և ինքը բռնել նրանց տեղը: Այդ պահին Սամսոն ապերը գրկի մանկանը բարձրացը եր, դրել շլորենու ճյուղի վրա: Խուսնի թեթև - թեթև քուլաներն ոծելով մանկան բաց, լուսնանման մարմնի մասերը՝ ալելի եյին փայլիկցնում, արծաթազուռն նրանց:

— Սամսոն, յերեխային լուսնով կցցես, — կաթովի կճուճը ներս տանելով ասաց Սուսամբարը ու տպանց պատասխան տանալու՝ մտավ տուն:

— Զե մի, կայծակ կիսիի, — նրա հետելից պատասխանեց ամուսինը, — հրես լուսնի դլուխն և յերեխայով խառնվել և նա ճանապարհը կորցրած՝ յերեխայի ընկեր և դառել ու խաղում և հետը:

Սամսոն ապոր վերջին խոսքերը կինը չլսեց: Յերեխան թնթնաց, ուզեց լաց լինել: Հայրը որորեց ձեռքերի վրա և տեսնելով, վոր նա չի հանդստանա-

լու, բարձրացավ պատշտամբ և այնտեղ սկսեց մանածել: Յերեխան հանդստացավ: Նա սկսեց մշմշալով հանդիսաւ չնչել և քիչ հետո քնեց:

Հայրը յերեխայի յերեսը ծածկեց բարակ թանձիփով և պատշտամբից իջնելով գնաց տուն՝ կնօջնողնելու:

Սուսամբարը յերեկոյան կթած կաթը մակարդել, մի կողմ եր դրել և հաց եր պատրաստում, վոր ամուսինը վաղը գործի գնալիս իր հետ տանի:

— Հալա չես վերջացրե՞լ, — տուն մտնելուն պես հարցրեց ամուսինը:

— Զե՛, սպասել եմ, վոր դու գտա:

— Պարզ չի՞: առանց ինձ մի բան չես կարող կատարել:

— Դե լավ, մեծ-մեծ մի խոսա: Ավելի լավ կանես, վոր կողքիս սյունի պես չկանգնեսու ու խանդարես: Գնա յերեխաների մոտ:

— Վայ քո տղիս-տղա, — կնոջ նման պատասխանից զարմացած ասաց Սամսոն ապերը և իրոք մը նաց սյունի նման կանգնած, — աղջի, եղ ել իմ լավության փոխարեն, Ե՞ս եղանակ խոսում:

— Քո լավությունդ ինձ հարկավոր չի: Յեթե մոտս կանգնես, գիտեմ խասիյաթդ, հազար ու մի հարց ես տալու, խոսքով անես, գործից ուշացնես:

— Դե լավ, ես տանն ինձ ել չես տեսնի, — կեղծ լրջությամբ առաց ամուսինն ու տնից դուրս գնաց:

Յերեխան ինչպես պառկել, այնպես ել քնել եր: Նրանից քիչ հեռու, իրար կողքի, հետո հատակի վրա գցած անկողնում, պառկել եյին մյուս յերեխաները:

Հայրը մի պահ լուս նայեց յերեխաներին, հետո
նստեց իր անկողնու մի ծայրում, տրեխները հանեց,
միջի հողը թափ տվեց, դրեց մի կողմ, բայց առանց
շորերը հանելու, պառկեց անկողնու վրա:

Դյուզի վոքքիկ ու բարակ գետակի մյուս ափից,
սաղանար վոսկանի տան առջեկ պարտեղից, մյուս
թյան շերտերն իրար տալով, գալիս եր արնդի դուրե-
կան, թովիչ ձայնը: Այդ, ըստյերևույթին, ուստա
վոսկանի վոքք տղան—Խեցն եր նվազում, վորով-
հետեւ սրնդի ամեն մի մատնատեղից դուրս յեկող հա-
մաչափ, ներդաշնակ ու մեղմիկ ձայնը տեղ եր հաս-
նում, թափանցում լողի սիրտը, ազդում նրա բո-
լոր զգացմունքների վրա: Իսկ սրնդամհար Խեցն
հայտնի յեր ամբողջ շրջանում: Նրա համբավը շատ-
շատերին եր հասել: Նա այստեղ հայտնի յեր վոր-
պես անդերազանց, նմանը չունեցող սրնդամար:

Խեչոյի սրնդի ձայնը գիշերային լուսության մեջ
տարածվել եր ամենուր, վանել ամեն մի կողմնակի
ձայն: Մեղմիկ զեփյուռից իրար յեկող տերելիների
սոսափյունը թվում եր, թե գոհունակություն, սրտի
խորքից բղխող հառաջանք ե, դմայլանքի արտահայ-
տություն:

Սամսոն ապոր տնից ներքեւ, բաղամի ծառի մոտ
կարկաչող աղբյուրի ձայնն ել չեր լավում: Նրա
հորդանների տակ դրած քարե ջրավազմները լցվել
ելին և խացել եր ջրի շրիկոցը:

Սամսոն ապերը կլանվել եր յերաժշտությամբ:
Նա լարել եր իր ուշաղրությունը և ամբողջովին յեն-
թարկվել Խեչոյի սրնդից յեկող կախարդիչ ձայնին:
Այդպիսի ժամանակ մարդ չի կարողանում կենարո-

նանալ մի բանի վրա: Բազմապիսի խորը, բարդ ապ-
րումները պատում են մարդու, պտտվում նրա ուղե-
ղում և անընդհատ վորիխավելով՝ տեղի տալիս մեկը
մյուսին:

Սամսոն ապերը ևս ընկել եր մտքերի ալիքների
գիրկը և անվարժ լողորդի նման այդ ալիքների ամեն
մի հարվածից ընկնում եր մի կողմից—մյուսի վրա,
չեր կարողանում կանդ առնել մտքի ալիքներից և
վոչ մեկի վրա:

Մի քիչ հետո յեկավ Սուսամբարը, տեսնելով ա-
մուսնուն չորերով պառկած և կարծելով, թե նա քր-
նած է, կանչեց, վոր վեր կենա, չորերը հանի ու նո-
րից քնի: Բայց Սամսոն ապերը քնած չեր: Նա միայն
շրջեց մի կողմի վրա և լուս, կնոջը նայեց:

Կինը հողնած եր. նա չորերը հանեց, մտավ ան-
կողին և խսկույն քնեց:

Խեչոյի սրնդի ձայնն այլեվս չեր լավում:

Սամսոն ապերն ել չորերը հանեց, պառկեց, աչ-
քերը վակեց, իսկ իր քունը չեր տանում: Մի քիչ
լուս սպասելուց հետո նա զգուշությամբ թեքվեց դե-
պի կինն ու կամաց սասաց.

— Սուսամբար:

Կինը ձայն չհանեց:

— Այ Սուսամբար, — մի քիչ ավելի բարձր ձայնով
կրկին կանչեց նա և այդ ժամանակ կինը տեղում
հանկարծ վեր ցատկելով՝ ըրջվեց դեպի ամուսինը:

— Մի վախեցիր, յես եմ, — հանդատացրեց Սամ-
սոն ապերը, — ասում եմ աշխարհիս վրա քեզ ամենից
շատ ինչ է դուր գալիս...

— Ե՞ւ, քո տունը չչինվի. յես ել ասեմ կարգին բան ես հարցնում: Այ մարդ, ել ի՞նչ ժամանակ ես դաել եղած հարց տալու:

— Զե՛, դու չես խմանում. դա շատ հետաքրքիր հարց ե:

— Թո՛ղ, ջանըմ, եստեղ ինձ քնահարամ ե անում, թե հետաքրքիր հարց ե, — դժողոհեց Սուսամբարն ու յերեսը շրջեց ամուսնուց:

Սամսոն ապերն ուզում եր կնոջ հետ խոսել յերաժշտության մասին, վորը քիչ առաջ նրան այնքան հուզել եր, բայց կնոջ խիստ պատասխանից ստիպված ըսեց և մի քանի անգամ այս ու այն կողմ շրջելուց հետո իրա կոպերն ել ծանրացան ու աստիճանաբար նստեցին իրար վրա: Նա քնեց, բայց այդ ժամանակ ել չհանդստացավ. արթուր ժամանակվա մտորումները պատեցին նրան յերազի մեջ...

...Ահա իր կրտսեր տղան, Սուրբիկը, մեծացել, հասունացած տղա յե դարձել: Նա սրնդահար ելավագույն սրնդահար: Աշխարհում նրա նման սքանչելի սրնդահար չկա: Զկա մեկը, վոր լսած ըլինի Սուրբիկի սրնդի մասին, չկա մեկը, վոր հեռու-հեռավոր տեղերից չկա լսելու, թե ինչպես ե նվազում Սուրբիկը:

Վորտեղ ուրախություն ե լինում՝ Սուրբիկն այստեղ ե: Ամեն մի քեփում Սուրբիկն ե նվազում, բոլորին դմայլեցնում իր նվազածությամբ:

Սուրբիկն նախանձում ե ինքը՝ ուստա վոսկանի տղան, հայտնի սրնդահար Խեցոն: Նա հեռվից-հեռու, թախծալից հայացքով նայում ե Սուրբիկին և ինքն ել ե կլանվում նրա անուշ նվազով:

Յեկ Սուրբիկի նվազածության լուրն անցնում է րերնից-բերան, հասնում յերկրից-յերկիր: Ամեն տեղից մարդիկ են զալիս, թախսանձում, վոր Սուրբիկը նրանց համար գելթ մի բան նվազի: Այդ որը նույնպես Սամսոն ապոր բակում մեծ յերեկոյլթ ե: Մեծ, փոքր, կին յերեխա, բոլորն ել հավաքվել են, նստել Սամսոն ապոր պարտիզի կանաչ ծառերի տակ, կարսվել ճյուղերից, սեղմվել իրար: Ասեղ զցելու տեղ չկա: Ծրջանի կենտրոնից յեկել ե ընկեր Լեվոնը՝ շըրջանային գործկոմի նախագահը: Նվազածությունը դեռ չի սկսել: Ընկեր Լեվոնը գյուղխորհրդի նախադաշտ ընկեր Վաղարշակի հետ ժամանից հայացքով, ձեռների աշխույժ շարժումով հավաքվածներին պատմում են Սամսոն ապոր մասին:

— Սա առաջ մի չքավոր բատրակ եր: Իր տանը մի աքլորից բացի ել վոչ մի կենդանի չի յեղել: Իսկ այժմ, արդեն ունելոր ե դարձել: Այ տարի իր համար յերկու հարկանի մի գեղեցիկ տուն ե շինել: Կով ունի, բաղ ու բաղչա ունի, առաստ հաց ունի, ինքն ել հարվածային կոլտնտեսական ե, բրիգադիր: Սա առաջ յերեխաներ ել չուներ. հիմի հիմու տղա ունի: Մեծ տղան—Բագրատը, մեր հարեան գյուղի — Փարագուղի կոլտնտեսության նախագահն ե. մենք հնք ուղարկել այստեղ կոլտնտեսությունը ղեկավարելու համար: Մեծից փոքրը՝ Վահանը—կարմիր հրամանատար ե: Նա այժմ Մոսկվայում ե սովորում: Շատ են դովում: Նրա մասին միշտ զրում են թերթերում: Ասում են կրծքին յերկու շքանշան ունի: Հորը նամակ ե դրել, թե պետք ե շուտով մի ամսով արձակուրդ դա մեր գյուղը: Այ ժամանակ յերեկի մենք ել կը

տեսնենք, կուրախանանքը։ Մյուս յերկու տղաները՝ Ռուբենն ու Ռաֆիկը ակտիվ կոլանտեսականներ են։ Նրանք այժմ քննել են խաղողի այգիներում, վորպես զի լույսը բացվելուն պես վեր կենան, խաղող քաղեն, վորովհետև այդիները գյուղից բարձականին հեռու յեն և առավտաները մինչեւ գյուղից այսուեղ հասնելը՝ ահագին ժամանակ ե կորչում։ Խակ մենք աշխատող ուժերի կարիք ենք զգում։ այս տարի բերքն այնքան չատ է, վոր չենք հասցնում հավաքել…

Կոլանտեսության նախադահի այս բացառությունները բոլորն ել լսում ենին մեծ ուշադրությամբ։ Մարդկանց լարված ուշադրությունը տեսնելով կուտնանության նախադահը ուղում ե շարունակել իր բացառությունները։

— Փոքր տղան ել… բայց լեկոնի խոսքերը կիսատ են մնում։ Սամսոն ապօք փոքր տղան՝ Սուրբիկը, ահա արդեն ակսել են նվագել։ Բոլորի ուշադրությունն այսուեղ ե կենարոնացել։

Սուրբիկը կանգնել ե պարտեղի կենարոնում, մեջ քը հենել շարենուն, մի քիչ կոացել դեպի ձախ և նորա մատները դողղողում են գլուցող սրնդի վրա։ Մրտի ձայնի ամեն մի յելենջի հետ բոլորի սրտից ել դուրս ե գալիս խոր ապրումների հառաջանքն ու ցըրվում ողում։

Մարդիկ հիացմունքով որորում են իրենց գլուխն ու ասում։

— Կեցցես, Սամսոն ապեր, լավ, ակտիվ տղաներ ունես։ Բոլորն ել ողտակար են, բոլորն ել խելոք,

ընդունակ։ Դրա համար քեզ մեծ չնորհակալություն…

Սամսոն ապերն անշափի յերջանիկ և զդում իրեն։ Հավաքվածների այլ խոսքերը վուղեորում են նրան։ նա չի կարողանում հրճվանքն ու ուրախությունը զսպել։ Նա վողեորված վոտքի յե կանգնում, ուղում ե ինքն ել խոսել, բայց…

— Սամսոն, Սամսոն, —կանչում ե կինը, —Ժամանակն ե, վեր կաց…

Սամսոն ապերը կնոջ ձայնից անմիջապես արթնացալ։ Նա տրորեց աչքերը, բաց արավ, բայց յերկար ժամանակ չեր ուղում մտքից հանել անուշ յերապել։

Պատշպամբի տակ, ծառի ճյուղերի վրա թառ յեղած աքորը թեփելը թափահարելով՝ կանչեց յերրորդ կանչը։ Աքորի կանչից արթնացավ որորոցի յերեխան ու ակսեց լաց լինել։

— Կանչեցեք, կանչեցեք ձեզ մատաղ, —զեպի աքորն ու յերեխան նայելով անաց Սամսոն ապերը, —յերկուսներիդ ձայնն ել իմ սրտից ե դուրս դալիս ջահել և ուրախ…

Լույսն արդեն բացվել եր։ Վաղորդյան շաղից ավելի ելին բացվել պարտիզի ծաղիկներն ու փայլվում ելին ծառերի կանաչ սաղարթները։ Այդ ժամանակ Սամսոն ապերը մեկիկ-մեկիկ մոտեցավ բոլոր յերեխաների անկողիններին, ամեն մեկի հասցեյին քնքանքով մի խոսք ասաց, վերջում մոտենալով որորոցի մեջ պառկածին՝ այտից կամացում կոմթեց և պատշպամբից ցած իջավ։

Եշը գոմումն եր . Սամսոն ապերը դնաց գոմ , փա-
լանեց և բակից դուրս գալիս վերևից լսվեց մանկան
լացի ձախը :

— Արթնացա՛վ , հիմա կսկսի տարածել սրնդի
ձայնը , — մտքում ասաց Սամսոն ապերը և ուրախ
սրտով՝ բակից դուրս յեկառ :

Ի Ղ Զ

1.

Յերեկոյան դեմ Փարագուզից վերադառնալիք
Կոստան քեռին նստեց գյուղից քիչ բարձր դանվող
գերեզմանատան քարերից մեկի վրա՝ կոշիկների մեջ
լցված հողն ու ավաղը թափ տալու : Յերբ նա կո-
ցավ կոշիկի մեկը հանելու , ծոցագրավանից ոչլորվե-
ցին ակնոցներն ու ընկան վոտների մոտ : Ակնոցները
բարձրացնելիս նրա աչքն ընկավ դիմացի շիրմաքա-
րերից մեկին , վորը կոստան քեռուն ծանոթ եր :
Ասում եյին , վոր գրա տակ ե թաղված Դաշտակեր-
տի հիմնաղիք՝ Փահլեվանի դին : Թե վոր թվին ե
յեղել գյուղի հիմնագրումը , այդ նրանք չգիտեյին :
Բայց Հայոնի յեր , վոր Փահլեվանն իր ժամանակին
յեղել ե նշանավոր մարդ : Արհեստով լինելով վորմ-
նադիք , նա դրանով շատ քիչ ե զբաղվել : Իր աս-
րուստի միջոցները Փահլեվանը հայթայթել ե իր
հաղթ բազուկներով , ահռելի ուժով :

Նա ժողովրդական հանդեսներին , տոներին , հան-
դես ե յեկել իր ուժի ցուցագրումով , կոխ ե բռնել
Հայոնի ըմբիշտների հետ և շարունակ հաղթողն ին-
քըն ե յեղել : Այդտեղից ել մնացել ե նրա անունը :

Փահլեվան : Իսկ նրա խսկական անունը վոչ վոքի
Հայտնի չէ :

Նա յեղել ե մի շաբք յերկրներում, չրջել ե ա-
վանից - ավան, քաղաքից - քաղաք և տարածվել ե
նրա Համբավը : Ասում են, վոր նա ոտար յերկրներ
և գնացել և հանդես ե յեկել այնտեղի կրկեսներում :
Յերեք տարուց հետ Հայրենի յերկիր ե վերապար-
ձել՝ իր հետ բերելով անհաղթ կոխ բոնողի Համ-
բավն ու մի գեղեցիկ կին : Ասում են, թե Սուլեյմա-
նանը, յերբ մի անդամ պատահաբար տեսել է Փահ-
լեվանի կողջը՝ չքնաղագեղ Վալերիային, մի ամբողջ
շաբաթ չրջել ե կիսափելադար վիճակում, կորցրել և
քունը, հանգստությունը և նրան իր Հարեմը տանե-
լու Համար կանգ չի առել վոչ մի միջոցի առաջ : Նա
վորքի յե հանել բաղմաթիվ միջնորդների, իսկ ա-
ռաջին հերթին՝ Հոգեվորականությանը : Փահլեվա-
նին սկսել են Հալածել : Նրան թույլ չեն տվել Հան-
դես կալ վոչ մի հրապարակում : Նրան մեղադրել են
այլակրնության մեջ — ոտարազգի աղջկա հետ ա-
մուսնահալու Համար : Յեկ այս բոլորից հետո Վա-
լերիան Սուլեյմի խանի հարեմն և տարիել բռնի կեր-
պով :

Փահլեվանն ըմբռուացել ե Սուլեյմի խանի դեմ,
նա իր մի քանի ընկերներով Հարձակվել ե խանի
մենաբանի վրա, ուղեցել ե նրա Հարեմից աղատել
իր Վալերիային, սակայն խանի բաղմաթիվ մարդ-
կանց դեմ նա անդոր ե յեղել : Խանի մարդիկ բռնել
են Փահլեվանի ընկերներից մի քանիսին, բայց իրեն,

Փահլեվանին, Հաջողվել ե մի քանի այլ ընկեր-
ների հետ աղատվել և փախչել հեռու սորերը : Այ-

նուհետի այդ մարդու խսկական անվանն ավելացել
է մի այլ անուն ևս — Ղաչաղ Փահլեվան :

Ղաչաղ Փահլեվանն սկսել է հսկական կել Սուլեյմի
խանին, իսկ խանն ել՝ նրան : Խանի մարդիկ բազ-
մաթիվ անդամ փորձել են բռնել Փահլեվանին, ըս-
տանել նրան, բայց այդ նրանց չի հաջողվել : Փահլե-
վանը յերեք առյօն գուրս չի յեկել խանի զոր-
քերի զեմ, հսկական հավատացած լինելով, վոր նա
իր մի տասնյակ ընկերներով, ինչպիսի հերոսու-
թյուն ել ցուցաբերի, այնուամենայնիվ չի կարող
չաղթել նրա բազմաթիվ մարդկանց : Յեկ նա գործել
է թիկունքից, Հարձակվել ե խանի առանձին մարդ-
կանց, առանձին արնախումների ու բռնակալների
վրա :

Փահլեվանի անունը սարսափ և ազգել Հարուստ-
ներին : Գիշերները Հարուստների դռները յերկաթե
լինելով են վակվել նրա ահից : Միայն աղքատներն
ու Հարստահարվածներն են հովանավորվել ու պաշտ-
պանություն դաշտ Փահլեվանի մոտ : Միայն աշխա-
տավորներն են աղատ չունչ քաշել նրա անունը լսե-
լիս : Յեկ այդպես շարունակվել ե մի քանի տարի,
բայց վերջնական հաղթանակ չի տարել : Թեև Հե-
տովհետեւ ավելացել ե նրա Համախուների, նրա ընկեր-
ների թիվը, սակայն նա այնուամենայնիվ տեսել
ե իր որածութը : Սուլեյմի խանը տասն ու մեկ գագ-
մոսկի յե խոստացել այն մարդուն, ով կըերի Փահ-
լեվանի գլուխը : Վորքան ավելացել ե Փահլեվանի
Համբավը, նրան վոչնչացնելու զործողություններն
ավելի տեսնային, ավելի վճռական բնույթ են կըել :
Յեկ այդ բոլորն իմացել ե Փահլեվանն ու առանց

իրեն կորցնելու սպասել ե իր մոռալուտ վախճանին։ Այդ ողահին նրա ուղեղն զբաղվել ե մի հարցով ևս. թե ինչպես անի, վոր իրենից հետո գեթ մի փոքրիկ հիշատակ մնա: Յեվ նա վճռնել ե այդ հարցը: Իր մոտ և հրավիրել քանդակագործ Սահակ - ճարտարին ու նրա հետ միասին վորոշնչ են բազմաթիվ սարերով շրջապատված, բայց ավագապատ, ամայի մի տափարակում, վորտեղից անցնում են մի քանի իւաչաձևող ճանապարհներ, կառուցել մի աղբյուր։

Նրանք յերկար ժամանակ աշխատել են այդ դործի վրա: Ազրյուրի ջուրը բերել են ահապին հեռվից՝ Փարաղուղի ստորոտներից: Փահլեվանն իր ձեռքով կանզնեցրել ե աղյուրի վիթիսրի պատը: Սահակ - ճարտարն այդ պատը զարդանկարել ե բազմաթիվ նկարներով և տակը քանդակել մարմարակերտ կուժն ուսին դրած մի կնոջ արձան: Ասում են, վոր այդ արձանի վրա մարմնացվել է Փահլեվանի կնոջ — Վալերիայի պատկերը, վորին նա անչափ սիրել ե և վորից նա դրկվել ե այնքան անդժարար։

Ազրյուրը, վորին հետագայում չդիտես թե ինչու Դաշտակերտ անունն ե արկել, ունեցել ե միայն մի ակունք և նրա ջուրը հոսել ե քանդակերտ կնոջ ուսին դրած կժի բերանից։

Ազրյուրը վերջնականապես պատրաստվելուց հետո, յերկու որ անց, Փահլեվանի դիմակը դտել են աղբյուրի մոտ ընկած...

Նրա դիմակը թաղում են իրա սարքած աղբյուրից քիչ բարձր: Սահակ - ճարտարն արձան ե քանդակում, ինչ վոր տառեր ե փորագրում արձանի վրա

և նա կանգնեցվում ե Փահլեվանի գերեզմանաթմբի վրա: Մի քանի որ հետո պարզվում ե Փահլեվանի յեղերնական սպանության մանրամասնությունը:

Ասում են, վոր այդ որը, առավոտ չուտ, Փահլեվանը սովորականի պես գնացած և լինում իր պարաստած աղբյուրում յերեսը լվանալու: Հենց այն ժամանակ, յերբ նա գլուխը մոտեցնում ե ակունքին, ուզում ե թրչել, այնտեղ կանզնեցրած կողք արձանի տակից մեկի սուրբ կտրում ե նրա պարանոցը...

Փահլեվանի գլուխը յերբ ներկայացնում են Սույելիս խանին, նա անչափ ուրախանում ե, ամբողջ հինգ որ կեր ու խում ե անում: Վեցերորդ որը նրան ներկայանում ե Փահլեվանի գլուխը բերողը և պահանջում ե դրա համար խանի խոստացած տասն ու մեկ զավ վոսկին: Խանը կանչում ե իր Փառաչներից յերկուսին և հրամայում ե խկույն և յետ կտրել այդ մարդու գլուխը, ասելով, վոր Փահլեվանի նման խիզախ մարդու գլուխը տասն և մեկ զավ վոսկով կտրողը մեկ որ ել նրա — խանի գլուխը կթոցնի մի հատիկ վոսկով...

... Կոստան քեռին առանց հապաղելու, հանած կոչեկը թողնելով տեղում, մի վոտով բոբիկ, մոտեցավ Փահլեվանի գերեզմանաքարին, ակնոցները խրնամքով դրեց աչքերին, փորձեց հատ - հատ ջոկել խոնացած տառերը և զոնե մի բառ հասկանալ նրանից, բայց նրանք վորագրած եյին իրար մեջ, մեկ տափ պոչը միացած եր մյուսին, մեկ տառի շարունակությունը կազմում եր մյուս տառի սկիզբը կամ մի այլ մասն այնպես, վոր նա յերկար ժամանակ չեր կարողանում մի տառը մյուսից անջատել: Այսպիս

յերկար չարչարվելուց հետո նա կարողացավ միայն մի բառ հասկանալ — «Հիմնադիրը»...

— Յերեվի զրած և գյուղի հիմնադիրը, — ինքն իրեն ասաց Կոստան քեռին, քիչ մտածելուց հետո ակնոցները զրեց զրպանում, թողեց գերեզմանաբարը և հետ գնալով՝ կրկին նստեց իր տեղը:

— Փառք քեզ, Դաշտաղ Փահլեվան, — կամացուել չչնջաց Կոստան քեռին, — թող վոսկորներդ հանգիստ լինեն...

Փահլեվանի հասցեյին այդպիսի խոսքե՞ր: Ո՞վ է լուր: Դարեր շարունակ նրան մտաբերելիս մարդկանց առաջին խոսքը յեղել է.

— Գյուղ, անիծվի քո հիմնադրողը...

Յեզ նրանք հիմք են ունեցել այդպես տակու:

Գյուղը հիմնադրված լինելով անջրանի մի տափարակի վրա՝ զուրկ եր բնական ամեն մի բարիքից: Գյուղի շրջապատի ահապին տարածությունները խոպան եյին: Այստեղ դաշտային մի վուշ անդամ չեր բանում: Իսկ յեթե զարնանամուտին հատ ու կենա կանաչներ ել լինում եյին, նրանք չորանում եյին՝ հողից մի թիզ դեռ չրաբճացած: Մի բուռ հացա հատիկ ցանելու համար մարդիկ ամբողջ որեր ճամբար եյին զնում, անցնում յերկար տարածություններ, մինչև հեռու - հեռավոր սարալանջերը և յերբ տեղ եյին հասնում, աշխատելու ել ուժ չեր լինում:

Ամբողջ ցանքի և հունձի ժամանակ գյուղացիք դաշտից տուն չեյին վերադառնում: Այստեղ մնում եյին գիշեր - ցերեկ և աշնանը տուն բերում մի ջվար ցորեն: Ավագոտ հողն ամենաբերառատ տարին տալիս եր ցանած սերմի կրկնակին միայն: Իսկ յերաշտ

տարիներին ամբողջովին կորչում եր ցանած սերմն ել:

Զորանում, տապակվում եյին արտերը և գյուղացու սիրտն ել սեփանում եր իրենց արտերի վրա կախված խավար գիշերների նման: Հողոր յերկաթե ծանրությամբ նստում եր նրանց սրակը վրա: Ի՞նչ աներ գյուղացին այդ չնչին բերքը: Ինչպէ՞ս գործադրեր այն: Իր պարտքերը տա՞ր, պետական, յեկեղեցական, անթիվ, անհամար հարկերը տա՞ր, թե կերակրեր բազմանդամ ընտանիքը:

Յեզ բաղմաշարչար աշխատանքի չնչին արդյունքը տեսնելով գյուղացին սրտի մաղձը գյուղի հիմնադրի վրա յեր թափում:

— Եսպես տեղում ել գյուղ կպցե՞ն: Աշխատիր, աշխատիր և վերջը ձեռքերդ ծալած, քաղցած նրանիր. Գյուղ զցող, քո...

Գյուղում ամենադժվարինը ջրի հարցն եր: Այն փոքրիկ ձորակը, վոր անցնում եր գյուղի տակով, ամտանամուտից ցամացում եր ստերջ կովի ստիճքների պես և յենթաղերեն անգամ գժվար եր, թե յերբեցե այդաղից ջուր և անցել: Միայն գարնան սկզբներին, յերբ արեվը դեռ տաքցած չեր լինում, գյուղացիք այնտեղից մի քանի կուժ ջուր եյին կրում անառունները կամ բակերում տնկած հատ ու կենտ բարդիները ջրելու համար: Իսկ չոգերն ընկնելիս նրանք զարձյալ ապրում եյին գյուղամիջի բարակ աղբյուրի հույսով, վորի չուրջն այդ ամիսներին գիշեր - ցերեկ հերթերը միշտ անպակաս եյին լինում:

Կպատահեր, վոր գյուղի մանուկներն արելից
խանձված սրտով կզային, մինչև վերջ կը թմնջա-
յին աղբյուրի մոտ, բայց վոչ վոք հերթից դուրս
նրանց մի կում ջուր չեր զիջի: Աղբյուրի ջուրը կոր-
ծառվում եր ավելի խճայողաբար, քան ամենաթան-
դագին բանը: Վորքա՞ն կոխներ են տեղի ունեցել
այլտեղ՝ ջրի համար: Քա՞նի վլուխ ե պատովել
այլտեղ, արյուն թափվել: Նման կոխների ժամա-
նակ վորքա՞ն կուժեր են զարկվել իրար, ջարդ ու
փշուր դառել, վորքա՞ն թշնամանքի տեղիք ե տվել
աղբյուրի ջուրը...

Յեշ ամեն անդամ ել, նման կոխներից ու անա-
խորժություններից հետո, գյուղացիք, վոխը սրտնե-
րում, բացականչել են.

— Գյուղ գցող, քո վոսկորները փթեն, եսպես
տեղում ել հիմք կդնե՞ն...

Գյուղն իր հիմնագրման սրից, դարեր չարու-
նակ, հիսուն - վաթսուն տնից չի անցել: Զեր աճում
նրա աղղաբնակությունը: Ապա, հետո յել, ոկավեց
հոսանքը դեպի քաղաք: Իրենց դաշտերից տարվա
ապրուստ հալաքելու հույս չունենալով՝ գյուղացիք
սկսեցին բռնել քաղաքի ճամբան: Այլպիսիներից տ-
ռաջինը կոստան քեռին եր, վոր ի զարմանս բոլոր
գյուղացիների, մեկ որ թողեց իր հայրենի տունն ու
այնտեղից հեռացավ: Այն ժամանակ դեռ յերիտա-
սարդ ու անդրագետ Հարունց կոստանն ինքն ել չեր
իմանում, թէ ուր ե գնում, ինչու յե գնում ե ոտար
տեղերում վոնց պետք ե ապրի: Բայց ուղիղ հինգ
տարի բացակայելուց հետո, հոր մահվան յուրն առ-
նելով, յերբ գյուղ վերադարձավ, նա փոխվել եր

անձանաչելիորեն, միանվամայն այլ մարդ դառիւ:
Առաջ արորից զատ վոչ մի բան չտեսած Հարունց
կոստանն այժմ այնպիսի բաների մասին եր խոսում,
վոր լսողների հավատն անգամ չեր դալիս: Նա պատ-
մում եր քաղաքի շինությունների, ընդարձակ փո-
ղոցների, խանութների, գործարանների մասին, բայց
գյուղացիք ավելի շատ հետաքրքրվում եյին գնացքի
և ծովի մասին: Նրանք զարմանում եյին, վոր այդ
պանդի կոչվածը կարող ե միանգամից տեղավորել
բոլոր դաշտակերտցիներին՝ իրենց վողջ ունեցված-
քով, իսկ ծովի ջուրն ել կրավականացնի նրանց «ոլո-
տը պորտին», ինչքան ել առատ բանեցնելու լինեն
այդ ջուրը:

— Այ, ինչ եմ ասել, գյուղը մի այլպիսի ծովի
մոտ պետք ե լինի, վոր չորս կողմը ծառեր տնկես,
բաղ ու բաղչա գցես, ջուրը բաց թողնես տակը, ին-
քը՛ ել գաս, կնկանդ կողքին արխային քնես ու վոչ
մի հարամզաղա թամահ չանի ջուրդ կարի, —
Հարունց կոստանի պատմածները լսելուց հետո յե-
րազանքով ասում եյին գյուղացիք և որորում գլուխ-
ները:

Հարունց կոստանին հետեւեց Խաչատուրենց նա-
զարեթը: Վերջինիս քեռիները քաղաքում եյին ալ-
րում և ասում եյին, վոր այնտեղ հայտնի յոթը հա-
րուստից մեկը նրա քեռիներն եյին: Իր քեռիների
գրության համաձայն Նազարեթն ել մի որ թողեց
Դաշտակերտն ու քաղաք գնաց: Կոստանի նման նրա
մասին ել գյուղում յերկար ժամանակ խոսք չեր
լսվում: Բայց հետզհետե նրա անունն այնպես զուրու-

Հեկավ, վոր գարմացը եց զաշտակերացի բոլոր մէջ
ու փոքրին:

Ասում եյին, վոր Նազարեթը քաղաքում խա-
նութ եր դնել, վորի մեջ տասներկու գործակատար
և պահում: Ասում եյին, վոր Նազարեթը քաղաքում
ալրազաց և պատրաստել, վորի գարպասի վրա յել
փորագրել և տվել իրա, հոր և պապի անունները:
Ասում եյին, վոր... բայց այնքան չատ բաներ եյին
ասում, վոր անհրաժեշտ չե մեկ առ մեկ բոլորը թր-
վել: Հարկավոր և հիշատակել միայն այն, վոր Դաշ-
տակերտում կային մարդիկ, վորոնք չատ եյին ու-
րախանում իրենց համագլուղացու հաջողություն-
ների վրա և չատ ծնողներ ել իրենց տղաներին խրա-
տելիս Նազարեթին եյին որինակ բերում և առում,
թե վորքան ինելոք զուրս յեկավ նա, զյուղից զուրա-
յեկավ՝ վոսկու գուն կանգ առավ...

Նազարեթը զյուղից հեռանալուց հետո վորքան
ժամանակ եր անցնում, այնքան ել ավելանում եյին
նրա մասին խոսակցությունները:

— Եղ Խաչատուրենց տղեն վոր եղքան հարուստ
ա, բա ինչո՞ւ չի մի անդամ ել մեր գեղը մտարե-
րում, — մի անդամ զյուղամիջում ասաց ալեհեր-
ներից մեկը:

— Կլինի, եղ ել կլինի, Ավագ բիձա, — պա-
տասխանեց Նազարեթի բարեկամներից մեկը, — չա-
տին գիմացել ենք, քչին ել գիմանանք...

Ցեկ իրոք, մեկ որ, ազբյուրի գլխին, Դալլա-
քենց Թափլիկոն բարձրաձայն հայտարարեց.

— Այ աղջի, ասում են Խաչստուրենց Նազա-
րեթը գտնիս և մեր զյուղը ջուր բերելու...

Իսկ այդ լուրը վոչ միայն զարմացը ամէնքին,
այլ ցնցեց անդամ նալբանդ Ազարեկին, վորն իր
պատունի կատարման ժամանակ, պորտից ներքեւ,
ստացել եր Սրբումանենց մատակի ուժգին աքացին
և կիսաշունչ վիճակում ուղիղ յերեք շաբաթ պառ-
կել մի կողքի վրա...

— Ժողովուրդ, եղ Նազարեթը վո՞րդիան պետք
ա ջուր բերի, — լուրն ասնելուն պես հարցրեց Պու-
ղին, վորը գյուղում հայտնի վորսկան եր:

— Քո քթածակերից, ել վո՞րդիան պետք ա բե-
րի, — կատակեց Պուղու մոտ կանգնածներից մեկը,
— վորդիան ուղում ա թող բերի, միայն բերի...

— Իմ քթածակերս, այ չոփուռ Սանթուր,
խոսք չկա, չատ նեղ են, ենտեղից դուրս բերած
ջուրը մենակ քեզ հերիք կանի, բա քու ախալերդ ի՞նչ
պետք ա խմի, — կատակին կատակով պատասխա-
նեց Պուղին և չորս կողմը նայեց, վոր տեսնի, թե
ասածներն ինչ տպավորություն թողեցին լսողների
վրա:

— Հե՛, մերը չմեռնի վորսկան Պուղու, խոսքի
տակ մնացողը չի, — ասաց Նահապետը, վորի խոս-
քերն ավելի վոգեորեցին Պուղուն:

— Պուղին վոչ մի բանի տակ ել չի մնա, — ին-
քըն իր մասին տաց վորսկանը և շարունակեց, —
միայն իմ խելքը մկի չի կտրում չի, թե նա վորդիան
ա բերելու եղ ջուրը: Զերիցը հո չի հանելու, մի տեղ
պետք ա լինի չե՞՞, վոր բերի: Հմի եղ վո՞րդիան ա
բերելու: Հը...

Վորսկան Պուղու մտորումներն ավելորդ եյին:
Միենայն ե, նրա հարցասիրությունը վոչ վոք չեր

կարողանալու բավարարել, վորովհետև Խաչատուրենց
Նազարեթի բուն նպատակների մասին վոչ վոք հառ-
տառ բան չգիտեր:

Այդ լուրից հետո յերկար չանցած, վերջապես,
յեկալ և ինքը՝ Նազարեթը:

Դա, իհարկե, դաշտակերտցիների համար մի այլ
ապշեցուցիչ բան եր: Նա կոստան քեռու նման հա-
սարակ ձեփով չեր գյուղ յեկել: Նա գյուղացիներին
հանդիպեց ճոճռան, յերկարաճիս կոչիկներ հաղած,
վոսկե ժամացույցը ծոցագրպանում: Բայց վոր գյու-
ղացիներին ամենից շատ զարմացրեց՝ դա ուղարկերին
բարձած կավե ճերմակ խողովակներն եյին: Ուղտերն
իրար հետեւվից նստեցին Մելքջանենց կալում, գյու-
ղացիք ազմուկ – աղաղակով շրջապատեցին նրանց,
իջեցրին բեռները և իմացան, վոր դա Նազարեթն եր
եր հետ քաղաքից բերել գյուղում ջուր անցկացնելու
համար:

Գալու հաջորդ որը Նազարեթը ժողով հրավիրեց
և հայտնեց մտադրությունը.

— Առանց զրի շատ եք տանջվել, այ խալխ, —
հայացքն իր վոսկե ժամացույցի շղթայից չհեռացնե-
լով ասաց նա, — վորոշել եմ Ղարանարու գետն անց-
կացնել դեսը, տալ ձեզ: Դուք, գեղ-գեղովի մի պրա-
շենի գրեք, վոր լիազորում եք ինձ եղ գործը գլուխ
բերելու, տակը ձեռք քաշեք, տվեք ինձ, մնացածը
յես դիտեմ:

Յեթե յերկինքը փուլ գար, տակովն աներ վող
գյուղը, մարդիկ ելի ենքան չեյին զարմանա, վոր-
քան զարմացան դաշտակերտցիք այդ խոսքերը լսե-
լիս: Նրանք առանց մի խոսք փոխանակելու, լուս

իրար յերեսի նայեցին: Ի՞նչպես թէ նա ուզում է
Ղարանարու գետն անցկացնել դեսը: Դա ի՞նչ լինե-
լու բան է:

Ղարանարին դա այն հսկայական վերձիգ սարն
է, վորի ձյունապատ գաղաթը յերեվում է մի չարք
այլ սարերի հետեւից: Իսկ գետը գնում է նրա մյուս
կողմից, անդնդախոր ձորերի միջից, սրբնթաց անց-
նում և լցում Արաքսի մեջ: Այդ ջրի մի կաթին
անդամ չի ողտագործվում, վորովհետև անչափ խոր
է նրա հունը: Նազարեթն այժմ ի՞նչպես է ուզում
անցկացնել այդ գետը հսկայական սարերի ուսից,
փոխել նրա ընթացքը և ոգտագործել Դաշտակերտի
հողերի վրա:

Գյուղացիք պապանձվել եյին և իրենց զարմանքն
արտահայտելու համար խոսք չեյին գտնում: Յերկա-
րատե լուլթյունից հետո գյուղացիներից մեկը, ինքն
ել չհավատալով իր խոսքերին, իր հարեվանի ական-
ջին կամացուկ չչնջաց.

— Ո՞վ կիմանա, այ մարդ, բալքի նա իրա հու-
նարը իմանում ա: Քաղաք տեսած, քաղաքում ապ-
րած մարդ ա, գործը հայտնի մարդկանց հետ ա յե-
ղել, քամու զաղաց ա ունեցել մարդը, ո՞վ դիտա,
այ տա, բալքի...

— Համ ել եստեղ փողի հարց կա, — առաջին
գյուղացուն արձագանքեց մի ուրիշը, — փողի մերը
չմեռնի. դիտե՞ս փողն ինչեր կանի... Նազարեթի
փողը բոլ ա, մարդը բալքի փողի զոռով ա գործը
դլուխ բերելու: Ի՞նչ կիմացվի...

— Զե, ջանըմ, նիսյա բան է, — հավաքվածների
խորը տարակուսանքը տեսնելով, փստահորեն խոսեց

Կոստան քեռին, — թէ վոր Նազարեթն եղ տեսուկ միտք ունի, թող Փարագուղի աղբյուրները սարքի, մեղ տա: Փարագուղը հրեն մեր քթի տակ. նա համ հեշտ է, համ ել հնարավոր: Հարկավոր է սարքել քանդված քահրիդները, դեանի տակով անցնող ջուրը դեանի յերեսը դուրս բերել, հինգ - վեց չքաղացի ջուր դուրս կդա: Բանեցրու, ինչքան քեֆդ տալիս է: թէ չկ Ղարանաբին...

Դարձյալ տիրեց լուռեթյուն: Կոստան քեռու խոսքը նորից շրջեցին հավաքվածների մաքի ուղղությունը: Փարագուղի քյահրիդների մասին նրանք բոլորն ել գիտելին: Դա զյուղից բարձր սարի ստորոտում քնիած ահագին տարածություն բանող մի ճահճուտ եր, ուր ջուրը միշտ անսպակաս եր լինում: Առավագ չողերին անդամ այնուեղ միշտ ջրերի փարքիկ լճակներ ելին լինում: Թէ վորակղից ելին կուտակվում այդ ջրերը և ինչպես է, վոր չելին պակասում, այդ գյուղացիներից շատերը չելին հասկանում: Բայց նրանք գիտելին, վոր յերբեմնի այլտեղ տրհեստական մի խոչոր լիճ և յեղել, վորի ջրերում վոռովիկ են ահագին տարածություններ: Հետապայում խորտակվել ե լիճը, չորացել են վոսողված տարածություններն ու ամայի դարձել: Վորոնի հիշատակ այդ բոլորի՝ Փարագուղի լճափոսերից ներքեւ մնացել եր մի հսկայական պատի պոռունկ և մարմարե սալաքարի վրա փորազրված մի քանի անհասկանալի և անմեկնելի տառեր:

— Բախտով վկա, Հարունց Կոստանը դուզ ա առւմ, — քիչ մտածելուց հետո Կոստան քեռու ասածները հաստատեց վորսկան Պուղին, — Են կողմերը

վորսի գնալիս քառասուն անգամ ինքս ևմ ջուկու ականջներովս լսել, թէ վանց ա ջուրը հողի տակին ժաժ գալիս ու դուրս գալու տեղ չպանելով տեսնես ուր ա գնում, կորչում: Թէ տղա յիս, զույնիկ եղ ջուրը հանի, համ ինքոր բանեցրի, համ քեցնից հետո յեկողը խմի ու վոսկորներիդ վողորմի տա:

— Լսիր է, վորսկան Պուղի, եստեղ խելքի հարց կա չ'ե, ի՞նչ ես քյոհլան ձիու պես կողքիդ զուտալիս, — Հարցի այդքան ձգձգվելը տեսնելով մեջ ընկապ նազարեթի հորյեղբոր տղան՝ Աթանը, — մարդուն ասում ա՝ Ղարանաբի, ուրեմն Ղարանաբի: Եղ ել հո ըլլաստրակի հետեղից վազ տալը չի, վոր քու խելքով զործ բանեն:

Վորսկան Պուղու լեզուն այս անգամ բերնում ցամաքեց: Նա խոսք չպատվ Աթանին պատասխանելու և հազիվ կարողացավ կակազել.

— Լավ, ախագեր, յես ասացի, դալաթ արի: Յես կլալիվեմ: Դուք Ղարանաբու ջուրը բերեք, յես ել կլամեմ...

Խնդիրն արգեն վճռվեց: Դրանից հետո ևլ վոչ վոք չհամարձակվեց ծպտուն հանել:

— Հ'ը, ժողովուրդ, ել խոսում չե՞ք, — յերկարատեկ լուռեթյունը տեսնելով հարցրեց նազարեթը:

— Ել ի՞նչ խոսենք, — ձայն տվեց ուստա Մայակը, — թէ վոր զործը մի պրաշենով զլուխ կզա, եղ ել մեր աչքի վրեն: Հենց եսոր ել կորենք:

Նազարեթն այդտեղ վոտքի կանգնեց, ուզեց ինչ վոր բան առել, բայց նրան ընդհատեց Աթանը:

— Խսկ գըա համար մեր զեղը ինչքա՞ն փող պետք
ա վեր դա, — Հարցը նա և նստեց տեղը: Աթանի
հարցն ապէեցրեց հավաքվածներին: Ինչպէ՞ս: Մի՞թե
հարցն ապէեցրեց հավաքվածներին: Ինչպէ՞ս: Մի՞թե
դրա համար դյուղացիք պետք ե փող վճարեն: Մի՞-
թե Նազարեթն այդ դործն իր միջոցներով չեր ու-
զում ձեռնարկել: Այստեղ հավաքվածների զարման-
քին ել սահման չկար:

— Ել ի՞նչ փողի մասին ա խոսքը, այ Աթան, —
տարակուսանքով դարձյալ ասաց ուստա Մացակը, —
զե են ա ինքը Նազարեթն ա ուզում ջուրը բերել, ել
մենք ի՞նչ ենք...

— Բերելը՝ Նազարեթն ինքն ա բերելու, համա-
դե մի քիչ ել մենք պետք ա քյոմագ անենք չե՞...

— Զե, ախպեր, մենք եղ մեկին համաձայն չենք,
— շարունակեց Մացակը, — թե կարում ա, Նազա-
րեթը թող իր ուժերով մի ըտենց լավություն անի,
թե չե մենք... մենք... մեր ուժերից վեր բան ա:

— Ուստա Մացակ, ախր քո դիմու խալիի
անունից ինչի յես խոսում: Դու համաձայն չես, յես
համաձայն եմ, են մեկը համաձայն ա, մի ուրիշը
համաձայն ա... Դու...

— Փոխանակ չնորհակալություն ասելու, դու
հալա գլխիցդ եղպես աթալ-կաթալ դուրս ես տա-
լի՞ս, — Աթանի խոսքը բերնում թողեց նրա փոքր
յեղքայրը՝ Աթելը, վորին դյուղացիք «Դանա» մակա-
նունն ելին տվել նրա համառության ու կովասիրու-
թյան համար, և հարձակվեց ուստա Մացակի վրա,
— քու պատճառով մենք առանց ջրի յենք մնալո՞ւ: Սա
ժողովրդական դործ ա յե, հասկանում ե՞ս, հա-

նաք մասիսրա չի: Զանդ ել դուրս գա, դու եղ փո-
ղը պետք ա տաս...

— Ախպեր, դե յեթե զոռի հարց ա, յեկեք տուն-
ներս հավաքեք, տարեք, — իր ասածի մեջ համառեց
ուստա Մացակը, — թե վոր մեղ համար ա, մենք եղ
դործը ուղղում չենք: Եդ նիսյա ա, քամի յա...

— Հաստ գլխիդ զոռ մի տա ե, եյ, ավարտ,
խոսքդ ճանաչիր, — սպառնաց գանա Աթելն ու հաղ-
թանակած աքլորի պես հետ քաշվեց, նստեց տեղը
և նրա բացարձակ սպառնալիքը տեսնելով ել վոչ
վոք չհամարձակվեց հականառել: Անհարմար լուս-
թյունը դարձյալ խզեց Նազարեթը:

— Ժողովուրդ, կարծիք չանեք, թե յես ձեղնից
հավաքած փողով եմ ուղղում Ղարանարու դետը դեսն
անցկացնել: Զեր տված փողը միայն պապիրոսի հա-
մար ա զնալու: Դա մտնելու յեայն մարդկանց ջերը,
վորոնցից կախված ե միայն զործն իրար տալը...
Մնացած ծախսը, այսինքն ամբողջ դործը, կատար-
վելու յե իմ փողերով...

— Եղքան փող տվողը պապիրոսի փողն ել կտա,
— լովեց մեկի զուսպ ձայնը և նա յել խլացավ
յեղքայրներ Աթելի ու Աթանի խոսքերից, վոր ձայնը
լսելուն պես ասացին.

— Ավել պակաս դուրս մի տուր, եյ, Աղաջան:
Նազար ապեր, դու խոսքդ ասիր...

Հարցը հասակ ամենաղժվարին մասին — թե
դյուղն ինչքան դումար պետք ե հատկացներ այդ դոր-
ծին:

— Յես այդ հաշիվն ել եմ արել. չունչը տառը
մանեթ ես գլխից, — տեղից վեր կենալով հայտնեց
Նազարեթը:

Նազարեթի հայտարարությունն ամենից առաջ
ցնցեց Մելիքջանենց Ներսեսին: Նրա ընտանիքը բաղ-
կացած եր տասներկու հոգուց և տան աշխատող
ձեռքը միայն ինքն եր: Նազարեթի բերնից ինուքը
դուրս դարուն պես նա խսկույն հասկացալ, թե ինչ
սարսափելի խաղ պետք ե խաղացի իր գլխին: Սա-
կայն Մելիքջանենց Ներսեսը յերկար չկարողացավ
խորհել Նազարեթի հայտարարության վրա: Յեղայր-
ներ Աթանան ու Աբելը այստեղ դարձյալ վեր ցատկե-
ցին տեղներից և միարերան գոչեցին.

— Լալ ա, շատ լալ ա, խղճով գործ ա...

— Խղճի մասին պետք ա խիզ ունեցողը խոսա,
այ բալամ, դուք ինչի մասին եք խոսում, — իրեն
այլեվս չկարողանալով զապել՝ բացականչեց վորսկան
Պուլին և առանց իր խոսքերի պատասխանը լսելու
ժողովից դուրս դնաց: Նրան ուրիշներն ել ուղեցին
հետեւել, բայց Նազարեթի բարեկամներն անմիջա-
պես կանգնեցին դռան առաջ և թույլ չուլին ուրիշ
վոչ վոքի այնտեղից դուրս դալու:

— Ախալեր, մենք եղ ջուրը չենք ուղում, եղի
առանց ջրի կմնանք, — տեղից բացականչեց մեկը և
վոչ վոք չխմացալ, թե ով եր նա. սակայն բոլորն ել
համաձայն ելին նրա հետ: Յեթե ճարներումը լիներ,
բոլորն ել միաձայն կհաստատելին այդ խոսքերը:
Բայց բոլոր խոսակցություններն ել ավելորդ ելին:
Հարցը ներքին կարդով արդեն վճռվել եր:

50

Խաչառութենց Աթանալին, դանա Աբելին և թոխ-
մախ Ստանէլին նշանակեցին չորս որպիս մեջ փողը հա-
վաքելու, վորովհետեւ Նազարեթը ժամանակ չուներ
գյուղում յերկար մնալու:

— Շուտով պետք ե գործի անցնել, — վերջում
ասաց նա և ժողովից դուրս յեկավ...

Մելիքջանենց Ներսեսը կտրուկ կերպով հրաժար-
վեց փող տալուց: Գղիլը նրան կանչեց դյուղամեջ,
յերկու ճիպոտ կոտրեց մեջքին և յերկու որով դոմ
ձգեց, վոր «խելքի» դա: Ներսեսը գոմում բանտարկ-
ված ժամանակ Խաչառութենց Աթանալ, դանա Աբելը և
թոխմախ Սահակը գնացին նրա տունը, գոմից դուրս
բերին ուղերը տակելին նրա յերեք այծը և դուրս յեկան
պարտըը:

Անցան որեր և Ղարանաբու մասին ել ձայն —
ծպտուն չլավեց...

Մուքել պապը, վոր Նազարեթի փողը լրացնելու
համար իր վրայի վերմակն եր ծախել, մեկ որ գյու-
ղամիջում հանգիպելով Աթանալին, որորվելով՝ մոտե-
ցավ նրան, ուղիղ նրա աչքերին նայելով ասաց.

— Հարսամ լինի են ջուրը, վոր դուք եք բերելու
դյուղը: Վերջին կոտեկներս ել թող լեղի մինի, չան-
ներովդ տա...

— Մուքել պապի, պատիվդ պահիր հա՛, — բոր-
բոքվեց Աթանալ, — բերանիցդ ավել — պակաս դուս
մի տա: Զուրը վոր դա, դու բոլորից ել շատ ես
խմելու:

— Հա՛, լավ ջուր ա դալու, — Աթանալ հեռանա-
լուց հետո, կամացուկ ասաց Նազարեթի բարեկամնե-
րից մեկը և բացարեց Նազարեթի դյուղ գալու բուն
նալատակը, — բաղաքում կոտր ա ընկել, գործերը
քամի յեն դառել, վուքանները, ջաղացը, ճեռքից լնի-
նում են, յեկավ մեր կոտեկները հավաքեց, վոր տանի
իր պարտքերը տա...

51

— Բա դավակոցը բեռնած են կամի լուլեքն ինչի՝
Համար եր բերել:

— Մեր աչքերին թող փչելու համար...

Գյուղում ջուր ունենալու հեռակոր հույսն այս
անգամ դարձյալ հողս ցնդեց: Հոգսի, դժբախտու-
թյան դեպքում բոլորի բերնից ելի նույն խոսքերն
ելին դուրս դալիս.

— Գյուղ, անիծմի քո հիմնադրողը...

... Յեվ հանկարծ, մինչև այդ հազարավոր ան-
գամ լաված ցամնալից խոսքերի, անգուստ հայնո-
յանքների փոխարեն առաջին անգամ լովեց կոստան
քեռու խոսքը.

— Փառք քեզ, Փահլեվան, թող վոսկորներդ հան-
դիստ լինեն...

Կոստան քեռու խոսքերը տարածվեցին դարնան
դեխուսի շրթին յեկող ծաղկաբուրմունքի նման: Վորպես ճերմակ շուշանները վողորկ, բայց թափա-
պատ լեռնալանջի վրա, այդպես վեր յելան կոստան
քեռու տասծ զգացմունքներով լի քնքուշ խոսքերը: Փահլեվանի մասին առաջին անդամ կոստան քեռու
բերնից լսվեցին այդքան զգայուն, քաղցր խոսքեր,
վորովհետեւ առաջին անգամ նա տեսավ, վորպես վր-
ճիտ հայելու մեջ, Փահլեվանի հիմնադրած գյուղի
այն չքնաղ պատկերը, վոր սկետք և տոտնար նա
յերկու - յերեք տարուց հետո:

Փարաղուզի լիճը վերջնականապես պատրաստ եր: Ահապես ճահճուտը փորվել եր հսկայական խորու-
թյամբ, դուրս բերվել ակունքը, առջեր բետոնաձույլ
պատճեց կանգնեցվել, վորպեսի այնտեղ հավաքվեն
գետնի տակից յեկող սարի առատ ջրերը և հետո զնան
վորովելու գյուղի միջապատի բոլոր հարթ, արդա-
վանդ հողը: Այդ ամայի, խոպան հողերը շուտով վեր
կածվեն կանաչապատ, ծաղկադարդ այգեստանի...

52

Մտքելը պատել եցին կոստան քեռուն: Նա մտա-
քեռում եր, թե վորպիսի դժվարությամբ են ձեռք
բերել Փարաղուզի ջուրը:

Որոշ բոլային իշխանության առաջին խոկ տարինե-
րից նրանք բարձրացրել են այդ հարցը: Կոստան քե-
ռին ինքն անձամբ մի քանի անգամ մասնակցել ե շր-
ջանային գործադիր կոմիտեյի նիստերին, ուր քննու-
թյան և առնվել Դաշտակերտի ջրի հարցը: Նա հան-
գամանորեն բացատրել ե, թե վորքան ջուր կարելի
յե ստանալ Փարաղուզի աղբյուրներից: Յեղել են
մարդիկ, վորոնք անցյալի գառն փորձերից յեներով
Խորհրդային իշխանության որոք ել են թերահայա-
տությամբ նայել այդ գործին: Յեղել են նաև թը-
նամիներ, վորոնք վոչ մի ջանք չեն խնայել այդ աշ-
խատանքները ճախողելու, խորսակելու համար:

Դանա Սքելին ու թոփոմախ Սահակի տղան դրա
համար խիստ պատժվեցին: Մի դիշեր նրանք եյին
գնացել դինամիտով պայթեցրել լճի պատնեշը, ավա-
զով ու քարերով լցրել, ավերել փորած հորերն ու
ակունքները: Գյուղացիք, ճիշտ ե, ահազին ջանք
գործադրեցին, մեծ աշխատանք թափեցին փորված
հորերը նորից մաքրելու, հսկայական պատնեշը ասր-
քելու համար, բայց սրիկաներն ել կրեցին իրենց ար-
ժանի պատժիքը:

Այժմ ամեն ինչ արդեն պատրաստ է: Վաղը Փա-
րաղուզի ջուրը բաց կթողնիի Դաշտակերտի...

Ռւրախության արցունքները գլուխեցին կոստան
քեռու խորշումած այսերի վրայից: Նա թաշկինակը
հանեց, սրբեց արցունքներն ու ինքն իրեն լսելի ձայ-
նով ասաց:

— Վա, աս ինչ ե, մեկն ել տեսնի ու ասի, թե
Հաբոնց կոստանը գնացել, գերեզմանոցում նստել,
մեռելների վրա յե լաց լինում...

Արևի վերջին չողերը նրա այտերից խլեցին ժպտի
մի պայծառ վունջ: Կոստան քեռին վոտքի կանգնեղ,

53

մի անդամ ևս հայացքը հառեց Փահէլվանի չիրիմա-
քարին և քայլերն ուղղեց գեղի դյուղ :

2.

Կոմյերիտմիության կոմիտեի քարտուղարը յեր-
կու այլ կոմյերիտականների հետ իրիվանից մինչև
արեածագ պահակ ելին կանգնել դեպի Փարագուղի
լիճը տանող ճանապարհի մոտ, վորակեզի դյու-
ղացիներից վոչ վոք չղնա լիճը տեսնելու՝ մինչև
նրա հանդիսավոր բացումը : Նրանք թեև յերեքով ել
ամբողջ գերերն անքուն ելին անցկացրել, անշարժ
աչքերով հսկել ելին չորս բոլորը, բայց լուսաբացին
այնուամենայնիվ յերկու յերեխայի հաջողվել եր ծա-
ծուկ անցնել նրանց թիկունքը և կողեկուզ հասնել
մինչև լիճը : Նրանք տեսել ելին լիճը, վոտ ու ձեռներն
ել թրջել ջրում, գետ մի քանի հատ մել քար նետել լճի
մեջ՝ նրա խորությունը չափելու համար և հրճան-
քով վերադարձել այնտեղից :

Մանուկները վատահորեն անցան պահակների մո-
տից, վորովհետեւ վախենալու այլիս վոչինչ չունեցին
— նրանք արդեն հասել ելին իրենց նստակին : Պա-
հակներից մեկը — Ճաղարենց Գուրգենը, բռնեց նը-
րանցից մեկին, ուզեց ականջիցը բաշել նրա հանդրդ-
նության համար, բայց քարտուղարը թույլ չուվեց :

— Մեր ականջներից պետք ե քաշել, վոր եղ յե-
րեխաներին ել չենք կարողացել բռնել, — տաց նա
և նաց թողեց յերեխաներին :

Նրանք պահակների մոտից մի քանի քայլ հեռա-
նալուց հետո բարձր աղմկելով դեպի դյուղ վաղեցին :

— Այ, մենք դյուլ տեսել ենք, այ, մենք դյուլ
տեսել ենք...

Գյուղացիք բոլորն ել արդեն հավաքվել ելին աղ-
բյուրի գլուխը և կուսակցության ըջկոմի քարտու-
ղարին ելին սպասում, վոր դար, միասին դնային լճի
ջուրը բաց թողնելու : Յերբ լիճը տեսնող յերկու յե-

րեխան հասան աղբյուրի գլուխը գորդուալով, թե ի-
րենք արգեն լիճը տեսել են, կանգնածներից մեկը
բռնեց և յերկու մատով պինդ սեղմեց մեկի քիթը .

— Սուս արա, հարամդադա, մեղ հավսալից
գուրս մի բեր...

Յերեխան այդ պահին թեև չիմացավ, թե վորն ե
իր հանցանքը, բայց լոեց և քիթը բռնած մի կողմ
քաշից : Իսկ մյուսը, վոր ավելի համարձակ եր, մի
քիչ հեռու փախավ և սկսեց այստեղից վրա տալ .

— Եյ, Գերասիմ, հերսիցդ ի՞նչ ես տրաքում,
գուղ ա ասում եմ, մենք նոր դյուլ տեսել ենք. ծովի
պես ա, ծովի պես :

— Քեռակնոջդ արելը վկա, ծովի պես ա. ասես
պապադ հենց ծովի մեջ ա մեռել...

Յերեխան լոեց. նա ասելու խոսք չդատավ : Այդ
ժամանակ դյուղի դիմացի բլրի վրա յերեաց առա-
ջին ձիավորը : Կուսչրջկոմի քարտուղարն եր : Իքա-
րանցումն ավելի շատացավ : Գյուղիսրհրդի նախա-
գահը բարձրացրեց դրոշը : Հնչեց Գեղեցնի զուռնայի
վիլ ձայնը : Դիլանենց Սամվելը զարկեց դշովին...

Յեթե առջեկց զնացողը կուսչրջկոմի քարտուղա-
րը չլիներ, վորը ձին թողնելով գյուղում՝ ինքն ել եր
վոստի գնում, բոլորն ել թերես մի շնչով վաղելին
մինչև լիճը, վորը գյուղից յերկու — յերեք կիլոմետր
հեռու յեր գտնվում : Շրջկոմի քարտուղարի ներկա-
յությունն ատխում եր նրանց մի քիչ կարգապահ լի-
նել և չխախտել կանոնավոր շարքերը : Բայց այդ կար-
գապահությունն ել տեղեց մինչև վերջին բլրին հաս-
նելը : Նոր բացված լճի կապուտակ ջրերը հենց վոր
յերեացին նրանց աչքին, նրանք բոլորն ել իրենց
կորցրին, խառնվեցին իրար և բարձրաձայն աղմուկ -
աղաղաղակով միանգամմից, ով ինչքան ուժ ուներ գոր-
ծադրեց՝ դեպի լիճը վագելու : Այդ աղմուկի մեջ
Մջկոմի քարտուղարն ել իրեն կորցրեց . նա ևս վա-

զեց դեպի լիճը, վորի ջրերը տեսնելուն ողիս մյուսներից պահաս չեր հուզվել:

Սորեն բոլորն ել լծի մոռ եյին: Արեի ուղղաձիկ սլաքները բեկվել եյին Մրի շերտերի տակ: Լծի վրա ծփում եյին փոքրիկ կոհակները և դրանց շրջումնից զատ ել ուրիշ ձայն չեր լավում: Քիչ առաջ յեղած ժարդկային աղմուկն այժմ տեղի յեր տվել անդորրին:

Մարդկի բոլորն ել ինչ վոր աննկարագրելի հուզմունքի մեջ եյին: Բոլորն ել իրենց աչքերը հառած լծի կապուտակ ջրերին՝ թափանցում եյին նրա շերտերի մեջ, լուս չընում լծի չորս բոլորը, բանում ձեռք ու վուսները, բայց վոչ մի ձայն չեյին հանում:

Տեսարանով վորոշ ժամանակ հրճվելուց հետո գյուղխորհրդի նախագահը կանչեց բոլորին, հավաքեց մեկ տեղ, բաց արեց միտինդը: Միտինդում խսուց կուսշընկոմի քարտուղարը: Քարտուղարն իր ձառի սկզբում կանդ առավ նախ մեր յերկրի ընդհանուր նվաճումների, մեր ժողովուրդների բարեկեցիկ կյանքի վրա, ապա և նշեց այն բոլոր նվաճումները, վոր ձեռք են բերվել Դաշտակերտում Խորհրդային Եշխանության որոք: Իր ձառի վերջում քարտուղարը յերախտագիտության ջերմ խոսքեր ասաց այն մարդու հասցեյին, վորի դեկավարությամբ, անշեղ ցուցմունքներով, մեր անծայրածիր յերկրի ժողովուրդներն ուրախ և յերջանիկ կյանքով են ապրում, որստորե վիթխարի նվաճումներ են՝ ձեռք բերում: Քարտուղարը տվեց այդ անունը, վորը սակայն մինչեւ այդ ել պարզ եր բոլորի համար: Հանկարծ բոլորի սրտից թնդաց ուրախության ցնծագին գոչումը: Մելիքջանեց Ներսեսի տղան — Գեղեցնն ուրախությունից բերանից հանեց զուռնան, ուռա կանչեց ամբողջ

ձայնով, վորը միայն բավական եր հսկա լեռներ գըպըրդաշնելու...

Կոստան քեռին, վոր մինչ այդ նստել եր ամեն-քից հեռու մի քարի վրա, այդ ժամանակ վոտքի կանդնեց, կամաց-կամաց առաջ յեկավ, կանդնեց գյուղխորհրդի նախագահի և կուսչընկոմի քարտուղարի արանքում, առանց մեկն ու մեկից թույլ-տըլություն ինդրելու՝ ձեռքը բարձրացրեց ողի մեջ, ուշադրություն հրավիրեց: Հավաքվածներն այդ բոլորի մեջ արտասավոր բան չգտան: Նրանք գիտեյին կոստան քեռու բնավորությունը. յեթե ասկելու վորեւ բան ունենար՝ լուռ, ինքնավստահորեն ամբիոն կբարձրանար, կասեր իր խոսքը: Վոչ վոք չեր դըժ-դոհի նրանից, վորովհետու նա անտեղի յերբեք չեր խոսի: Միայն նախագահը, յերբ տեսներ, վոր նա արդեն հիշողությունների յե անցել և հիմնականից շեղիում ե (իսկ կոստան քեռու հետ նման դեպքեր հաճախ եյին պատահում) կամացուկ կիշեցներ այդ մասին, նա յել ներզություն խնդրելով իսկույն բուն հարցին կանդրադառնար:

Կոստան քեռին այս անդամ ընդհանուր լուռ-թյունը տեսնելով, հանդիսա, գրավանից հանեց ակնոցները, գրեց աչքերին, մի քիչ լուռ մնաց, հետո հայացքը գեպի հեռավոր սարերին ուղեկելով, կարծես թե այդ սարերին դիմելով ասաց.

— Պարզ ե, մեր քարտուղարը շատ լավ բան առաց: Նա ասաց մեր բոլորիս ուղած խոսքերը: Նա այստեղ տվեց մեղ ամենքիս հարազատ անունը: Մենք շարունակ լսում ենք այդ անունը, ամեն անդամ ել անչափ վոգեվորիլում ենք նրա անունը լսելիս: Նա

մեր դեկապարն է, մեր ուսուցիչը: Յես առաջարկում եմ մեր լիճը կոչենք մեր դեկապարի, մեր ուսուցչի, անունով...

Կոստան քեռու ձայնը խացավ ցնծաղին ուսումներից, ուրախության ուժգին բացականչություններից: Նա մի քիչ լուռ սպասեց, մինչև վոր տիրեց վորոշ խաղաղություն, հետո ձեռքը բարձրացրեց, ուզեց ելի ինչ վոր ասել, բայց նրա ձայնն այս անգամ բերանում մնաց. Հենց այդ պահին, ժողովրդի միջից, լովեց հրացանի յերկու ուժգին պայթուն: Արգումաննեց Շողակաթը ամուր ճչաց, ջուխտ ձեռքերը դրեց ականջներին ու նստեց տեղը: Դալլաք Աղարեկի մայրը ծնկներին խփելով վրա տվավ.

— Աման, ես ինչ զուլում եր...

— Մի վախեցեք, այ ժողովուրդ, եղ յես եմ, — վորսորդական հրացանը բարձր բռնած, առաջ զարդ, ասաց վորսկան Պուղին:

— Հարունց Կոստանը քաղաք տեսած, դիր իմացող մարդ ա. մեղքս ինչ թագցնեմ, եղ կողմից յես նրան հասնիլ չեմ: Համա խոսքը վոր յեկավ գյուղին, եղտեղ ել մենք մեր հունարն ունենք: Եղ տրաքոցներն ել իմ ձենս եր ու ձենովս մին կանչեցի՝ համաձայն եմ Հարունց Կոստանի հետ: Եղ բանը իմ սրտի մեջ ել կար, համա Կոստանն առաջ ընկալ: Թող տա աստված, վոր նա մեռնելիս ել ինձնից հետ չմնա...

Պուղու խոսքերը ծիծաղ առաջացրին: Սակայն Պուղին գրանից իրեն չկորցրեց: Նա շնծու ձեզով մի քանի անդամ հաղաց, մինչև վոր նրանք լուեցին և հետո շարունակեց.

— Քեզ եմ ասում, ընկեր քարտուղար, — դիմելով կուսչրջկոմի քարտուղարին ասաց նա, — յես հրես վաթսունի մոտ մարդ եմ: Կյանքիս շատ մասն անց եմ կացրել տանջանքների, չարչարանքների մեջ: Աշխատել եմ յավ ու վատ ու վոչ վոք ել իմացել չի, թե աշխարքում վորսկան Պուղի կա: Մինչև հիմա անունս վորսկան ա յեղել, համա ինքս թվանդ չեմ ունեցել. Եղ ել նման ա նրան, թե մարդ ես, խոսակ ես ուզում, համա լեզու չունես... Վորսի յեմ զնացել միշտ սրա - նրա թվանդով: Շատ ժամանակ եր թվանդի փոխարեն մահակն եմ ուսիս գրել: Եղպես ա յեղել մինչև հերու: Միայն հերվանդից եմ յես, Հարունց Կոստանի ասած, նաստայաշչի վորսկան դառնել: Ի՞նչու: Եղ պատմությունը մեր գյուղում բուրն ել իմանում են, միայն քեզ եմ պատմում: Հերու, սարից դալիս, տեսնեմ գելերն ընկել են կոլխողի վորչարի մեջ և կոտսորում են, իսկ չորանն ել վախեց վախել ա մի քարի գլուխ և ենտեղից ծըղձըդում ա: Բախտիցս յես շատի մոտիկի. վաղեցի և, զոյմա զոչաղ Պուղի, մահակով գելերից մեկին սպանեցի, մեկն ել վախավ, կարացի վոչ հետիցը հասնեմ: Ես խարարը կառավարության ականջն ընկալ և մին ել տեսնեմ ինձ համար պարզել զրկեցին ահա ես թվանդը: Խոսք յերկարացալ, ընկեր քարտուղար, յես գիր չիմացող մարդ եմ, քաղաք չեմ տեսել, լավ խոսալը չեմ իմանում: Համա ինչ եմ ուզում ասել: Ուզում եմ ասել, վոր հիմի մարդու զարդը իմացող կա: Եղ ո՞ւմ չնորքն ա: Խոսք չկա, ընկեր Սաալինի չնորքն ա: Ո՞վ ա Սաալինի քան սիրում աշխատավոր ժողովուրդին: Խոսք չկա, վոչ ով: Իսկ

աշխատավորն ել Ստալինին ա սիրում։ Ո՞վ ա մեղ
լավ միտք տալիս, նեղ գրությունից հանում, դարձ-
ներս իմանում, ուրախություն բերում մեր սրտերին։
Խոսք չկա, վոր Ստալինը։ Դրա համար ել, Հարունց
Կոստանը շատ դուզ ա ասում, մեր գյուլն ել ենք
տալու Ստալինի անունը, մեր գեղին ել, մեր քյավ-
շանին ել։ Ինձ վոր հարցնեք, յես կասեմ՝ բոլոր լավ
աղջյուրները, բոլոր վարար գետերը, բոլոր բարձր
սարերը, ինչ վոր լավ բան կա, բոլորն ել տանք ըն-
կեր Ստալինի անունով, վորովհետեւ նա յա մեղ սո-
վորեցնում ինչքան լավ մտքեր կան, նա յա մեղ
շույց առլիս ինչքան լավ գործեր կան։

Վորսկան Պուղին մի պահ կանգ առավ շունչ քա-
շելու. բոլորը ծափահարեցին նրան։ Նա մտադրել
եր ելի իսոսել, բայց բուռն ծափահարությունները
տեսնելով՝ այդքանով ել բավականացավ։ Նա ինքն
ել գոհ մնաց իր ճառից։ Այդ պահին նա կարմրել եր,
արյունը լցվել եր խորշոմած յերեսի կնճիռների տա-
կը և դեմքն այնքան եր փայլում, վոր կարծես թե
նա մողական զավազանի մի հարվածով հիսուն տա-
րով ջահելացել եր, առույգացել։ Ներքուստ ինչ վոր
անբացատրելի թեթեկություն եր զդում նա այդ պա-
հին։ Նախադահի մոտից զնալիս վոտներն ուրախու-
թյունից չեյին կանգնում, անվերջ քայլել եր ու-
գում։ Նրա մտքից անցավ՝ հրացանով զարձյալ կը-
րակել ողի մեջ, բայց հենց այդ ժամանակ մեկի բա-
ցականչությունը մոռացնել տվեց նրա այդ մտա-
դրությունը.

— Մալադեց Պուղի, շատ լավ խոսեցիր։

— Հե՛, ես ինչ եր վոր. հալա հինգ եռքան ել
մտքումս մնաց։ Են ել մի ուրիշ անդամ, — պատա-
խանեց նա և կանգնեց իր նախկին տեղում։

Պուղուց հետո խոսել ցանկացողների թիվն ավելի
շատացավ, բայց նախագահն ել վոչ վոքի ձայն ըլ-
տըմեց։

Հանդիավոր մասը դրանով ել վերջացավ։ Մի
խումբ մարդիկ մոտեցան լճի գլխավոր պատին, վոր-
տեղից պետք ե բաց թողնվեր ջուրը։

Գյուղխորհրդի նախագահը դիմեց կուսըջկոմի
քարտուղարին, վոր նա բաց անի ամբարտակի ջուրը։
Իսկ վերջնա առաջարկեց կոստան քեռուն։

— Յեկ միականը դու հանիր, կոստան քեռի. այս
լճի գլխավոր նախաձեռնողը դու յես։

Այսուեղ Կոստան քեռին իրեն անչափ չոյշած-
գուց։ Յեթե հպարտությունը յերեվալու հատկու-
թյուն ունենար, այդ պահին բոլորն ել կտեսնելին,
թե դրանով վորքան ե լցված Կոստան քեռին։ Նա ծա-
նըրախուհ քայլերով մոտեցավ անցքին, ձգեց միականը,
ջուրը միանդամից շատրվանեց և հորդաբուխ թափով
լցվեց առվի մեջ։ Բաղմությունն անսահման ուրա-
խությամբ, աղմուկաղակով բռնեց ջրի ընթացքը։
Մեղիքանենց պառակը շիտթվելուց ընկապ առվի մեջ,
թրջվեց ամբողջովին։ Ջրում մի պահ նա իերն կորց-
րեց. բարձր ճիչ արձակեց, բայց վորովհետեւ բոլորն
ել վագում եյին ջրի ուղղությամբ, պառակի ձայնը
վոչ վոք չլսեց։ Պառակը փորձեց ինքը դուրս գալ առ-
փից, այս անդամ ել վոտը սայթաքից, նորից ընկապ
սակայն յերկրորդ անդամ պառակն իրեն չկորցրեց։
Տեսնելով, վոր առանձին վտանգ չկա, նա կանգնեց

առայի մեջ և մանկան նման ջրին խվելով՝ սկսեց ուրախութեալ:

Չուրն առոան տաքից ճաքճքած առվի ճեղքերը լցնելով՝ առաջ եր հոսում: Ջրին համընթաց վաղող մարդիկ հետզհետե յետ եյին մնում: Իսկ մանուկները, իրենց կոչիկներն ու վարտիկները թեփերի տակը տված, առանց հողնելու դեռ շարունակում եյին առաջ վաղել...

3.

Գյուղից ահագին վերել, ձեռքերը մեջքին դրած, գլխահակ և մտախոհ, քայլում եր կոստան քեռին: Բարձր, վերձիդ սարերի ուսից, գալիս եր մեղմիկ քոմին, կպչում կոստան քեռու գեմքին և անհետանում ով գլխե թե ուր: Դուրեկան քամու շոյանքը կոստան քեռին չեր ել զգում: Նա տարվել մը իր մտքերով և քայլում եր լուս ու անտարբեր, մինչև վոր հանկարծ լսեց իր անունը, հետ նայեց ու չիմացալ, թե ով եր կանչողը:

— Յես եմ, կոստան քեռի, — ասաց կանչողը և մոտեցավ, — մենմենակ եղ ո՞ւր ես գնում:

Կոստան քեռին ճանաչեց կանչողին. Նահապետենց Սարդիսն եր: Նա գյուղատնտեսական տեխնիկումի ուսանող եր և նոր եր վերադարձել Վոլոս-Մոսկա ջրանցքով կատարած ճանապարհորդությունից. Կոստան քեռին Սարդիսն հանդիպելու համար շատ ուրախացավ: Նա լսել եր, վոր վերջինս տեխնիկումի լավագույն, հարվածային ուսանողներից ե, շատ խելոք տղա յե ու կոստան քեռու համար շատ հաճելի յեր նրա հետ խոսել, անձամբ ստուգել իր լսածները: Յես կոստան քեռին սկսեց հարց ու փորձ անել Վոլոս-

Մոսկա ջրանցքի մասին, նրա ճանապարհորդության, Մոսկա քաղաքի մասին, մինչև վոր իրենց լճի սքանչելի տեսարանը բացվեց նրանց առաջ:

Կոստան քեռին և Սարդիսը գեռ չհասած լճին՝ կանգնեցին փոքրիկ բլուրի վրա և սկսեցին հրճվել իրենց զիմաց բացված տեսարանով: Վորոշ ժամանակ վոտքի կանգնած նայելուց հետո կոստան քեռին նըստեց մի քարի վրա, իսկ Սարդիսը կանգնեց նրա մոտիր հայացքը դեպի հեռուները հառած: Տիրեց յերկար լուսություն: Վոր վոր նրանցից չեր ուղում ընդհատել մյուսի խոհերը: Յերկուսն ել տարվել եյին խորը զգացմունքներով:

— Սարդիս, խնձորենին չուտ պտուղ կտօա, թէ ծիրանին, — վերջապես լուսությունը խախտելով՝ հարցրեց կոստան քեռին:

— Մեկ ե, լավ հողի մեջ յերեք-չորս տարուց հետո յերկուսն ել պտուղ կտան: Իսկ խաղողն ավելի չուտ և պտուղ տալիս: Յեթե լավ խնամենք, յերկու տարուց հետո Մաղրայի այդիներից կոտանանք առաջին բերքը...

Կրկին լռեցին:

Դաշտակերտն իր դոյրության որից այդի չեր տեսել: Դաշտակերտի յերեխաներն ամռան շոգին կարոտով են մտափերել մի հատիկ թարմ միրգը: Բայց շուտով, ընդամենը յերկու-յերեք տարուց հետո, Դաշտակերտը կունենա իր սքանչելի այդիները՝ բազմատեսակ մրգատու ծառերով լի:

Մարդիկ, վոր յեղել են Դաշտակերտում մի քանի տարի առաջ, կրկին անդամ այնտեղ ընկնելիս այլեվս չեն ճանաչի առաջվար իրենց տեսած գյուղը: Մարդիկ, վոր անցել են այնտեղից յերբեմնի, կրկին անդամ

նույն տեղից անցնելիս կշփոթվեն, կնստեն գալար այդ
դիմերի ծառերից մեկի տակ ու հարց կտան իրենց.

—Արդյոք չե՞նք չեղել ճանապարհը, չե՞ն վոր այս-
տեղ առաջ մի ծառ անդամ չկար, չե՞ն վոր այստեղ մի
մրգատու այդի վորոնելլ նույնն եր, ինչ վոր արեվի
վրա անտառ փնտելլ...

Մարդիկ կասկածանքով յերկար կմտածեն այդ-
մասին, մինչև վոր դաշտակերտցի մի մանուկ, բազ-
մարույթ մրգերով լի սայլը բեռնած այնուղից անցնե-
լիս ամեն ինչ հանգամանորեն կբացարի նրանց, կը-
փարատի կասկածամիտ ճամբորդների բոլոր տարա-
կուսանքները...

Նրանք յերկուսն ել, և՛ կոստան քեռին, և՛ Սար-
գիսը, այժմ այդ մասին են մտածում: Խորհում են,
թե վոր հողում ինչ այդի գցել, ինչ ծառեր տնկել:

—Միայն պաշտառու ծառերը բավական չեն. պետք
է անտառի մասին ել հոգալ, —խորը մտածելուց հետո
ասաց Սարգիսը, —յեթե մի քանի հազար հատ կանաչ
տունկեր և ճյուղեր տնկենք Գյուղեյու լանջում, ջու-
րը միշտ տակը պահենք, այնտեղ գեղեցիկ մի անտառ
կունենանք:

Կոստան քեռու միտքն անմիջապես բռնկվեց Սար-
գիսի խոսքերից: Նա պարզորոշ պատկերացրեց նրա
ասածը: Նրա յերեակայության մեջ պայծառորեն
պատկերացավ լայն ասրալանջի վրա մոված անտա-
ռը — յերկնաձիւ ծառերով, խիստ, անանցանելի թիւ-
թով, ճյուղապատ, կանաչ ու ծաղկալեն: Նրա մտքում
բոցկլուցացին անտառի հետ կապված բարձմաթիվ այլ
խողիրներ ել: Նա Հիւեց, վոր անտառն իրենց կազա-
տի աղբից, աթարից, վորոնց հոտից տարիներ շարու-
նակ փառակալել են նրանց զգայարանները, վորոնց

ծխից շարունակ մրտոված և յեղել նրանց տան ոճոր-
քը, անկողնաշորերը, հագուստները, անգամ ուտելու
հացը: Կոստան քեռին պատկերացրեց, վոր անտառը
նրանց գետնափոր, ցեխապատ տնկերից ել դուրս կրե-
ցի: Յերկհարկ, յեռահարկ տունը գյուղի համար չու-
տով շատ սովորական կդառնա և նրանց ներկայիս
բնակարանները կիրածալբավեն վրապես մառաններ —
նոր այդիներից ստացված անուշահոտ ըմպելիքներն ու
մրգերը պահելու համար:

Վերջում, այս բոլոր ապակորությունների տակ,
Կոստան քեռու ուղեղում մի միտք ևս ծագեց. ինքն,
արդյոք, մի հինգ տարի յել կաղըի³, կտեսնի⁴ այդ
բոլորը...

— Ակսո՞ս, —հանկարծ ինքնամոռացության մեջ,
բարձրաձայն ասաց Կոստան քեռին:

— Ի՞նչը ափսոս, — անմիջապես հարցրեց Սար-
գիսը, կարծելով, թե նա ինչ վոր բան է մոռացել:
Բայց Կոստան քեռին նրան չպատասխանեց և կրկին
տարվեց իր փոհերով:

Հանկարծ, լճի մյուս ափի բարձր բլրի ծայրից,
գեշերային մթությունը կխելտով, լավեց մեկի հուզիչ
և դուրեկան յերդի ձայնը, վորից պարզ կերպով լըս-
վում ելին միայն յերկու բառ:

Ազիզը ասն այ գյալին, այ գյալին...

Սարգիսն ու Կոստան քեռին յերկար ժամանակ
լուր ունկնդիրեցին հեռվից լսվող յերդը, վորը մթու-
թյան մեջ տարածվում եր ամենուր և թվում եր, թե
դա ինչ վոր մի կախարդական յերդեհոնի ձայն է, վոր
դյություն և լսողին: Հետո հենց վոր լուց յերդի ձայ-
նը, Կոստան քեռին նստած տեղից կանչեց բարձր.

— Արա հեյ, եղ ո՞վ ևս եղանեղ . . .

— Ե՞ղ, մե՞ր, ե՞ղ, — ձայնն արձագանքեց հեռու արերի մեջ, բայց յերգողը ձայն չհանեց: Մի քիչ շուր սպամելուց հետո, տեսնելով, վոր պատասխան չստացավ, կոստան քեռին կրկին անդամ կանչեց և այս անդամ նրա հարցի պատասխանը յեղավ նույն մարդու նոր, բայց ամելի դուրալի և աղղեցիկ յերգի ձայնը . . .

— Արա վորսկան Պուղի, եղ դու յե՞ս, — ձայնից իսկույն ճանաչելով հարցրեց կոստան քեռին:

— Յես եմ, Հարունց կոստան, բա ել ո՞վ ողեաք ա լինի:

— Մենակ ե՞ս, թե սատանաների հետ:

— Սատանաներին զրկեցի քեզ մոտ, հիմի մենակ եմ . . .

Թեպետ նրանք իրարից հեռու եյին դտնվում, բայց գիշերային անդորրի մեջ նրանց ձայնն այնքան պարզ, այնքան մոտ եր հնչում, վոր կարծես թե իրարից մի քանի քայլ (հեռու դտնվելիս լինեյին):

— Արա Պուղի, ես կես գիշերին ի՞նչ ես անում եղանեղ, — կրկին հարցրեց կոստան քեռին:

— Յեկել եմ ջրերի հետ զրուցելու, — պատասխանեց Պուղին և լուց: Քիչ հետո նրա ձայնը լսվեց ավելի հեռվից և ավելի թույլ, բայց այդժամանակ լուսնի շողերի տակ յերեվաց նրա մութ ստվերը, վոր բլուրների ուսից մեկնված՝ գնում եր ով դիտե թե ուր:

Սարգիսն ու կոստան քեռին կրկին ամփոփվեցին իրենց խոհերի մեջ: Այդ ժամանակ Սարգիսը նկա-

տեց, վոր լճի վրա թեվատարած պտտվում և մի թոշուն: Սարգիսը նա ճերմակ թոշուն ե՞ր, թե լուսնի շողերի տակ եր այդպես յերեվում, — Սարգիսն այդ չպիտեր: Այդ մասին նա հարցրեց կոստան քեռուն: Ծերունին կկոցեց աչքերը, առաջ նայեց, բայց միայն թոշունի շվաքը տեսավ՝ լուսնազոծ ջրերի վրա պտտվելիս: Իսկ ինքը թոշունը՝ չեր յերեվում:

— Հրեն, այ, նստեց լճի պատի վրա, — ցույց տվեց Սարգիսը, — այ, հիմա թռավ, թեվով խիեց ջրին, ելի բարձրացավ . . .

— Դա յերեվի նոր թոշուն ե. եղ տեսակ թոշուն մեղ մոտ չի յեղել, — ասաց կոստան քեռին և կրրկին լուց:

Հեռալից, բարձր սարերի ուսից, յեկավ մեզիկ զերիյուռը: Կոստան քեռին սթափվեց:

— Էսիր, Սարգիս, դու հիմի ամենից շատ ի՞նչ կուզենայիր, — հանգիստ, ծանրախոհ տոնով հարցրեց կոստան քեռին:

Սարգիսը մի պահ զարմացավ, թե ինչու յե կոստան քեռին այդպիսի հարց տալիս:

— Իրեն ինչ, թե այս բողեյիս ամենից շատ յես ինչ կուզենայի, — իր ներսում հարցրեց Սարգիսը, բայց միաժամանակ սկսեց մտածել նաև նրա հարցի մասին: Իսկսպես, հիմա նրան ամենից շատ ի՞նչ է պակսում: Մի պահ նրան թվաց, թե իրեն վոչինչ ել չի պակսում. ինչ վոր հարկավոր ե նրան՝ կա:

— Իսկ յես, Սարգիս, — տեսնելով, վոր նա վարանում ե, չի իմանում ինչ պատասխանել, կամացուկ ասաց կոստան քեռին, — յես կուզենայի հինգ, միայն հինգ տարի յել աղրել . . .

Սարդիսը զարմացավ : Ի՞նչ մեծ բան է Կոստան
քեռու ուղածը . այդպիսի բանն ել մարդու մտքով
կանցնի :

— Գիտե՞ս ինչու յեմ այդպես ասում , — Սար-
դիսի լոռությունը տեսնելով , իր միտքը բացատրեց
ծերունին , — Հկարծես , թե մահից եմ վախենում :
Զե՞ , եղ գատարկ բան ե : Միայն թե ապրել եմ ու-
ղում : Հետաքրքիր ե չետաքրքիր այդ բոլորը : Ի՞նչ
ես կարծում , մարդ յոթանասուն ու վեց տարի ապ-
րի , տեսնի անթիվ զրկանքներ , չարչարանքներ , տան-
չանքներ . ապրի տղիսության , խավարի մեջ , հազար
ու մի հալածանքների , անարդանքի՝ յենթարկվի և
վերջապես , այդ բոլորից հետո հասնի յերջանկու-
թյան դուռը , բայց վեր ընկնի ու կես ճանապարհին
մեռնի , իր սեփական աչքերով չկարողանա տեսնել
այն բարիքները , վորին սպասել ե իր ամբողջ կյանքի
ընթացքում , վորին ձգտել ե շարունակ , ինչ յերա-
դել ե գիշեր ու ցերեկ ...

Սարդիսը փորձեց կոստան քեռու ասածների մա-
սին դատել հասունացած մարդու հայացքով , այլ վոչ
թե յերիտասարդի , վորը մահը համարում ե վորպես
մի անխուսափելի ճանապարհորդություն , վորը պետք
է կատարեն աշխարհ յեկող բոլոր մարդեկ , բացի
իրենից : Փորձեց նա կոստան քեռու ասածները հաս-
կանալ ավելի շուտ զգացմունքներով , քան թե դա-
տողությամբ , սակայն այնուամենայնիվ ելի չկարո-
ղացավ իր ամբողջ խորությամբ ըմբռնել ծերուկի
իղձը , վորը յերազում ե գեթ հինգ տարի յել ապրել ,
իր աչքերով տեսնել այն բոլորը , ինչ տարիներ շա-
րունակ չոչափել ե միտքը ...

Սարդիսի միտքն այդ հարցի վրա չկարողացավ
յերկար կանգ առնել : Նա սկսեց մտածել այն մասին ,
թե ինքն ինչ կցանկանար :

— Զե՞ , կոստան քեռի , — վայրկենական լուս-
թյունից հետո ասաց նա . յես ուղում եմ միայն մի
բան . հենց մի անգամ մոտիկից տեսնել ընկեր
Ստալինին , յերկու բռնկ հետը խոսել , ձեռքը պինդ
սեղմել և ուրիշ վոչինչ ...

— Հա՞ , — զարմացած բացականչեց կոստան
քեռին և ախսոսաց , վոր առաջինն ինքը չասաց այդ
բանը : Զե վոր նա յեվս մինչ այդ բազմաթիվ ան-
գամ մտածել ե այդ մասին , անքուն գիշերներ և լու-
սացրել Ստալինին տեսնելու մասին մտածելով , ան-
գամ խոսել ե զանազան մարդկանց հետ , խորհուրդ-
ներ և հարցըել , թե ինչպես կարող ե իր մտադրու-
թյունն իրականացնել , զանազան ծրագրեր ե քաշել
և այժմ հանկարծ Սարդիսը , այդ պստիկ անող-
տանը , վորը չորս անգամ փոքր ե իրենից , ավելի
չուտ ասաց այն , ինչ վոր կցանկանար ինքը՝ կոստան
քեռին ասել ամենից առաջ ...

Բայց կոստան քեռին իրեն չմատնեց և վոչ ել
շփոթվեց : Նա արտաքուստ հանգիստ , ներքուստ խո-
րապես սկսեց միայն այդ մասին մտածել :

Այս անգամ լճի վրա յերեաց յերկու թռչուն :
Նրանք միասին պտույտներ ելին կատարում ջրերի
վրա , թեվերով խփում իրար , աշխույժ ծվծվում ,
նստում լճի պատերի վրա և զարմացած նայում
նրա ջրերին :

— Սրանք միանդամայն նոր թռչուններ են , մին-
չե հիմա մեր կողմերում չեն յեղել , յերեղի լճի ջր-

բերի վրա յեն յեկել : Դեռ ինչքա՞ն նորություններ կը-
լինեն . . .

Գիշերն արդեն կիսվել էր : Հեռվից զալիս եր
քամին, որորում լծի ջրերը և նորեկ թռչունների
ձայնին միանում եր կոհակների ծփոցը :

Կոստան քեռին վոտքի կանգնեց :

— Ուշ ե, հարկավոր ե տուն դնալ :

— Բա վորսկանը : Զսպասե՞նք նրան :

— Չե, նա հմի հարամիների հետեվից ե ընկել,
մինչեւ արեվածագ ել հետ չի դա, — կատակեց
Կոստան քեռին և առաջ ընկալ :

Վերադարձին նրանք վոչինչ չխոսեցին : Յերկուան
ել լուս քայլում եյին կամաց, համը քայլերով : Այդ-
պես յեկան նրանք, մինչև յերեվացին գյուղի տները :
Եյլտեղ կոստան քեռին քայլերն ավելի դանդաղացը-
րեց : Նրա համար, ըստ յերեսութին, ավելի բավ եր
դրսում մնալ, չնչել մաքուր ոդը և յերկար, յերկար
խորհել . . .

— Հինգ, հինգ տարի յել ապրեյի . . . մտախոչ
ասաց կոստան քեռին և Սարգսի յերեսին նայելով
ավելացրեց — և մեկ, հենց մեկ անդամ ել տես-
նեյի . . .

— Հա, կոստան քեռի, — նրա միտքը հասկա-
նալով անմիջապես ընդհատեց Սարգսը, — հենց
միայն մեկ անդամ մոտկից տեսնեյի ընկեր Ստալինին,
յերկու բոլք հետը խոսեյի, ձեռքն ամուր սեղմեյի
և ուրիշ վոչինչ . . .

ԱԶԳԱԿԱՆԸ

Դուռը բացեց վարյան — Ղազարի կինը :

Շեմքի վրա տեսնելով իր ամուսնու հորեղբար
տղային, նա մի պահ այլայլից, ակնապիչ աչքե-
րով նրան նայեց և վոչինչ չկարողացավ ասել :

Ուղիղ տասնհինգ տարի վոչ մի լուր, վոչ մի
նամակ՝ և հանկարծ — ահա նա ինքը դեմ առ դեմ
կանդնած :

— Խուրչուդ իվանիչ . . .

— Զեյթ սպասո՞ւմ . . .

— Դե ներս յեկ, ներս յեկ տեսնենք ես վո՞ր խա-
չիցն ե . . .

— Վահ, դու հալա խաչերին հավատում ե՞ս :

— Եհ, Խուրչուդ իվանիչ, դու ելի են կատակ
անողն ես մնացել :

— Իսկ ինչո՞ւ պետք ե փոխվեյի վոր :

— Դե ներս յեկ, ի սեր աստծո, պատմիր տես-
նենք ես ինչպես . . .

Խուրչուդ իվանիչը ներս մտավ : Նա արտաքուստ
իրոք վոր բնավ չեր փոխվել : Գնայած պատկառելի
հասակին, նա մնացել եր ելի այնպես, ինչպես տեսել

Եր Վարյան տասնհինգ տարի առաջ: Ճիշտ ե, թե
մարմով մի քիչ նիհարել եր, բայց աչքերի փայլը,
թավ հոնքերը, կլոր դեմքն ու լայն ճակատն ելի
նույնն եյին — վառ ու զրավիչ:

Սենյակում նա իրեն հատուկ յեռանդով հանեց
վերարկուն, խկույն դտավ կախելու տեղը և մինչև
Վարյան աթոռ կառաջարկեր նրան, նա ինքը մի ա-
թոռ քաշեց տակը և նստեց սեղանի մոտ:

— Դե պատմիր տեսնենք, Խուրչուդ իվանիչ:

— Վեց որ ե, ինչ քաղաքումն եմ. գործով ևմ
յեկել: Գնալու յեմ այսոր յերեկոյան: Ասացի տես-
նեմ դուք ինչ եք անում, վոնց եք ապրում:

— Ի՞նչ ասեմ, լավ բարեկամներ եք — շինծու
տոնով ասաց Վարյան. — Ելի հետաքրքրվում եք իրա-
րով:

Խուրչուդ իվանիչը նրան չպատասխանեց:
Վարյայի խոսքերն ստիպեցին նրան լուրջ մտածել:
Խոկ նրա ըսությունը տեսնելով՝ Վարյան շարունա-
կեց.

— Եղան ե ելի, տասնհինգ տարի յե իրար չեք
տեսել, իրար հետ վոչ մի կապ չեք ունեցել և հիմա
վեց որ ե մեր քաղաքումն ես դտնվում, հորյեղբորդ
տղային, նրա ընտանիքը նոր ես մտաբերում:

— Վարյա, աշխարհն ե մեղավոր, մենակ մենք
չենք այդպես:

— Լավ ե, ամեն մի մեղավորի փոխարեն աշխար-
հին մեղադրել. Եղ սկի վատ չի: Յեղբայր, թո՞ղ այդ
բոլորը, դուք հենց միշտ այդպես սառնասիրտ եք յե-
ղել իրար հետ: Առաջ ի՞նչ եր: Են ժամանակ ել ա-
միսներով իրար տուն չեցիք գնա, իրար յերես չեցիք

ահսնի, վոչ մի անդամ իրար հետ քաղցր խոսք չե-
յիք փոխանակի:

— Դե լավ, Վարյա, հին դարմանը քամու չեն
տա: Ավելի լավ կլինի ասես, թե Ղաղարն ուր ե, ուր
են յերեխաները:

— Ղաղարը չուտով գործից կտա: Նա հենց քիչ
առաջ զանդ տվեց: Ավելի լավ ե դու պատմիր:

Նրանցից յուրաքանչյուրն ուղում եր ավելի շատ
հարցեր տալ, ավելի շատ լսել, քան թե պատմել:
Տասնհինգ տարի իրար անտես, իրարից հետու — և
սրաով, և տարածությամբ, այժմ անսպասելի կեր-
պով նրանք հանդիպել են և հանկարծակի բորբոքվել
ե ինչ վոր անձուկ մոտկություն: Նրանք ուղում են
այդ տարիների ամբողջ պատմությունն իմանալ
միանդամից, լսել մանրակրկտ կերպով ամեն դեպքի
մասին, սակայն վոչինչ ել չեն կարողանում պարզել.
առատ խոսքերի փոխարեն յերեան են դալիս միայն
դգացմունքները, խոկ ամեն ինչ մնում ե հորդ զգաց-
մունքների քողի յետեռում:

1920 թվին, Կարմիր բանակը քաղաքը դրավելու
հենց առաջին որը, Խուրչուդ իվանիչն իր ընտանիքի
հետ թողել եր այդ քաղաքը, իր բազմահարկ տները,
նավթահորերը, բոլոր ունեցվածքը և փախել այլտե-
ղից: Հետագայում պարզվել եր, վոր նա գնացել և
նոստով և այնտեղ մտել ե ծառայության: Այդ լուրը
նրանց համար վորքան զարմանալի յեր, նույնքան ել
հետաքրքիր եր, թե այդ հղիացած բուրժուան, ա-
զահ կապիտալիստն ինչպես պետք ե աշխատի
խորհրդային կարգերում, խորհրդային հիմնարկում,

և ապրի միայն ոռճիկով : Սակայն հետզհետե արք հանգամանքն ել անուշադրության մասնվեց և նրանցից յուրաքանչյուրն իր գործին՝ չեր ել հետաքըրքըրգում, թե ով ինչպես ե ապրում :

Ավելի ուշ, տարիներ անց, ելի Ղաղարն եր զնացող – յեկողից հարցնում հորյեղբոր տղայի մասին, հետաքըրքիում նրա ընտանեկան վիճակով, բայց այդ բոլորն ել լոկ հետաքըրքությունից այն կողմը չեր անցնում :

Յեվ այդ անսպասելի հանդիպման ժամանակ կարծելով, վոր նրա համար կարող ե հետաքըրքիր լինել, Վարյան նախ պատմեց իրենց մասին, ասաց, վոր աղջիկներից յերեքն արդեն ամուսնացել են, Աշոտն ավարտել և Համալսարանը, մասնագետ ե գառել և աշխատում ե Ղուրայում : Փոքր աղջիկը, վորին Խուրչուդ Խվանիչը բոլորովին չեր տեսել, սովորում ե և դպրոցից դեռ չի յեկել : Իսկ Ղաղարը . . .

— Ղաղարի մասին ինքս գիտեմ — ընդհատեց Խուրչուդ Խվանիչը — նա արդեն հայտնի մարդ է : Նրա մասին բոլոր թերթերն են գրում : Յերեկ կուսակցական ել է :

Վարյան ուղեց ինչ վոր ասել, բայց հնիկ երեւական զանգը առանց պատասխանելու նրա հարցին, նա գնաց դուռը բանալու :

— Վահ, ինչ ես ասում — դրսում լսվեց Ղաղարի ձայնն ու չանցած մի վայրկյան, իսկույն ներս մտավ ինքը :

— Զեյիր սպասո՞ւմ, Ղաղար Վարդանիչ, — վորընկայա դիմավորելով հորյեղբոր տղային ասաց Խուրչուդը :

— Սկի աչքերիս չեմ հավատում, ուր մնաց թե սպասելի, — ժպտալից գեմքով պատասխանեց Ղաղարը և համբուրվելու մտադրությամբ մոտեցալ հյուրին, բայց վերջինիս ինչ վոր անտարբեր դեմքը տեսնելով՝ ինքն ել թուլացալ և պարզեց միայն ձեռքը :

— Իսկ ինչո՞ւ յես գործից այսքան ուշ գալիս :

— Առանձնապես ուշ չի :

— Ասենք ճիշտ է, հաշված ժամերով աշխատել՝ այդ ձեզ համար չի ասված, — կարծես թե անտարբերությամբ ասաց Խուրչուդը Իվանիչը, բայց Ղաղարը նրան հակածառեց :

— Հաշված ժամերով յես միայն քո հանքերումն եյի աշխատում, — սուր իրոնիայով ասաց Ղաղարը, վորից Խուրչուդը խայթվեց, ուզեց նույնպիսի սրությամբ պատասխանել, բայց իրեն զսպելով, թե աւելի հարմար խոսք չդանելով միայն ասաց . . .

— Հոգուդ մեղք ես անում :

— Դե եղ խնդիրն արդեն մեզ չատ հեռու կտանի և արցին վերջ տալու նպատակով ասաց Ղաղարը, վորին միջամտեց նաև կինը . . .

— Զեր տունը չքանդվի, տասնհինգ տարի իրար չեք տեսել, հիմա յել խոսելու բան գտա՞ք :

— Վարյա, այդ նշան է, թե Ղաղար Վարդանիչն իրոք վոր տարված է որվա հարցերով : Մարդկ, ըստ յերեւյթին, միանգամայն նոր հոգերանության տես է, իզուր չե, վոր չքանշան են տվել, անունը միշտ հիշում են :

— Աշխատանքը մեզ մոտ իզուր չի կորչի : Խուրչուդը լոեց . . . նա մի ողահ ուշադրությամբ

նայեց Ղաղարին, ապա զլուխը կախեց և այսպես, կարծես թէ անտարբերությամբ, ասաց.

— Դա՛, ասում ես աշխատանքն իզուր չի անցնում ելի:

Ղաղարն իր խոսքը չկրկնեց: Նա զգաց, վոր այդ հարցի պատասխանն իր հորյեղբոր վորդին վաղուց ունի պատրաստ: Սակայն Խուրչուզը չանդրադամալ, նա միայն ավելացրեց.

— Ինչ ասեմ, Ղաղար, մենք տարբեր տեսակ ենք մտածում:

— Մենք միշտ ել տարբեր տեսակ ենք մտածել...

Խուրչուզ իվանիչը լոեց: Նրան զուր չեկան նրա վերջին խոսքերը: Այդ նկատեց նաև Վարյան և կշտամբեց ամուսնուն:

— Ա տնաշեն, սա յիշ հո ժողով չի. Հենց միշտ եղան ե, — այս անդամ ել զեսպի հյուրը դառնարկ՝ շարունակեց նա.—արդեն վաթսունի մոտ մարդ ե, բայց ջահել ժամանակվա բնավորությանը թարու չի տալիս:

— Հա, Ղաղարը ջահել ժամանակն ել մի քիչ համառ մարդ եր:

Այս անգամ Ղաղարը չուզեց պատասխանել: Նա մտքում վորոշեց, վոր հարկավոր և անպայման խոսակցության նյութը փոխել:

Վարյան զնաց խոհանոց կերակրին նայելու: Ղաղարը մի պահ լուս նստելով Խուրչուզի մոտ, ինքն ել զուրս յեկավ և զնաց գինի բերելու:

Խուրչուզ իվանիչը մենակ մնալով՝ սկսեց ուշադրությամբ սենյակի իրերին նայել: Նա աչք ածեց

այն սենյակը, վորտեղ ինքն եր նստել. այդ սենյակից կունալով դիտեց նաև մյուս յերկու սենյակը, վորոնք կահավորված ելին շատ պարզ, մաքուր և առանց վորեւե ավելորդ բանի և քիչ հետո, հենց վոր Ղաղարը վերադարձավ, Խուրչուզը հարցրեց:

— Ղաղար, ասում ես, թէ հիմա աշխատանքն ի զուր չի անցնում: Բա լավ, եղքան վոր աշխատել ես, ի՞նչ ես յետ զցել... ձիշտն ասած, յես մինչեւ եստեղ զալը, լսածներիս համաձայն, կարծում ելի, թէ կարդին տուն կունենաս, կահավորված սենյակներ, վորովհետեւ դու համարվում ես ժամանակիս անվանի մարդկանցից, իսկ անկանի մարդկանց բնակարանն այլ կերպ ել չպետք և լինի: Իսկ քո բնակարանում...

Նա ել չչարունակեց, համարելով, վոր ասածն ել լրիվ հասկանալի յէ: Բայց նորեկի ակնարկը խիստ կալավ Ղաղարի ինքնասսիրությանը: Նա թեղեկտ արտաքուստ այդ ցույց չտվեց, բայց ներքուստ սաստիկ վիրավորվեց:

— Լավ տուն ասելով դու յերեկի հասկանում ես ոխտը սենյակ, ոխտը դարավաշ ել մեջը ծառայելիս, ինչ մի ժամանակ զու ունեյիր: Իսկ զա մեզ հարկավոր չե. ինչ վոր պետք ե, այն ել ունենք: Շատ բանի մասին մենք չենք մտածում...

Պատկերը փոխվեց: Ղաղարի վիրավորանքն ակներեկ դառավակ: Նրանք թեղետ սկսեցին հետո ոյլ ինչիրների մասին խոսել, բայց զրույցը կարսել, հարց ու պատասխանից այն կողմը չանցավ:

Յերբ նստեցին ճաշի, Ղաղարը լցրեց զինին, բարձրացրեց բաժակը և ուզեց ինչ վոր բան ասելու

Ծայց բերանը դեռ բաց չարած, հնչեց հեռախոսի ղանգը: Նա գինու բաժակը նույնությամբ վրեց սեղանի վրա և մտածավ հեռախոսին:

— Հա, յես եմ, ինչո՞ւ: Այս, վոչ մի դեպքում, Հենց ես բողեջիս դալիս եմ...

Մինչ նա խոսում եր հեռախոսով, Խուրչուկն ու վարյան ուշադրությամբ հետեւում ելին նրա դիմադերի արտահայտություններին: Հեռախոսի փողը կախելուց հետո, կինն իսկույն հարցրեց.

— Ելի ի՞նչ կա...

— Պետք ե շտապ կերպով հանքը դնալ:

— Ինչո՞ւ:

— Անհրաժեշտ է. ստիպված պետք ե յերկուսով հաշեք:

— Խուրչուկ Խվանիչն այսոր յերեկոյան դնում է:

— Հա՞:

— Անպայման, —վարյայի ասածը հաստատեց Խուրչուկը՝ տոմսն արդեն վերցրել եմ: Յերեկոյան ժամը 8-ի գնացքով:

— Եղ զեպքում կտեսնինք կայարանում: Իսկ հիմա յես չեմ կարող ուշանալ:

Նա առանց վերջնական հրաժեշտ տալու իր աղդականին, հագավ բանվորական հագուստն ու շտապ կերպով տնից դուրս յեկավ:

Ելեկտրաքարշում վոչ մի բանի մասին կոնկրետ չեր մտածում: Նա ուզում եր վորքան կարելի յիշուտ հասնել հանքը և անձամբ ստուգել պատահածը:

Վերջին չորս տարում նրա փորած նավթահորե-

րից վոչ մեկումն ել վոչ մի խոտորում, վոչ մի ծըռում չեր յեղել: Նա հորափոր վարպետների մեջ հաշակված եր վոչ միայն վորպես արագ փորող, այլև վորպես որինակելի, իր գործը հրաշալի իմացող վարպետ: Դրա համար ել այդ պահին նա չառ անհանգիստ եր, մտածում եր, թե կարող ե անհաջողություն պատահած լինել և նրա վերջին տարիների փայլուն աշխատանքների վրա մի ուերիծ կմնա:

Քանի մտենում եր նավթահանքին, նրա անհանգստությունն ալելի յեր չատանում: Բայց յերբ տեղ հասավ, պարզվեց, վոր վոչ թե խոտորում, այլ գաղեր են համարվել փորվող շերտերում և մեծ վլտանգ են սպառնում կատարված աշխատանքները տապալելու:

Վորպես հմուտ վարպետ, հորն ուշադրությամբ դիտելուց հետո, Ղազարն իսկույն հասկացավ, թե կուտակված գաղերն ինչպես պետք ե ցըել:

Անալարտ հորում առաջացած ժայթքումների մասին բանվորները նախորոք հայտնել ելին նաև գըրուպայի վարիչին և ինժեներին: Բայց մինչև նրանք տեղ կհասնելին, Ղազարն արդեն դործի անցավ:

Հանքի վարիչն ու ինժեները գալուց հետո հավանություն տվին նրա ձեռնարկած աշխատանքին: Այդ ամբողջ որը, նույնպես վողջ գիշերը, նա լարվածորեն աշխատում եր կուտակված գաղերի մեկուսացման վրա:

Առավոտյան, յերբ արելի ուղղաձիգ շողերը բեկվել ելին բուրգի բարձր կատարին, միայն այդ ժամանակ Ղազարն գգաց, վոր ամեն ինչ արդեն բարեհաջող եւ և հորին ապառնացող վոչ մի վտանգ չկա ու

դուրս յեկալ բուրպից, այնտեղից ել մի քանի քայլ հեռու բուդիայի մոռ կանգնեց, հայացքը հառեց դեպի արևելք և հանգիստ կերպով խորը չնշեց: Նա ըլուզաց առավոտվա թարմ, բայց նավթաբույր ողի աղղեցությունը, վորին նա վաղուց ի վեր ընտելացել եր իր բարձամյա աշխատանքների ընթացքում:

Թարմ ողի աղղեցությունից նա իր յերակների մեջ ինչ վոր թմրություն զգաց և ուղեց նստել բուդկայի առաջ զրած նստարանի վրա, բայց արդ ժամանակ լսելով հեռախոսի զանդի ձայնը, մտայի բուդկան և վերցրեց հեռախոսափողը:

— Այս, յես եմ, — հեռախոսի փողն ականջին մոտեցնելով կրկնեց նա, — Հենց պատրաստվում եյի դաւու: Հա՞, գնա՞ց... ի՞նչ անեմ, չե, վնաս չունի...

Կինն եր անից զանդ տալիս: Նա հայտնում էր, վոր Խորշութ իվանիչն արգեն զնացել է: Նա կայարանում մինչեւ վերջին վայրկյանն անհամբերությամբ սպասել և Ղաղարին, բայց նա չի յեկել և գնացել ե իր աղղականից դժուհ...

— Եհ, թող զնում ե զնա, հոգ չե: Յես վաղուց եյի մոռացել նրան, ինչպես և ինքն ինձ: Ի՞նչ աղղականներ ենք յեղել վոր:

Յել Ղաղարը մտաբերեց, թե առաջ իր աղղական կոչվածն ինչպիսի վերաբերմունք ե ցույց տվիլ դեպի ինքը:

Գյուղից նոր եր յեկել: Աշխատելու վոչ մի տեղ չեր գտնում, Խուրչուղն ել չեր ուղում նրան ընդունել իր նավթահորերում:

— Մի կարգին գործ չես կարող անել, վոր գործի դնենք, իսկ աեղագործ բանվորության ուղարկելն

ել անհարմար ե, — այն ժամանակ ասում եր Խուրչուղիվանիչը — հանքերում կիմանան, վոր Խուրչուղի իվանիչի աղղականը նավթ քաշող ե...

Հետո Ղաղարն ստիլված յեղալ ուրիշ տեղ գործի մտնել — հենց Խուրչուղի իվանիչի նավթահորի մոտ, մի ուրիշ կապիտալիստի հողամասում:

Հաճախ պատահում եր, վոր Խուրչուղը կառք նստած գալիս եր այդ նավթահորերը, հանդիպում նավթատիրոջ հետ, անցնում Ղաղարի մոտով և բարե անգամ չեր ուղում տալ, վախենալով, վոր կարող են խմանալ, թե հայտնի կապիտալիստ Խուրչուղը իվանիչը բանվոր Ղաղարի աղղականն ե:

Այս հիշողությունների ընթացքում վարպետ Ղաղարն ավելի յեր բորբոքվում, նա կենդանի կերպով վերհիշում, պատուի վայրում եր այն դժվարությունները, վոր կապիտալիստ աղղականն եր ցուցաբերում իր նավթահորերի բանվորների նկատմամբ:

Ելեկտրական գնացքը հուժկու թափով սլանում եր գեղի քաղաք, իր մեջ բերելով հերթափոխ բանվորներին: Վագոններից մեկում նստել եր Ղաղարը, աշերը հատել աստուհանից դուրս և գնացքի արագությունից անհամաշափ կերպով շարժվում եր գըրումիւր, իրար տալիս անցյալի տիսուր մտքերը, իր հարաբատ հորիշղբոր վորդու պատճառած դաժան տանձանքների մոայլ պատկերները, վոր տարիներ շարունակ մխացել են նրա սրտում: Նա արգեն մոռացել եր այդ բոլորի մանրամասնությունը: Իր չիշողության մեջ միայն նրանց ընդհանուր Փոնն ե մնացել: Սակայն այդքանն ել բալական ե բորբոքելու նրա մտապատկերները, սիրտը լցնելու դառը ցասումով:

— Հետ ասում ել ե, թե ինչ ես յետ գցել, —
սրտի խորքում ինքն իր հետ վիճելով ասում ե Ղա-
ղարը, — յես անուն եմ յետ գցել, յես պատիվ եմ յետ
գցել, ահա այս եմ յետ գցել — այդ ասելով նա նայեց
իր կրծքին փառավոր կերպով փակցրած կարմիր շքո-
նշանին — իսկ դու ի՞նչ ես յետ գցել, Վանեսի տղա
Խուրջուդ, Ինքան աշխատել ես, թալանել մարդկանց,
ծծել հարյուրավոր մարդկանց արյունը, դու ի՞նչ ես
յետ գցել: Իմ մասին խոտում են մարդիկ, իմ մասին
գրում են լրագրերում, իմ կարծիքի հետ հաշվի
յեն նստում, իսկ դու ո՞վ ես, վո՞րն ե քո պատիվը,
ո՞վ քո մասին քաղցր հիշողություն ունի...

Ենք նա ակամայից ուզեց մտաբերել, թե ինչ մի
գրում ե կարդացել, վոր ասված ե կապիտալիստների
մասին, թե նրանք կմեռնեն և վոչ վոք նրանց մասին
քաղցր յերդ չորինի... .

Ելեկտրական գնացքը քանի մոտենում եր քաղա-
քին, վարպետ Ղաղարի մտապատկերներն այնքան
ալելի ելին վառվում, նա ավելի յեր վոգեվորվում իր
մտածմունքներով:

— Տասնհինգ տարի յե մեր կարգերում ես առ-
րում, — մտքում իր խոսքերն ուղղելով դեպի ազգա-
կանն ասում եր նա, — բայց ելի նույն կապիտալիստն
ես մնացել: Դու իմ բարեկամը չես յեղել և չես ել
լինի... Ղաղարը հալալ քրտինքով ե հայ վաստակել,
Ղաղարը խորհրդային կարգերում ե մարդ դառել:
Խորհրդային կարգերն են միայն Ղաղարի պես մարդ-
կանց յեռանդ ներշնչում: Վարդանի տղան լավ ե
հասկանում իր լավն ու վատը, նա ճիշտ ե գտել իր
ճանապարհը և այդ ճամբով ել կդնա մինչեւ վերջ...

Յերբ ելեկտրական գնացքը կանգ առավ կայարա-
նում, վարպետ Ղաղարն իշավ վագոնից մի քիչ շիկ-
նած, կարծես հենց նոր թողնելով ճառի ամբիոնը:
Նա քայլեց դեպի տուն ավելի վմտահ, ավելի ա-
ռույր, վորպետ մի խոշոր հաղթանակից վերապառնու-
թիւ լիներ: Այդ պահին նա իրեն ավելի թեժել եր
դգում, սրտով հանդիսաւ, ազատված շատ մեծ գառը
ժաղձից:

ՊԱՏԱՍԽԱՆԸ

Առաջին գիշերը վոչինչ չեր կարողանում մտածել: Հուզմունքից խեղդվում եր կոկորդը: Արցունքներն եւ չեյին գալիս ։ Վոր գոնե դրանից մի քիչ սիրութ հանգստանար:

Յերեխան յերկար լաց լինելուց հետո՝ քնել եր մոր կողքին: Մայրը տիսուր, նայում եր քնած յերեխայի ձերմակ դեմքին և դրանից ավելի յեր հուղվում:

Մյուս սենյակից լավում եր յեղբոյլ կնոջ ձայնը, վորն իր ամուսնու հետ կալելով ասում եր.

— Ես գլուխ չունեմ, յես չեմ կարող ամեն որ նրա լակոտի մզկտոցը լսել, մենք եւ ենք կին, բա ինչո՞ւ չենք մեր ամուսնու խոսքից դուրս գալիս: Թողքիթը վեր չցցի, հերսը մի քիչ իւնեն պահի և տանը վեր ընկնի. յես գլուխ չունեմ:

— Այշի գե բոլա յե, ի՞նչ ես սելավի նման վըրփրել, քեզնից դուրս յեկել. բա քույրը վոր նեղն ընկած վախտը յեղբոր մոտ չգնա, եւ ո՞ւմ մոտ պետք է գնա, — կնոջը կշտամբելով ասում եր ամուսինը, բայց կին ելի չեր հանգստանում: Նա հուզված կերպով

այս ու այն կողմ եր գնում և առանց ընդհատելու, անվերջ խոսում:

Մյուս սենյակից այս բոլորը լսում եր Գյուլիսարը և սիրուն ամելի յեր հուզվում:

Գյուլիսարը կոլտնտեսության կոմյերիտականների բրիգադավարն եր:

Մեկ որ Զուլալն իմացավ, թե այդ որը կինը վորտեղ և աշխատառում, գնաց նրա մոտ: Կեսոր եր: Գյուլիսարի բրիգադն աշխատանքից վերադարձել, վոսպի արտի վայրի տանձենու տակ նստած՝ հաշում եյին:

Գյուլիսարը նստել եր մեջտեղ, իսկ տղաները նրան չըջապատած, աշխույժ զրուցում, կատակում եյին: Զուլալը հեռվից տեսավ այդ և սիրուն իսկույն պրդտորվեց: Նա ուզեց հենց այդտեղից եւ վերադառնալ, չմոտենալ նրանց, բայց բրիգադի տղաներից մեկը տեսավ նրան և իսկույն ասաց.

— Ահա, տղաներ, Զուլալը մեղ մոտ ե գալիս:

— Յերեղի գալիս ե մեղ ոգնելու, — ամելացը եց մի ուրիշը:

Զուլալն ստիպված մոտեցավ նրանց, բայց վոչ մի խոսք չասաց:

Կինն անմիջապես ամուսնու դեմքի վրա կարգաց նրա ներքին հուզմունքը, սակայն ինքն եւ լուց:

Քիչ հետո Զուլալը կնոջը մի կողմ քաշեց, ցածր ձայնով, բայց վճռականորեն ասաց.

— Դու եւ չպետք ե աշխատես:

Կինն վոչինչ չասաց. Նա լուց, իսկ ամուսինը շարունակեց.

— Մենք տանն ել հաղար ու մի գործ ունենք, յերեխին պետք են նայել. պառավը քեզ համար յերեխա չի պահելու:

Պառավը Զուլալի մայրն եր: Զուլալն իզուր նրա անունն այլտեղ ավեց, վորովհետև նա ուրախությամբ եր որն անցկացնում իր թոռնիկի հետ:

— Դու թող քո այդ հիմար կասկածները և կործիդ դնա, —վերջում ասաց Գյուլիսար և դնաց տղաների մոտ:

Այդ խոսքերից արյունը փափեց Զուլալի գլուխը: Մի պահ փակեց նրա լեզուն և չկարողացավ վոչ մի խոռք ասել: Այդպես լուր քիչ ապասելուց հետո, նա զայրացած հետ դառավ դեպի տուն և մտաւմ կայացրեց իր վճիռը:

Յերեկոյան, յերբ Գյուլիսար մտավ բակը, ամուսինը ձեռները գրպանում դրած, անհանդիստ կերպով այնտեղ շրջում եր: Կնոջը տեսնելուն պես ասաց.

— Սիրտ հովացա՞վ:

Կինն խկույն հասկանալով, թե ամուսինն ինչ ե ակնարկում, պատասխանեց.

— Սիրտս միշտ ել հով ե յեղել, նոր չպետք ե հովանա:

— Ինչ ե ուզում ես իմ սիրտը վառե՞լ:

— Իզուր ես կարծում, ընդհակառակը:

— Ուրեմն ել բրիգադի յերես դու չես տեսնի:

— Կաշխատեմ և կտեսնեմ:

Ամուսինն ել վոչինչ չասաց: Նա թողեց կնոջը բակում կանգնած և ներս դնաց:

Գիշերը նրանք իրար հետ վոչ մի խոսք չէին իրաւակեցին: Առավոտյան վեր կացան միսաին: Յերբ

Գյուլիսար պատրաստվում եր գործի դնալու, ամուսինը թեկից բռնեց:

— Ասացի, վոր գու տնից գուրս չես գնա:

— Կելազարվել ես, ինչ ե, ինչ ես լսել:

— Յես իմն ալբեն ատացի:

— Յես սկի չեմ ել ուզում լսել, — վճռականութեն ասաց Գյուլիսար, բակից գուրս յեկավ, սակայն Զուլալն իսկույն բռնեց նրան, ամուր քաշեց թեկից և հրելով՝ ներս գցեց:

Գյուլիսարն ապշել, տեղում կանգնել եր: Արդեն յերբորդ տարին եր, վոր նրանք ամուսնացել եյին, բայց նրանց մեջ գժգոհություն դեռ չեր յեղել:

Նրանք իրար գիտելին դեռ նախքան ամուսնաւը — կոմյերիտականներ եյին և միւնույն բջիջի անգամներ:

Գյուղում բոլորն ֆլ գիտելին նրանց սիրո մասին և շատերն եյին նախանձում: Յեվ ահա, հանկարծ, Զուլալն այդպես ե վարվում Գյուլիսարի հետ:

Գյուլիսարի կոկորդն ակամայից սեղմվեց, արցունքի կաթիլներն ինքնաբերաբ գլորվեցին:

— Զուլալ, ինչ ե, դու Փառաշ ե՞ս, յես ուզում եմ աշխատել, ինչո՞ւ յես արգելում, — արտասալից աչքերով ասաց նա, բայց ամուսինն անդրդվելի մնաց:

— Դու շատ բան ես ուզում, իսկ յես չեմ ուզում, վոր ատամներդ բանաս, ամեն պատահողի մոտ հըսնուաս...

Անմիջապես արցունքն անհետացավ Գյուլիսար աչքերից.

— Յեթե իմ ծիծաղը քեզ դուր չի գալիս, կարող ես վարվել ինչպես քո կամքն ե, իսկ յես կդնամ

գործի — հաստատ վորոշած ասաց Գյուլխամսը և բակից դուրս յեկավ:

Յերեկոյան, յերբ գործից վերադարձավ, Զուլան ել չթողեց նրան ներս մտնի բակը:

Կինը հրեց ամուսնուն, վոր նա հետ քաշվի, վորովհետեւ անցորդներն արդեն նրանց ելին նայում, բայց այդքանն ել բավական եր, վոր առանց այդ ել բորբոքված ամուսինն ավելի կատաղի:

Յեկ նա կարձրացրեց իր ուժեղ ձեռքն ու բռունցքըն ուժգնորեն իջավ Գյուլխամսի դիսին...

Գյուլխամս որովից, ընկավ գետնին: Ազմուկի վրա տնից դուրս յեկավ նրանց մեկ առարեկան յերեխան և որովելով մոտեցավ նրանց:

Գյուլխամսը յերբ աչքերը բաց արավ, նրա մոտ իր կեսուրն եր — Զուլալի մայրը և իր մանուկը: Նա վոտքի կանգնեց և առանց յերկար մտածելու զրկեց յերեխային ու բակից դուրս յեկավ:

Փողոցում նա միքիչ մտածեց, ուզեց ուզելով իր ընկերուհիներից մեկի մոտ դնալ, բայց մեկել վորոշեց, վոր ավելի լավ և յեղբոր տունը դնալ:

Իսկ գիշերը, յերբ յեղբոր կինն առաջին իսկ լուսկելից ակսեց գժողոհել, Գյուլխամս ավելի հուսահատվեց և արցունքի կաթիլներն առատ աղբյուրի պես սկսեցին հոսել:

Այդ գիշեր նա չկարողացավ աչքերը փակել: Հազար ու մի միտք տանջում եր նրան: Իսկ ամենից շատ նրան հուզում եր այն միտքը, վոր ինքն առանց շատ նրան հուզում եր այն միտքը, վոր ինքն առանց Զուլալի չի կարող ապրել, նրան շատ եր սիրում: Բայց յերբ հանկարծ պատկերացնում եր Զուլալին այն վերջին բոլեցին, իրեն բռունցքով խփելիս, սի-

րո վորխարեն սիրուը յասումով եր լցվում:

Դրանից հետո մի քանի որ նա գործի չդնաց աչքերը կապտել ելին, գլուխը պտտվում եր և չեր ուզում յերեխային յեղբոր կնոջ մոտ թողնել: Բայց հետո, յերբ կոլտնտեսության նախագահը նրան նախատեց, թե.

— Զուլալը կկարծի, թե եղ և, ել չես գնում գործի և քո թուլամօրթության վրա կհրձի: Դու պետք եւ ապացուցես, վոր իրավացի յես և կարող ես առանց նրան ել ապրել:

Կորոնտեսության նախագահի խոսքերը նրան վոգեռուեցին, նա նորից սկսեց գործի գնալ, բայց ուշը հետ եր, նա սպասում եր, վոր ամուսինը մի որ կդա, ներողություն կինդրի ու ելի հետ կտանի: Սակայն Զուլալն անողոք եր: Նա չեր ուզում թուլամորթ գտնվել, և «իր թքածը մեկն հետ լիզել»:

Անցավ բավականաչափ ժամանակ:

Գյուլխամսը յերեխայի հետ յեղբոր տնից տեղափոխվեց իր ամուսնացած քրոջ մոտ և հետզհետ սկսեց հաշովել իր նոր վիճակի հետ:

Նա ելի սպառական կարգով աշխատանքի յեր գնում և կոլտնտեսությունում նրա բրիգադն ամենաառաջավորն եր: Նրա հետ կատարված գեղքեց հետո բրիգադի տղաներն ավելի սիրալիր ելին վերաբեր վում դեպի նա, սիրելի ուշագրությամբ ելին լուս նրան:

Տարեկերջին կոլտնտեսության վարչության վորշմամբ Գյուլխամսի բրիգադը պարզեվատրուեց և բարձրացվեց կարմիր տախտակին: Գյուլխամսի անունը — վորպիս նվիրված, յեռանդուն բրիգադիրի —

բարձրացավ ամբողջ չըջանում: Նա արդեն չըջանի հայտնի մարդկանցից եր, նրա մասին գրվում և նը-կարը տպվում եր թերթերում:

Նրա մասին պատվող լուրերը գայթակղում եյին Զուլալին, նա արդեն խիստ զղջում եր իր արածից, բայց ամաչում եր այդ մասին խոստովանել:

Նա մեկ որ ել մորը խնդրեց, վոր անձամբ գնա Գյուլիսասի մոտ, նրան համոզի, բայց յերբ մայրը հայտնեց տղայի միտքը, Գյուլիսան ասաց.

— Ինչո՞ւ յես դու ասում, դու դիտես, վոր յես քեզ իմ աղիզ մոր չափ հարգում եմ: Ինքը լեզու չուն՞ի:

Մայրը վերադարձավ տղայի մոտ, հայտնեց նրա պատասխանը: Այդ հանդամանքը կրկին բորբոքեց Զուլալի ինքնասիրությունը:

— Թոքել եմ... տեսեք միտքը ուր և հասցրել...
* * *

Անցել եր ուղիղ մի տարի: Գյուլիսան ընտրվել եր յերիտասարդ կանանց Համբառդրեհմանան համա-գումարի պատվիրակուհի: Անրօնին բոսին, յերբ դնացք դեպի Բագու պետք ե շարժվեր, նա պատու-հանից տեսավ, վոր Զուլալը կայարանում քրտնա-թոր, ինչ վոր մեկին վորոնում ե: Նրանց հայցքնե-րը հանդիպեցին իրար: Գյուլիսան իսկույն նատեց տեղը, վոր չտեսնի նրան, բայց Զուլալը մոտեցավ գնացքին, ամաչկոտությամբ կանչեց պատուհանից:

Գյուլիսան ուղեց չպատասխանել, բայց մեկ ել անհարմար դդաց և գլուխը պատուհանից դուրս բե-րեց:

— Գյուլիսաս — դոդողյուն ձայնով ասաց Զու-

լալը, բայց այդ ժամանակ գնացքը շարժվեց: Զու-լալը ել չկարողացավ խոսքը վերջացնել, նա գնացքի հետ վազեվազ յեկավ և վաղորոք գրած իր նամակը ներս ձգեց վաղոնի պատուհանից...

* * *

Այս բոլորը շատ վստահությամբ ինձ պատմեց ինքը, Գյուլիսասը, Սարբին գյուղից յեկած պատվի-րակուհին: Նա վերջում ժպտալով նայեց ինձ, վա-րանոտ կերպով ձեռքը գրամանը տարավ և այնտեղից հանեց Զուլալի նամակը, վորն ահա դրում եմ այս-տեղ:

«Իմ կնողը, Գյուլիսասին, Զուլալից, նամակ: Յես լավ նամակ գրել չգիտեմ. ինչ վոր պետք ե զրեմ, այդ մի խոսք ե, սիրելի Գյուլիսաս, յես եսոր վանից կապահեմ ես կայտանում, վոր դու Բագվից վերադառնաս և մենք միասին մեր տուն գնանք: Իսկ մինչև հիմա վորքան նեղություն եմ տվել քեզ, քեզ-նից կնդունեմ կրկնակին:

Սիրոս քեզ լինի, քո՝ **ԶՈՒԼԱԼ**:
Զուլալի նամակը կարդալուց հետո, յես հացը բ Գյուլիսասից:

— Քո պատասխանը:
— Իմ պատասխանը... Իմ պատասխանը կլինի համագումարից վերադառնալուց հետո...

ԸՆՏԱՆԻՔԸ

Վավիկը կանգնեց դուսն չեմքում և մի քիչ շրփոթված նայեց հավաքվածներին։ Նա այդ պահին տանն արդքան մարդու չեր սպասում։

Հայրն այդ ժամերին սովորաբար տանը չեր լինում։ Նա ամեն որ ճաշելուց հետո պառկում էր, քիչ հանգստանում և կրկին գնում աշխատանքի, կամ ել վորմե տեղ՝ ժողովի։

Պապը, վոր մի քանի որով գործուզման եր յեկել Մոսկվա՝ նույնպես շատ քիչ եր լինում տանք։ Նա արդտեղ իր որվա աշխատանքները վերջացնելուց հետո հազիվ այցելում եր թանգարանները, ցուցահանդեսները, գնում եր ներկայացումներ և Մոսկվայում ապրող իր չորս գավակների, թոռների, հարսերի ու բազմաթիվ ծանոթ - բարեկամների, ընկերների հետ կուշտ զրուցելու համար շատ քիչ ժամանակ եր մը նում։

Իսկ այդ որը տանն եր վոչ միայն հայրը, պապը, յերկու հորաքույրերն իրենց ամուսիններուի, հորեղբայրը, այլև մի քանի մարդիկ, վորոնց վարիկը գեռ չեր ճանաչում։ Նա դուսն չեմքից նայում

եր հավաքվածներին ու չեր հասկանում, թե ինչ առիթով և կազմակերպիկ այդ ուրախ ճաշկերուցիթ։

Նա աչք եր տօնում հավաքվածներից մերթ մեկի, մերթ մյուսի վրա և աշխատում եր այդ բոլորից վորեւ բան հասկանալ։ Բայց այդ ժամանակ նրա ժաքի թելը կտրեց պապը։

— Ի՞նչ ես շվարել ու կանգնել չեմքում։ Ներս յեկ, պատմիր տեսնեմ աղօաց յիս, թե աղջիկ։

— Ե՛ս, պապիկ, դու յել քո ապ ու պապերի ձեփով ես խոսում — «տղա յես, թե աղջիկ»... Ի՞նչ տարբերություն կա տղայի և աղջկա մեջ, — պապի հարցից հետո ներս մտնելով ասաց Վավիկը, թեվատակի գրքերը գրեց հոր գրասեղանի վրա, մոտեցավ ու համբուրվեց նախ հորաքույրերի ու հորեղբոր հետ, բարեկեց մյուսներին ու շարունակեց, — մեր աղջիկներն այժմ այնպիսի քաջագործություններ, այնպիսի հերոսություններ են կատարում, վոր քու պապերի յերեվակայությունն անդամ չեր կարող պատկերացնել. ու յեթե այժմ նրանք իրենց գերեզմաններում լրեն այդ բոլորի գեթ մի չնչին մասը, տեղներումը յոթ անգամ կշարժվեն։

— Յերիտասարդ ընկեր, այդ բոլորից մի քիչ մենք եւ տեղեկություն ունենք, — ընդհատեց պապը, — խնդրեմ, խոսքը կտուրը մի դցի, այլ հարցիս պատասխանիր. գործդդ ի՞նչով վերջացամ։

— Պարզ չի. միաձայնով...

— Ըհը, — իր նստած աթոռի վրա մի քիչ հետ գնալով, մեծ բավականությամբ արտասանեց պապն ու մատներն ակամայից տարավ գեղի բեկերի այն մի քանի ճերմակ մազերը, վորոնց նա տարիներ չա-

բունամքով պահում եր իր վերին շրթումքի վրա :

Հայրը, վոր մինչ այդ ուշադրությամբ լսում եր փորձու և իր հոր բանալիճը, այդ ժամանակ արդեն վոտքի կանգնեց և նա ևս ինքնաբավականությամբ, ձեռքերը գրապահում դրած, ակսեց շրջել ընդարձակ սենյակում : Այդ պահին գոհունակությունից պայծառացել եր հոր դեմքը և սիրտն ուրախ խիռում եր :

Վավիկը տեսնելով ընդհանուր լուսվթյունը, լուսվթյուն, վոր պահացել եր բոլորին պատած ուրախության հետեւմանքով, ձեռքն առավ պատառաքաղն ու առաց :

— Դուք ամեն մեկդ յերեվի յոթ անգամ՝ արդեն դաստիթել եք ձեր ափսեները, հիմա թույլ տվեք ինձ ևս ձեզ պես վարվել :

Նստածներից յուրաքանչյուրն իսկույն փորձեց սեղանի վրայից վորեե բան մոռեցնել Վավիկին, իսկ մայրը վոտքի կանգնեց՝ նրա համար տաք կերակուր բերելու : Յերբ մայրը կերակով լիքը ափսեն դրեց վորդու առաջ, վորդին միայն այդ ժամանակ դգաց, վոր ինքը բոլորովին ախորժակ չունի ուտելու և զարմացավ, թե ինչպես եր ինքը մոռացել այդ բանը :

Այդ պահին Վավիկը կցանկանար ամելի չուտ դրում լինել, շրջել հենց այնպիս — աննպատակ, քան թե նստել այդ սեղանի մոտ, լսել իր հարազատների զրուցները : Գուցե, իհարկե, փողոցում աննպատակ շրջել ևս չբավարարեր նրան, թերեւս ավելի լավ լիներ գրուցում, իր ընկերների մոտ, վորոնցից հենց քիչ առաջ անջանավեց այնքան գորովալից զգացմունքներով : Համենայն դեպս, այդ պահին նա

ցանկանում եր մի բան, վոր ինքն ել պարզ չեր պատկերացնում, թե վո՞րն ե իր ցանկացածը :

Հենց մի քիչ առաջ, յերբ կոմյերիտկոմիտեն նրան միաձայն ընդունեց կոմյերիտմիության շարքերը, նա անչափ, անսահման ուրախացավ :

Ժողովը վերջանալուց հետո նա գրառմ վոչ մի վայրէլյան չկորցրեց ։ շտապից դեպի տուն՝ այդ ուրախ լուրը ծնողներին հայտնելու համար :

Դեռ յերեկ, յերբ ճաշին ինքը տանը հայտնեց, վոր վաղը քննելու յեն իրեն կոմյերիտմիության մեջ ընդունելու հարցը, ծնողներն անչափ ուրախացան և սրտատրոփ սպասում ելին հետեւլանքներին : Այդ ըդում եր և ինքը՝ Վավիկը, դրա համար ել ժողովը վերջանալուն պես շտապից տուն : Իսկ այժմ, յերբ նա տանն ե, յերբ կոմյերիտմիության մեջ նրա ընդունվելու մասին արդեն դիտեն տանը, նա հիմա յել այլ բան և ցանկանում . ուզում ե տեսնել ինչ վոր մեկին, խոսել հետը, բայց ո՞ւմ տեսնել, ի՞նչի մասին խոսել, նա չի պատկերացնում այդ և անհամբերությամբ միայն սիրտն ե թպրտում . . .

Հայրը վորդու գեմքին կարգալով նրա ներքին ուրախությունից բղխող անհանգատությունը և այն վոր նա վոչ մի հետաքրքրություն չի հայտնաբերում դեպի կերակուրները, մոռեցավ նրան ու առաց :

— Կը՝, մեր տղա, կարծես թե ախորժակիդ քամի կպած լինի :

— Բա ի՞նչ ես կարծում, հանաք – մասիսարայե՞ս, — թուան փոխարեն պատասխանեց պապը, — մարդն այսորվանից կոմյերիտական է : Յեթե ինձ կոմյերիտմիության մեջ ընդունելին, յես ուրախու-

թյունից վոչ միայն բան չելի ուտի, այլ ովկ գիտե, թե ինչեր կանելի...

— Ահա, պատն սկսեց նախանձել թոռանը, — արձագանքեց Վազիկի փոքր հորաքույրը, վորը դրա կանության Փակուտտեսի վերջին կուրած ուսանողունի յեր, և ամելացրեց, — Հայտնի յե, վոր մինչեւ այժմ ժառանգներն են յերանի տվյալ իրենց պապերին, իսկ այժմ պապերը նախանձում են մեր յերիտասարդությանը, իրենք ել են ցանկանում յերիտասարդանալ, կոմյերիտական լինել:

— Դե, այդ մեղքն իվուր եք ամբողջովին պապերի վղին փաթաթում, — ասաց ներկաներից մեկը, — մեր կոմյերիտականներին նախանձում են վոչ միայն ծերերը, պապերը, ինչպես դուք եք ասում, այլև բուրժուական յերկրների միլիոնավոր յերիտասարդներ...

— Ճշմարիտ խոսք լսելու համար գլուխու կտամ, — մերջին խոսողին լսելուն պես ասաց պապը և դիմեց աղջկանը, — Հասկացա՞ր, թե ինչ ասաց Խրիստափոր Զումշուդիչը. նա արգեն ջրեց ասածդ և պատասխանելու ել ինձ բան չի մնում: Ողնության համար չնորհակալություն, Խրիստափոր Զումշուդիչ:

Խրիստափոր Զումշուդիչը իրա հասցեին գովասնական խոսքեր լսելով՝ վոդեորմից:

— Աւեմն յերիտասարդության կենացը, — բաժակը բարձրացնելով ասաց պապը և բոլոր միասին վուոքի կանոնեցին:

Քիչ հետո տրվեց թեյը, վորի ժամանակ սեղանի վրա յերեւացին ամենաընտիր տեսակի մուրարաներ, վոր բերել եր պապը Յերեվանից:

— Ես մուգաբան Հարեվանից փոխարինաբար մերցնելով տատղ հատկապետ քեզ համար և ուղարկել, — դիմելով թոռանն ասաց պապը:

— Ի՞նչու, ինքը չի յեփել, — Հարցը Վազիկի մայրը — Մարիա Վլադիմիրովնան, վորին Վազիկի տապալ շատ աիրելուց ուղղակի Մարիամ իսաթուն եր ասում:

— Բարեիլշանից չկարողացանք յեփել: Ամառը շատ փնտրեցի, բայց մուրաբայի համար մանր բարդիրջան չգտա: Համ ել դրա պատրաստելը մի քիչ դժվար ե: ինքը պարուավել ե, իսկ ուրիշն ել չի վըստահում: Նման բաները յեթե իր ձեռքով չեփի, չի հանդպատճանա: Յեթե մի բան ինքը չի կարողանում պատրաստել, կնշանակի դրանից մենք պետք ե զրկիլենք:

— Իսկ կա՞ մի բան, վոր մայրիկը չկարողանա յեփել, — խորը կարոտանելով ասաց վորդին — Վազիկի հայրը:

— Հա՛, Հա՛, յարաբ, մեկել յերբ պետք ե ուտենք մայրիկի յեփած համով կերպուրները — յեղբոր ասածին ամելացրեց կրտսեր քույրը, իսկ Մարիա Վլադիմիրովնան ուղղակի հարձակեց կեսրայրի վրա.

— Հոգատարության մասին այդքան վոգեվորված իսոսող մեր հայրիկն ամենից քարասիրա ե: Ի՞նչու մայրիկին չմերցիցիք ձեզ հետ: Դուք դիմե՞ք, թե հիմա նա ինչպես ե կարոտել մեզ բոլորիս:

— Գիտեմ, ջանիկն, դիմեմ. բայց դժվար ե, շատ դժվար: Տաք տեղի լնտելացած պառավ ե: Մոսկվայի ցրտերին նա հիմա չի կարող դիմանալ:

Հիշում ե՞ք, անցյալ տարի հոկտեմբերի կեսերին, նա այստեղ չեր կարողանում պատշաճմբ դուրս գալ. իսկ ուր մնաց, թե գեկտեմբերին այստեղ գար:

— Ճիշտ չես ասում, հայրիկ, — ասաց պրոֆեսորի ավագ աղջիկը, — ցրտին չի կարող դիմանալ նա, ով սովոր չի. մայրիկը քսանհինդ տարի անընդհատ ապրել է Մուկվայում:

— Ծույն արդարանալու համար ամեն տեսակի պատճառ կճարի, — աեղից անհանդստությամբ ասաց Վայիկը, — քեզ արդարացնելու համար ավելի լավ ե ուրիշ բան հորինես. ասածներդ համոզեցուցիչ չելին:

— Բայց դու խոտր ես խոսքով լինում և մոռանում մուրաբան, — հարցից շեղելու համար ասաց պրոֆեսորը, — մի թողնեք մուրաբային ող կոչի, կարող ե գալլ դուրս գալ:

Պայը հասավ իր նպատակին: Անդանակիցները տարիեցին նրա առաջարկությամբ: Ամեն մեկը մի տեսակ մուրաբա առաջ քաշելով՝ սկսեցին թեյիլ ու գովել մուրաբաների վորակը:

Մուրաբաների նկատմամբ անտարբեր մնաց Վայիկը: Նա ձեռք չմեկնեց և վոչ մի բանի:

— Մեր տղա, դիտենք, վոր այսոր աշխարհի կեսը քեզ ե տրվել, — դիմելով թոռանն ասաց պայը, — բայց ուրախ լինել, չի նշանակում, թե անտարբեր մնալ զեպի առատ սեղանը, տատիղ ուղարկած մուրաբաներն են, իեր:

Վայիկի հայրն այդ ժամանակ վոտքի կանգնեց, մի քիչ գլխահակ շրջեց սենյակում և հանկարծ,

կարծես չատ անհրաժեշտ մի բան հիշելով դարձավ գեպի նստածները.

— Կուզե՞ք լսել, թե յես ինչ պարագաներում եմ ընդունվել կոմյերիտմիության մեջ:

— Այդ ինչ խոսք ե, պատմիր, — ասաց ներկաներից մեկը:

— Յեթե պատմությունդ կարող ե տելել մինչհ դնացքի մեկնելը, պատմիր — ավելացրեց Հայրը:

— Կարող եմ կիսատ թողնել, յերբ տեսնեմ, վոր դնացքը մեկնելու ժամը մոտենում է: Իսկ այժմ դեռ յերկու ժամ կա, — ժամացույցին նայելով ասաց նա:

— Դե, լսում ենք:

— Դա 1919 թվին էր, — սկսեց նա, — Հոկտեմբերին, յերբ Ռուսաստանի կոմյերիտմիության յերկորդ Համառուսական համագումարի վորոշամբ կոմյերիտականների մորիլիզացիա կատարվեց գեպի կովի ճակատ: Այն ժամանակ յես տասնութ տարեկան եյի:

— Ուրեմն դու կոմյերիտմիության մեջ մտնելիս ինձնից յերկու տարով մեծ ես յեղել, — այսուղ ընդհատեց վորդին:

— Մի ընդհատիր, — ասաց մայրը, — թող լսենք:

— Ինձ հետ, միենույն որը, կոմյերիտմիության մեջ ընդունվեց նաև Յեղոր Տարասովը, իմ հասակից մի տղա, վորի հետ չորս տարի շարունակ սովորել եմ միենույն նստարանի վրա: Կոմյերիտմիության մեջ ընդունվելուն պես մենք Տարասովի

Հետ կուլի ճակատ դնացինք: Կոփվն այն ժամանակ
դնում եր բազմաթիվ ուղղությամբ: Ենդ — ինձ,
Յեգոր Տարասովին և մի ուրիշ յերիտառազրեի, վորի
ազդանունը դժբախտարար մոռացել եմ, ուղարկե-
ցին սպիտակների թիկունքը քաղաքական ։ աղիտա-
ցիոն աշխատանքներ տանելու համար: Ակզրում մեր
աշխատանքները շատ լույլ ելին գնում: Ամեն ան-
դամ տարբեր պատրիակներով, տարբեր անվան տակ
գյուղ ելինք մտնում ու սկսում մեր դործը: Աս-
կայն հետո մենք նկատեցինք, վոր կասկածում են
մեղ և հետեւում են:

Մի անդամ նույնիսկ ձերբակալեցին յերեքիս ել,
հարցաքննեցին, բայց ասացինք, վոր յերեքս ել վորք,
անտուն-անտեր տղաներ ենք, աշխատանք ենք փընտ-
ըում: մեղ աղատեցին՝ խիստ պատվիրելով, վոր «Լավ
հակենք լեզուներիս», «ավել սրակաս դուրս չուանք»:
Մենք խոստացանք կատարել նրանց «պատվերը» և
հեռացանք այնտեղից:

Սովորաբար խուսափում ելինք ընդհանուր ժողով-
ներից, բազմամարդ տեղերից: Ամեն անդամ ընտրում
ելինք առանձին մարդկանց, կանացի փոքրիկ խմբերը,
ավելի շուտ յերիտասարդներին, յերբեմն ել, անդամ
յերեխաներին—լորոնք մեր խոսքերը կարող ելին
տուն հասցնել, պատմել ծնողներին: Վերջիններիս
հետ աշխատելու անորինակ վարպետ եր Յեղոր Տարա-
սովը: Նա շատ լավ դիտեր խոսել յերեխաների հետ՝
նրանց լեզով, դիտեր կատակել, ծամածություն-
ներ անել ու գրավել նրանց: Բայց, վոր ամենադժվար-
գորն է, նա հրաշալի կերպով նվազում եր ժողովրդա-

կան մի շարք գործիքների վրա: Հաճախ յերեկոները,
նստում ելինք գյուղամիջում մի ծառի տակ, դյուզա-
ցիներից վորեւ յերաժշտական գործիք խնդրում,
Յեգորը նվազում եր, մեր մյուս ընկերը պարում եր,
յես ել արեվելյան վորեւ մոտիվ ելի բաց թողնում,
վորը լսողների համար շատ տարօրինակ լինելով հան-
գերձ, շատ ել հետաքրքրում եր ու հավաքում ժողո-
վըրդին: Այդ միջոցին մենք բացառիկ դեսքերում ե-
լինք գործ տեսնում, վորովհետեւ դա վատանգալոր եր
և մեծ բազմության մեջ չեր կարելի իմանալ, թե ով-
քեր են ժամանակում մեր «ներկայացումներին» և նը-
րանցից յուրաքանչյուրն ինչ տրամադրություն ունի:

Յել ահա, այդպիսի «ներկայացումներից» մեկի
ժամանակ, հավաքվածների արանքը ճեղքելով, մոտե-
ցան մեղ յերեք դիմումած մարդ և առաջարկեցին հետե-
մեւ իրենց:

— Ինչպես թե հետեւեք մեղ, ո՞ւր եք ուզում մեկ
տանել, — իբր թե զարմացած հարցրեց Տարասովը,
բայց ամեն ինչ մեղ համար պարզ եր և զարմանալու
վոչինչ չկար:

— Ավել-պակաս մի խոսեք, — ասաց զինվածներից
մեկը, — ասում ենք հետեւեք մեղ, կնչանակի հարկա-
վոր և հետեւել:

— Բայց սպասեցեք, ո՞ւր եք տանում սրանց, սը-
րանք ի՞նչ են արել վոր, — բացականչեցին հավաք-
վածներից վոմանք, բայց նրանց բացականչություն-
ների վրա ու շաղբություն գարձնող չեղավ:

— Զեր գործը չի, թե ուր ենք տանում, — ովա-

տասխանեցին նրանք և առաջ ընկան, մեղ էլ հրամա-
յեցին հետեւիլ իրենց :

Այդտեղ մենք մի վայրկյան կանոն առանք, նայե-
ցինք իրար և յերեքիս հայացքներն ել միենույն բանն
ելին արտահայտում—հարկավոր և փախչել :

Ել չեր կարելի ժամանակ կորցնել. քանի վոր նը-
րանք գնում ելին առաջից, հարկավոր եր ոպտագոր-
ծել այդ հանդամանքը: Տարասովն աչքով արագ մեզ
ու ինքը ճարպիկորեն ցատկեց մի պատից: Ցատկելու
ժամանակ նրա հանած դոփյունը դրավեց զինվածների
ուշադրությունը, նրանք չեա նայեցին, այլայլիցին,
և յերեքով ել վազեցին նրա հետեւից: Մեր յերբորդ
ընկերը մի ակնթարթում մատնացուց արեց, թե յե-
ինչ ուղղությամբ փախչեմ ու ինքն ել փախագ մի այ-
կողմ:

Յես մի քիչ շվարած կանգնեցի տեղս: Հետո,
տեսնելով, վոր ինձ առայժմ հետեւիլ չկա, թեքվեցի
և մի նեղ փողոցով սկսեցի վաղել:

Աղմուկն ու աղաղակն խկույն բոնեց զյուղը:
Փողոցներով յերկար փախչել չեր կարելի: Յես իս-
կույն չեղեցի ճանապարհս, մտա մի բակ: Բակում
մարդ չկար, միայն մի փոքրիկ յերեխա կատվի պոչեց
բոնած քաշում եր: Յերեխան յերբ տեսավ ինձ, բաց
թողեց կատվի պոչը և վախից սկսեց լաց լինել: Յես
մինչև կվորոշեյի իմ անելիքը, յերեխայի լացի վրա
մի կին դուրս յեկավ անից և տեսնելով ինձ՝ դարմա-
ցած հարցրեց.

— Ի՞նչ եք ուղում:

— Յես . . . յես . . . յես . . .

Յես շփոթվեցի, չկարողացա վորեե պատասխան
տալ կնոջը:

Դրությունն ավելի վատացավ: Հետ փախչել չե-
յի կարող: Այդտեղ մնալ չեյի վատահում: Արդյօք,
ո՞վ ե այս կինը, ի՞նչ մարդ ե: Ելի ո՞վ կա տանը:
Վստահե՞լ սրան, ներս գնալ ու խնդրե՞լ, վոր թագցւ-
նի, թի՞ գուրս գալ ու հետ փախչել:

Վայրկենաբար այս ու բազմապիսի այլ հարցեր
կայծկալացին ուղեղումս, բայց չկարողացա դրանցից
և վոչ մեկն ել ընտրել:

Տեսնելով իմ շփոթվածությունը, կինն ավելի մոտ
յեկավ և ըստ յերեսույթին ճանաչելով ինձ՝ ասաց.

— Ա՛, այդ դո՞ւք եք, ուրախ յերաժիշտներ.
խնդրեմ, ասացեք, ի՞նչ ե հարկավոր ձեզ:

Բայց մինչև յես վորեե պատասխան կտայի, կինն
ավելի մոտեցավ ինձ, ուշադրությամբ նայեց ուղիղ
աչքերիս ու հարցրեց.

— Ասացեք, ի՞նչ ե պատահել ձեզ, ինչո՞ւ յեք
դեղնած, ո՞ւր են ձեր ընկերները:

— Տիկին, ինդրում եմ ձեզ,—կրկին կակապեցի
յես, բայց կինը դարձյալ ընդհատեց ինձ, ըստ յերե-
վույթին վորյելե բան գուշակելով, նայեց չորս կող-
մը և զդուշությամբ բռնելով իմ թեվից, ասաց.

— Ներս գնանք. այստեղ մի կանգնեք:

Յես տարակուսանքով հետեւիցի կնոջը:

Անյակում վոչ վոք չկար: Մեր հետեւից ներս
մտագ կատվի հետ խաղացող յերեխան և կինը ծածկեց
դուռը:

— Ինչ ե, դուք բոլշեիկ եք:

Մտքելն սկսեցին տանջել ինձ: Ասե՞լ, արդյոք, այդ կնոջը, վոր յես, այո, բոլշեիկ եմ: Իսկ դուցես սա տում ե բոլշեիկներին, գուցե զնա և մատնի ինձ: Զասե՞լ, վոր յես բոլշեիկ եմ. Հապա ի՞նչ ասել, ի՞նչ պատճառով սրանից ողնություն խնդրել:

— Տիկին, ինձ ուզում եյին ձերբակալել, յես փախանձեղ մոտ, ողնեցեք, խնդրում եմ:

Թեկուր յես անորոշ պատասխան տվի կնոջ հարցին, բայց նա ինձ լրիվ հասկացավ:

— Լավ, մի վախեցեք, նստեցեք այստեղ: Իմ ամուսինն ել ե բոլշեիկ, — շտապ, իրար հետեւից ասաց կինն ու մի վայրիցանում յերեխային ել վերցնելով դուրս յեկավ տնից:

Այդպես սպասեցի մի քանի բոսե, բայց նա չեկավ: Կասկածը պատեց սիրոս: Չիինի՞ թե խարեց ինձ: Միթե՞ զնաց մարդ կանչելու, վոր դան ինձ քոնեն:

Այսպես մտածելով, վորուեցի թողնել նրա սենյակն ու խակույն դուրս վախել, բայց վճիռո դես չկատարած, կրկին ներս մտավ կինն ու ասաց.

— Սենյակում վտանգավոր ե, կարող ե մարդ դալ. վեր կացեք և հետեւիցեք ինձ:

— Ե՛ւ, ինչ ուզում ե, թող ինի, — մտածեցի յես ու հետեւիցի կնոջը:

Կինն ինձ մի նեղ անցքով առաջնորդեց դեպի դոմը: Այնտեղ ցույց տալով մի մուժ անկյուն, նա ասաց:

— Մտեք այնտեղ, թագնվեցեք դոմաղբի տակ:

Յես թագնվեցի:

— Լուս, առանց տեղներիցդ չարժվելու, սպասեցեք, մինչև յես կրկին կդամ ձեզ մոտ, — ասաց կինն ու դուրս յեկավ:

Ցերբ նա զնաց, իմ մտքով կրկին անցավ դոմը թողնելու և հետ փախչելու միտքը, բայց մեկ ել վորոշեցի սպասել:

Յես յերկար սպասեցի այդտեղ: Ինձ թվաց, թիմի տմբողջ տարի անցավ կնոջ դուրս զնալուց հետո: Մեկել, յերելի գիշերվա կեսը կլիներ, տեսա, վոր բացվեց դուրս, մեկն զդուշությամբ ներս մտավ, մուտեցավ իմ թաղնված տեղին ու ասաց.

— Դուրս յեկեք:

Կինն եր: Յես դուրս յեկա թագատոցից: Նա ասաց:

— Հեմա շոտագ հեռացեք: Գյուղը խաղաղվել է: Զեր ընկերներից մեկին ձերբակալել են, իսկ զյուսը վախել ե: Դուք ել վախեք, բայց զգույշ, չներին չարթնացնեք:

— Ի՞ոկ վո՞ր ընկերոջն են ձերբակալել:

— Զդիտեմ, յես չեմ տեսել. այդպես են ասում: Դուք շոտագ հեռացեք. Հիմա վորոնում են տները. իմացել են, վոր գյուղից դուրս յեկող չի յեղել: Կարող են մեզ մոտ ել դալ, վորովհետեւ մեղ միշտ ել կասկածում են:

Հետո նա համառոտ պատմեց, թե ինչպես գուրս դամ գյուղից, ինչպես հեռանամ:

Նա այնքան շտապեցրեց ինձ, վոր յես մոռացանդամ սեղմել նրա ձեռքը, չնորհակալություն հայտնել:

Յերեք որ ցերեկներն անտառներում, ձորերում
ու կիրճերում անցկացնելով, հասա մերոնց...

թե ինչ պատահեց մեր յերկրորդ ընկերոջը, ուր
զնաց նա, յես այնուհետեւ վոչ մի կերպ չկարողացա
խմանալ: Իսկ հետո, յերբ այն գյուղում արդեն խոր-
հուրդներն ելին աշխատում, իրենք, գյուղացիները
պատմում ելին Յեղոր Տարասովի մասին:

Այսում ելին, վոր նրան բռնելուց հետո անչափ
տանջել են, ծեծել են շերով, ճիպոտներով, ինչով
հասել ե: Հարցաքննության ժամանակ նա խիզախա-
բար առել ե.

— Այո, յես կոմունիստ եմ:

Այն ժամանակ մերկացրել են նրան ամբողջովին,
մոն ածել փողոցներով, յերբ դրսում քառասուն աս-
տիճանի ցուրտ ե յեղել: Չբավականանալով դրանով՝
սկսել են ծակծել սվիններով, քաշել են բոլոր ատամ-
ները, խանձել են կաշին, վոր նա տեղեկություն տա-
կարմիրների մտսին: Բայց նա համառորեն լոել ե ու
վոչինչ չի առել: Միայն կախաղան տանելիս, մահվա-
նից առաջ, բացականչել ե.

— Մեռնում եմ յերիտասարդ, մեռնում եմ հան-
գիստ, վորովհետև գիտեմ, վոր մեր հետեւից և մեզ
համար գալիս են նոր և հաղարավոր անվեհեր, խի-
զակի մարտիկներ: Կեցցե՞ն փոխարինողները...

Այս ե յեղել Յեղոր Տարասովի վերջին խոսքը...

Նա վերջացրեց իր պատմությունը, հետո վառեց
մի ծխախոտ, վոտքի կանգնեց և պատուհանից դեպի
դուրս նայելով՝ բաց թողեց ծխի քուլաները: Իսկ

մյուսները դեռ լուս ելին: Վոչ վոք չեր ուզում խան-
գարել ընդհանուր լուսթյունը: Բոլորն ել յերիտա-
սարդ կոմյերիտական Յեղոր Տարասովի վողբերդա-
կան, ըայց հերոսական մահվան մասին ելին մտա-
ծում: Բոլորն ել խորհում ելին այն մասին, թե վոր-
քան անվեհեր մարդիկ են զոհվել այսորվա պայծառ
կյանքի համար:

— Դա!... իսկ այժմ ժամանակն ե՝ ասաց հայ-
րը, մանապարհորդը ճանապարհին պետք ե լինի:

ԱՊՐԻԼԻԱԴԻ

Կարմիրների գունդը քաղաք մտնելուն պես Արշակ Սահմամյանն իր հրամանատարից թույլտվություն խնդրեց և շտապեց տուն։

Մի ամսից ավելի յեր, ինչ նա կնոջը թողել եր տանը մենակ, ծանր վիճակում և իրենց պարտիզանական ջոկատի հետ միացել կարմիրների վնդին՝ ընդգեմ հակահեղափոխության։ Այդ ժամանակամիջոցում նա կնոջից վոչ մի տեղեկություն չուներ և տուն վերադառնալիս վազում եր հեղասպառ, չուտ տեղ հասնելու համար։

Բակում վոչ մի ծանոթ դեմք չհանդիպեց նրան։ Նա սրտատրոփ մոտեցավ իրենց սենյակին, առանց ծեծելու հրեց գուռը և մնաց ապշած—հենց գուսն առաջ կծկվել եր կինը՝ դեղնած, կուչ յեկած ու ցավատանջ դեմքով։ Կինը հազիվ բարձրացրեց գլուխը, նայեց ամուսնուն և թույլ, հազիվ լսելի ճախով ասաց։

— Շուտ արա, մեռա...

Ամուսինն ավելորդ հարց չտվեց. նա իսկույն հասկացավ, թե ինչումն ե բանը։

Արշակը գտավ դուսն բանալիները, բարձրացրեց կնոջը, փակեց դուռը և նրա թերից բանած դուրս տարավ։

Դրսում քաղաքն իրարանցման մեջ եր։ Նոր եյին մտել կարմիրները։ Աղքաբնակության մի մասը վազում եր դեպի կայարան, վորտեղից մտել եյին կարմիրները՝ տեսնելու նրանց, վորոնց մասին այդ որերին անընդհատ խոսում եյին, վոմանք մի տեղից մի առ տեղ եյին վազում, իրենք ել չիմանալով, թե ինչու։ Կային մարդիկ ել, վոր կորցրել եյին իրենց, խուճապի մատնվել և բնական ե, վոր այդպիսի ժամանակ անմտություն կլիներ կառքի մասին մտածելը։ Դրա համար ել Արշակը կնոջ թեր տակ մտած կայարանի կամուրջի մոտով տարավ դեպի քաղաքային ծննդարերական հիմանդանոցը, վորտեղից ավելի կարծ եր ճանապարհը։ Սակայն այնտեղ նրանց առաջը կտրեց կարմիրների պահակը։

— Բարեկամ, այստեղից չի կարելի անցնել։

Նրանք կանդ առան։ Արշակը մնաց շվարած։ Հետո նա ամաչկոտությամբ մատնացուց արեց կնոջն ու ասաց։

— Գիտե՞ք ինչ, կինս ե, վիճակը լավ չե, հիվանդանոց...

— Վոչ, բարեկամ, այստեղից չի կարելի—իսկույն ընդհատելով նրան՝ վճռականորեն ասաց պահակը։

Սահմամյանը տեսնելով, վոր կինն այլևս կանգնել չի կարողանում, քիչ ե մնում, վոր չնչասպառ լինի, ջղայնացած բացականչեց։

— Տո, լսիր ե, ծնում ե, հասկանում ե՞ս, ժամերով չո յես չեմ կարող քեզ հետ ծնոս թակել։

Մենք ել քեզ պես մարդ ենք. ինքու ել եմ հենց նոր
գերարդձել Փրոնտից :

— Այդ միևնույն ե, ամեն մարդ պետք ե իրեն
հանձնարարած պարտքը կատարի, —ավելի համառու-
թյամբ ասաց պահակը, առանց մաղաշափ անդամ ու-
շաղբություն դարձնելու Արշակի խոսքերին :

Իսկ մինչ այդ, բնությունն իր գործն եղ տես-
նում. —կինն այլքս անզոր լինելով կանգնել, նստեց
քիչ հեռու անկյունում ե... .

Այսուհետեւ Արշակ Սահմանյանը հաճախ եր հան-
դիպում նույն պահակի հետ :

Մի որ ել փողոցում տեսնելով Արշակին, մոտե-
ցավ պահակն ու ամաչլոտությամբ ասաց.

— Դուք ներեցեք ինձ, դիտեք, յես կոպիտ վար-
վեցի, այդ հասկանում եմ, բայց կարդապահությունը
պահանջում եր: Քիչ այն կողմը զբահազնացքն եր
կանդնած և կողմնակի մարդ թույլ տալ չեր կարե-
լի:

— Ել անցել ե. չարժե դրա մասին մտածել:

— Իսկ յերեխա՞ն, —հարցրեց պահակը:

— Յերեխան մեծանում ե. աղջիկ ե...

Յերեխայի ծնվելուց հետո յերկույթերեք ամիս
նրանք չդիտեցին ինչ անուն տալ նրան: Հետո տեսնե-
լով, վոր այդպես անանուն ել չի կարելի թողնել, վո-
րոշեցին կոչել Ապրիլադա, վորովհետեւ ծնվել եր
ապրիլի 28-ին, Ապրիլիմնի խորհրդայնացման առաջին
որը:

Մեծանում եր Ապրիլադան, աճում, փարթամա-
նում որերի հետ միասին: Յերկիրը պատրաստվում եր

տանելու իր խորհրդայնացման տասնհինգ տարին: Ապ-
րիլադայի ծնողները ևս նախապատրաստվում ենին
կատարելու իրենց խուճուճիկ աղջկա տասնհինգամ-
կակը: Նա արգեն ութերորդ դասարանի ամենաառա-
ջադեմ աշակերտուհիներից եր:

Այն դպրոցը, ուր սովորում եր Ապրիլադան,
կոչվում եր Միխայիլ իվանովիչ Կալինինի անվամբ:
Մի անգամ Ապրիլադան իրենց դպրոցի լավագույն
սովորողների անունից նամակ եր գրել Միխայիլ ի-
վանովիչին, պատմելով Միության ավագին, թե ինչ-
պես են սովորում նրա անունը կրող դպրոցի աշ-
պես ել սովորում նրա անունը կրող դպրոցի առա-
կերտները և խոստանում են ել ավելի լավ սովորել:

Նամակը կարդացել եր Միխայիլ իվանովիչը,
շատ հավանել և անմիջապես պատասխանել եր նրան,
գովելով նրանց յեռանդն ու ընդունակությունները:

Միխայիլ իվանովիչի նամակը յեկել եր դպրոցի
հասցեյով: Նույն որը, յերբ տեղ եր հասել նամա-
կը, տպագրվել եր տեղական բոլոր թերթերում, իսկ
Ապրիլադան այդ մասին տեղեկություն չուներ:

Այդ մասին նա իմացավ դպրոցում, իրենց
ուսուցչուհուց:

Սոալոտը շուտով հայրը հայտնեց, վոր Միխա-
յիլ իվանովիչը յեկել է Ապրիլադանի խորհրդայնաց-
ման 15-րդ տարեկարձի տոնակատարությանը ներկա
գտնվելու:

Ապրիլադան այդ լուրը լսելուն պես ցատկեց տե-
ղից և պատրաստվեց գուրս վաղելու:

— Ո՞ւր ես վագում, —հանդիմանեց հայրը, — փո-
ղոցում նա հո քեզ չի սպասում:

— Բա ի՞նչ ե, ուրեմն չե՞մ տեսնելու :
— Տեսնե՞լ, —քմծիծաղ տալով ասաց հայրն ու
դուրս գնաց :
Իսկ ինչպէ՞ս տեսնել :

Պարզ եր, վոր բաց չեյին թողնելու նրա մոտ :
Ուրեմն հարկավոր ե միջոց գտնել :

Եերեկոյան ուղերային թատրոնում հանդիսավոր
նիստ եր լինելու, ուր մասնակցելու յեր նաև Միլսա-
յիլ իշխանովիչը :

— Մի լավ փոռնչ ծաղիկ կզնեմ և կասեմ, վոր
յս Ապրիլիադան եմ ու Միլսայիլ իշխանովիչին պետք
և տեսնեմ—մտածեց նա և այլպես ել արավ :

Սակայն, յերեկոյան, հենց վոր նա մոտեցավ ո-
պերային մեծ թատրոնի շենքին, խիստ միլիցիապետն
խոկույն կտրմելով նրա առջեր՝ հարցրեց .

— Զեր թույլտվությունը, ընկեր :
— Յես չունեմ :
— Ուրեմն...

— Յես Ապրիլիադան եմ, Սանամյան Ապրիլա-
դան, գիտե՞ք, ինձ Միլսայիլ իշխանովիչը դեռ նամակ
ել ե դրել. յես ուզում եմ այս ծաղկեփունջը նրան
նվիրել :

— Այդ միւնույն ե, չի կարելի :
Միլիցիապետի անտարբեր խոսքերն իսկույն հի-
ասթափեցրին աղջկան : Նա մի պահ մնաց շվարած,
բայց չհուսահատվեց : Իսկույն վորոշեց .

— Կսպասեմ այստեղ, մինչեւ դուրս կդա հանդի-
սավոր նիստից և այն ժամանակ կմոտենամ : Բայց
միլիցիապետը կրկին գիմնեց նրան .

— Ծնկեր, յես ձեզ քանի՞ անդամ պետք ե տաեմ...

— Այդ ի՞նչ ե, Ապրիլիադան ե՞ , ուզում ե անց-
նե՞լ, —նույն ժամանակ մոտենալով ասաց Ապրիլիադա-
յի հայրը, վորը հեռվից տեսնելով աղջկան և իր ծա-
նօթ միլիցիապետին, մոտեցել եր նրանց :

— Որիորդն անպայման ուզում ե տեսնել Միլսա-
յիլ իշխանովիչին :

— Որիորդն իմ աղջիկն ե, —ասաց Արշակը .

— Ի՞նչ ես ասում, —ղարմացած բացականչեց մի-
լիցիապետն ու ավելի մոտեցավ աղջկան :

Դա նույն պահակն եր, վոր ուզիդ տասնչինդ
տարի առաջ Արշակին և նրա կոնջը թույլ չեր տալիս
կամուրջից անցնել ծննդարերական հիվանդանոցը գլ-
նալու : Նա ուզեց ձեռք տալ Ապրիլիադային, բայց
աղջիկը տեսալ, թե ինչպես հանկարծ լայն բացվեցին
թատրոնի դմոներն ու այնտեղից դուրս յեկան մար-
դիկ : Շարքով կանգնած ավտոմեքենաներն ընթացքի
մեջ մտան : Առաջ յեկալ ամենագեղեցիկ մեքենան և
Ապրիլիադան հեռվից տեսալ Միլսայիլ իշխանովիչ կա-
լինինին՝ մեքենան բարձրանալիս : Նրա բարձրանալն
ու մեքենայի շարժվելը մեկ յեղալ, բայց հենց նույն
վայրկայնին ծաղկեփունջը ձեռքին առաջ վազեց Ապ-
րիլիադան ու բարձր ձայնով ձացա .

— Միլսայիլ իշխանովիչ, Միլսայիլ իշխանովիչ :

Մեքենան կանգնեց : Յերեկ շոփերը վախճանալով,
վոր աղջիկը կարող է մեքենայի տակ ընկնել՝ կանդ-
նեցրեց :

Ապրիլիադան հեասպառ բարձրանալով մեքենայի
վոտնատեղի վրա, մեկնեց ծաղկեփունջն ու ասաց .

— Ապրիլիադան եմ, Միլսայիլ իշխանովիչ, ուզում
եմ մեր դպրոցի աշակերտների անունից այս ծաղկե-

վունջը տալ ձեզ և հրավիրել, վոր զաք մեր դպրոցը
սեսնելու... Ուզում եմ, վոր... բայց նրա ճայնն ել
չլսվեց: Բացվեց մեքենայի դռնիկն ու Ապրիլիադան
ներս մտավ:

Յերբ մեքենան հեվալով նորից արագ ընթացքի
մեջ ընկալ, նրա հետեվից զարմացած նայում եին
հավաքված հաղարամկոր մարդիկ, Ապրիլիադայի Հայ-
րն ու նրա ծանոթ միլիցիապետը:

«ԱՍԴԱԳԵՏ» ՄՈՒԿՈՒԶԸ

...Դե Սիրանին ինչ կա, նա չի յել զգում, թե
ինչպես ե հուզվում Մուկուչը: Նա ամուսնու ուսի
վրայից կրացած լուս նայում է ճերմակ թղթին, վո-
րի վրա ուստական հավասարաչափ տառերով շարվում
են բառերը:

Սիրանն այդ բառերի միտքը չի հասկանում: Նո
ուստերեն չդիտե յել գրա համար ել նրան թը-
գում ե, թե թղթի վրա գրվող ամեն մի բառ իր մեջ
հոյակապ, Սիրանի ուղեղին միանդամայն անհասկա-
նալի մի միտք ե պարունակում: Նա կլանված նայում
է ամուսնու գրչի շարժումներին և ուրախությունից
սիրտն ուռճանում ե... նա պարծենում է իր ամուս-
նով: Միայն այն, վոր ամուսինը ուստերեն նամակ ե
գրում, այդ մեծ ուրախություն ե պատճառում Սի-
րանին, գրանով Մուկուչի հեղինակությունն ել ե մեծ
չափով բարձրանում իր կնոջ աչքում...

Մոտ յերեք տարի առաջ Մուկուչն ել չդիտեր
ուստերեն խոսել կամ գրել: Նա հայերեն հազիվ եր
գրում: Իսկ այժմ, բանակից վերագառնալուց հետո,
ուստերեն գիմում ել ե գրում, Ճշանային կենտրոնից

յեկողների հետ հարկ յեղած դեպում սուսերն է խոսում, իսկ այժմ ել ահա նամակ և գրում Կարմիր բանակի իր սուս հրամանատարին:

Այսպես խորասուզված մտածում եր Սիրանը: Բայց հանկարծ նրա մտապատկերները փոխվեցին: Նա ուղղվեց, առանց մի խոսքի աչքերը հառեց ամուսնու վրա և լուս ոպասեց: Նա սկսեց կասկածել, վոր ամուսինն այդ նամակը մի ուրիշին գրելիս կինի: Գուցե Մուկուչն այն քաղաքում ծանոթացել և մի սուս աղջկա հետ և այդ նամակը նրան և դրում...

Այդպես մտածելիս կարծես թե նրա յերակների մեջ թույն սրսկեցին: Արյունը հանկարծակի խմեց գիտով, այտերը կարմրեցին և խկույն նա շիկնեց:

— Մուկուչ, ձեր հրամանատարի անունն ի՞նչ է,
— մի պահ այդպես մտածելուց հետո հարցրեց Սիրանը:

Մուկուչն խկույն չպատասխանեց: Նա հանդիսա կերպով վերջացրեց կիսատ նախաղասությունը, գըրչակոթը բարձրացրեց թղթի վրայից և դիմեց կնոջը.

— Ինչո՞ւ յես հարցնում վոր:

— Հենց ենպես:

— Վիշտորիա՝,—շնչակտուր կերպով հարցրեց կինը, չթողնելով, վոր խոսքը մինչեւ վերջ դուրս դա ամուսնու բերնից:

— Զե, վիշտոր, ինչո՞ւ, աղջիկ ե՞՝, վոր վիշտորիս լինի—ծիծաղելով ասաց Մուկուչը և ուշադրությամբ կնոջը նայեց:

— Ինչ լմանամ, բա եղանակ ել աղամարդու անուն կլինի:

— Կլինի, բաս չի լինի, հայ հո չի, սուս և չի՝— հանգարտությամբ պատասխանեց Մուկուչը և կրկին շարունակեց նամակը:

Ամուսնու հանդիսա պատասխանն ազդեց կնոջ վըրա: Սիրանի սրտի գարկերը կրկին բնական ընթացք ստացան: Նա մտածեց, վոր այդպիսի բան իրոք չի կալող լինել: Մուկուչը բանակից որընդմեջ մի նամակ եր ուղարկում և այնքան ջերմ խոսքեր եր զըրում: Յեթե նման բան լիներ, ամուսինն իրեն այդքան հաճախ չեր հիշի:

Այս մտածմունքների ժամանակ Սիրանը մեկ ել հոնքերի տակով նայեց նամակին և կրկին անգամ կարոտագին հայացք ցցեց ամուսնու վրա, թողեց նրան սեղանի մոտ ու ինքը գնաց պառկելու:

Կնոջ գնալուց հետո Մուկուչն ել մի պահ դադարեց գրելուց և սկսեց մտածել, թե ինչպես շարունակի նամակը: Յերբ մտքերն ավելի առատ են լինում ու ամուր շաղախված խոր զգացմունքների հետ, այդպիսի զեպքում մարդ չի իմանում ինչպես դասավորել իր մտքերը: Շատ հաճախ ել դուրս չի դալիս այն, ինչ ինքն և ցանկանում:

Շուտով մեկ ու կես տարի կլինի, ինչ Մուկուչը վերադարձել է Կարմիր Բանակից: Այդ ժամանակամիջոցում բազմապիսի նորություններ են կատարվել նրա կյանքում: Այսին անգամ, յերբ նստում ե նա սեղանի մոտ, ուզում ե իր մտքերին հաղորդակից անել բանակի ընկերներին, մանավանդ իրենց դասակի հրամանատարին, վորի հետ նա այնքան մոտ եր, մտերիմ,

առկայն վոչ մի անգամ ել չի ստացվում այն, ինչ
ինքն ե կամենում: Գրելու ընթացքում բազմաթիվ
հարցեր միանդամից կուտակվում են նրա ուղեղում:
Նա շուալում ե այդ բոլորը զրի առնել. բայց յերբ
վերջացնում ե նամակն ու նորից կարդում՝ իր զրած-
ներն ստուգելու, տեսնում ե, վոր մի շարք հարցեր
բաց ե թողել, մի շարք հարցեր չեն դրվել այնպես,
ինչպես ինքն ե ցանկանում: Իսկ այժմ ահա, նա ու-
զում է, վոր իր նամակն ավելի լրիվ լինի:

Առաջին նամակներում հաճախ նա դրում եր այն
ձասին, վոր բանակից հետո շատ դժվարությամբ ե
ընտելանում կոլտնտեսային աշխատանքներին: Պատա-
հում ե, վոր ուղում ե ամեն ինչ թողնել յերեսն ի վար
ու կրկին բանակ վերադառնալ: Իսկ այժմ, ընդհա-
կառակը, այնքան ե ընտելացել իր նոր աշխատանքին,
վոր յերեմն գործի ընթացքում մոռանում ե և քաղց
և հողնածություն ու գործից վերադառնում ե այն
ժամանակ, յերբ անելու ել բան չի լինում:

Բանակը նրան շատ բան ե տվել: Իսկ նա ճշու-
թյամբ գործադրում ե իր առորյա աշխատանքների
ընթացքում այն բոլորը, ինչ վոր սովորել ե բանա-
կում:

Այժմ նա կոլտնտեսության անասնապահական
Փերմայի վարիչն ե: Ամեն որ, առավոտը շուտ արթ-
նանում ե քնից, ճիշտ ժամանակին անցնում գոմերը,
ստուգում, թե անասնապահներից ով ե գործի գուրու-
յեկել, ով ինչով ե զբաղված, ստուգում ե անասուն-
ները. նայում նրանց մաքրությանը, գերանալուն:
Ազա մեկ—առ մեկ ստուգում ե նախորդ որվա բոլոր
կարգադրությունների կատարումը, տալիս որիտ

հանձնարարությունները և անցնում իր անմիջական
աշխատանքին:

Մուկուչի յեռանդուն աշխատանքների շնորհիվ ա-
նամնապահական Փերման վոչ մի կորուստ չի ունե-
ցել: Նրա հակողությամբ անասուններն ավելի յեն-
դերացել: Նա խոշոր չափերով ովնում ե կոլտնտեսու-
թյան բոլոր աշխատանքներին, ամեն մի կոլտնտեսա-
կանի առանձնապես: Հետաքրքրվում ե, թե ով ինչով
ե ազդում, ով ինչ կարիք ունի, հուսադրում ե նը-
րանց, խորհուրդներ տալիս ու դրա համար ել իրենց
կոլտնտեսություննում չկա մեկը, վոր չսիրի Մուկու-
չին, գոհ չկինի նրանից:

Իր այդ առավելությունների շատ մասը նա բերել
ե բանակից: Մինչև բանակ գնալը դյուզում նա վոչ
մի բանով աչքի չեր ընկնում: Ընդհակառակը, առաջ
նա դյուզում քիչ չի ծաղրվել և բազմապիսի ածական-
ներ կրել:

Դեռ հորթարած ժամանակ մի անգամ նա
հորթերն անում ե գյուղից բարձր վանքի
բակն ու ինքն այնտեղ պառկում: Բակի ներ-
սից դուռն ել ամուր փակում ե, վորպեսզի
հորթերը բոռերի հարձակումից չթողնեն փախ-
չեն, ինչպես ինքն եր ասում—մող չանեն: Գյուղում
մինչև ուշ գիշեր սպասում են և տեսնելով, վոր Մու-
կուչը չկա, հորթարերը հավաքվում և զնում են
նրան փնտություն: Գիշերը վանքի մոտից անցնելիս լը-
սում են քաղցած հորթերի բառաչը, բակի գուրը մի
կերպ բաց անելով մտնում են այնտեղ և տեսնում,
վոր նա գլուխը դրած մի ծառի տակ, հաճգիստ քնել
է: Արթնացնում, տուն են բերում և գյուղում տարա-
ծում, թե Մուկուչը չեր ուղում վանքից դուրս գալ,

նա վորոշել եր մնալ այնտեղ և ճղնավոր դառնալ։
իսկ այնուհետեւ Մուկուչին գյուղում ճղնավոր մա-
կանունն ելին տվել։ Դրանով նրա մականունների թի-
վը դեռ չեր սպառվում։ Բոստանչի Մուկուչ ելին ա-
սում։ Մի անգամ հարցրել ելին, թե վոր մեծանաս,
ինչ պետք է դառնաս, պատասխանել եր, թե բոստան-
չի, վորովհետեւ բոստանչիները գործ չեն անում, ամ-
բողջ ժամանակ նստում են քողարկում և սեխ ու վա-
րունգ ուտում։ Աստղագետ Մուկուչ ելին ասում, վո-
րովհետեւ յերեկոները վորեե տեղից զնալիս միշտ աչ-
քերը հառում եր աստղերին, սկսում համըել, նրան-
ցից ամենափայլուններն իրենց համարում և մոռա-
նում, թե ինչ գործի համար և ուր ե զնում ինքը։

Յերբ նա հասունացած տղա յեր, ուզում եր ա-
մուսնանալ, դյուզի աղջիկները խուսափում ելին նը-
րանից, վոչ վոք չեր հալասում, թե Մուկուչը կո-
րող ե տնատեր դառնալ, կին պահել, ընտանիք պա-
հել։

Իսկ այժմ, բանակից վերադառնալուց հետո, շա-
տերն ելին նախանձում Սիրանի բախտին։ Կարմիր
բանակը նրան կոնիել, միանդամայն նոր տիպի, նոր
վորակի մարդ եր դարձրել…

Իր մեջ կատարված փոփոխությունները, իհար-
կե, Մուկուչը չեր նկատում։ Սակայն նա ներքուստ
ելի մի անձուկ ցանկություն եր զգում դեպի բանա-
կը, դեպի նրա առորյան, այնտեղի տարբեր բնավո-
րությամբ բազմաթիվ ընկերները։ Նա հաճախ վերհի-
շում եր այնտեղի կյանքը, հետաքրքիր զբաղմունքնե-
րը և մեկ առ մեկ պատմում Սիրանին։ Այդ քաղցր
հիշողությունների ժամանակ ինքը մեկ-մեկ հուսա-

հատվում եր, ընկճվում, վոր այլևս գուցե ինքը բա-
նակի յերես չտեսնի, չզգա այդ յեռուն կյանքի քաղց-
րությունը, այնտեղի թափն ու յեռանքը։

Մուկուչն արգեն վերջացրել եր նամակը։ Նա ըս-
կրղից կարգաց զրածը և հարկառակ սպասածին, այս
անդամ ավելի հաջող եր ստացվել։ Նա բալականո-
չափ դոհ իր դրածից, ծալեց նամակը, գրեց ծրարի
մեջ և դուրս յեկավ բակ՝ մի քիչ թարմ ող չնչելու։

Չմեռային պարզկա յերեկո յեր։ Հեռվում, դյու-
զից բարձր սարի կատարին, աստղերի լույսից փայլ-
փլին ելին տալիս ձյան բյուրեղյա շերտերը։ Մուկուչն
ակամայից բարձրացրեց զլուխը և նայեց ջինջ յեր-
կընքին։ Հանկարծ ծիծաղը բոնեց և նա բարձրածայն
փոթիացրեց։

— Ե՛խ, աստղագետ Մուկուչ, — ինքն իրեն, սրտի
խորքից ասաց նա և մի պահ պատկերացակ նրան իր
մանկությունն ու անխինդ պատանեկությունը…

ՀԱՎԱՏ

Այս անգամ ևս նույն հուսափրաբ վիճակը : Այս անգամ ևս դուրս յեկավ կինոյից նույնպես հուսաբեկ, նույնպես այլայլված, ինչպես առաջին, ինչպես յերկրորդ, ինչպես յոթերորդ անգամ : Այդ արդեն ութեմբորդ անգամն եր, վոր գիտում եր նույն նկարը և ամեն անգամ ել նրան թմբում եր, թե արդյուրիմացություն է, նա չի կարող սպանվել, նա չպետք է սպանվի : Ահա հիմա նա կլողա, կանցնի գետը, կմիանա իր ընկերներին : Այդ թերեվա խարումիկ մի թակարդ և թշնամու համար, նա սուզվել է ջրի հատակը, վորափեսզի թշնամին մոտենա, նա յենի այդ թափառոցից և գրոհի նրանց վրա :

Ամեն անգամ, փոքրիկ Մեննին, յերբ զնում եր «Զապայել» կինոնկարը գիտելու, այսպես եր մտածում նկարի այն մասում, յերբ ցուցադրվում եր Զապայելի հերոսական մարտի վերջին պատկերը : Իսկ հետո, յերբ հանկարծ վառվում եյին ելեկտրական լույսերը, նկարն իրոք վոր դրանով ել վերջանում եր, Մեննին կարծում եր, թե այդ լենտը կտրվեց, վոր այդ ձեվով չի կարող վերջանալ, վոր Զապայելը անպայման պետք է հաղթանակի :

Այդ որը, ութերորդ անգամ նկարը դիտելուց հետո, յերբ նա դարձյալ նույն ձեվով վերջացավ, ինչպես վոր առաջ, Մեննին դուրս յեկավ կինոյից ավելի հուսակտուր, ավելի տիսուր :

Դրսում մաղում եր բարակ անձրեւ : Անձրեւի ցութերից փառակալել եյին ելեկտրական լապտերները և նրանց լույսը նվազել եր ու թուլացել : Դրաի այդ կիսամութն ավելի յեր հուղում փոքրիկ Մեննուն : Նա ինքնամուռացության մեջ ընկած՝ քայլում եր շատ դանդաղ և անորոշ ուղղությամբ : Փողոցներից սրբնաց անցնող տրամվայների զննոցն ու ավտոների աղմուկը չեյին ազդում նրա մտածմունքների վրա, նա գնում եր ինքնամփոփ և մտասուզ :

Տանը մայրն իսկույն նկատեց նրա հուզվածությունը, բայց Մեննին այդ մասին մոր վոչ մի հարցին չպատասխանեց :

Նա հաջորդ որվա դասերը գեռ չեր պատրաստել : Գրքերը գրեց սեղանի վրա, փորձեց դասերը պատրաստել, բայց վոչինչ դուրս չեկավ . չեր կարողանում կենտրոնանալ, մտածել դասերի մասին : Նրա ուշն ու միտքն ամբողջապես մի խնդրով եր զրադաշ :

— Նա չի կարող պարտվել . նա պետք է հաղթի . . .

Հայրը դուրս յեկավ իր առանձնասենյակից, տեսնելով յերեխայի մոայլ գեմքը, կնոջից հարցրեց պատճառը, բայց կինը վոչինչ չկարողացավ ասել :

— Յերեկի հոգնած ե—մտածեց հայրը և առաջարկեց նրան քնել : Սակայն նրա քունը չեր տանում : Նա յերբ մտաքերում եր նկարի պատկերները, առանձին եպիզոդները, աչքերն ավելի եյին բացվում, նրա մը-

տապատկերներն ավելի եյխն բորբոքվում ու պայծառանում:

Ահա Պետկան — Ժիր, ժագաղեմ այն կապուտաչյա տղան: Իրա—Մենակիր նման նա յել ե պառկել քնելու, բայց քունը չի տանում. նա չի ուզում քնել, նա ուզում ե խոսել իր հրամանատարի հետ:

— Վասիլիյ Խվանովիչ, Վասիլիյ Խվանովիչ, կարող ե՞ս մի ամբողջ բանակ դեկամարել:

— Կարող եմ, Պետկա, կարող եմ:

— Այո, նա կարող ե զեկալքարել, նա խիզախ ե, անվեհեր, նա քաջ ե ու հմուտ և նրան վոչ վոք չի կարող պարտել, —հաստատ համոզված մտածում ե Մեննին և քունը նրա աչքերից խսպառ չքանում ե:

Յերբ մտածում ե Զապայեվի հաստատ պատասխանների, վճռական քայլերի մասին, Մեննին ինքն ել ե խիզախանում, նրա տիրուն ել ե լցովում յեռանդով, մեծ վոգեվորությամբ: Նա ուզում ե հանկարծ ցատկել տեղից, ինչ վոր գոռալ, հրամայել, բայց կրկին իրեն զապում ե ու նորից պառկում անկողնու մեջ:

Այսպես յերկար մտածում ե նա, թերեւս մինչեւ ուղիղ կես դիշեր: Սակայն նրա մանկական ուղեղն ավելի յերկար չի դիմանում այդքան բուռն մտորումներին: Նա հոգնում ե, հետզհետև պատկերներն ավելի թույլ, ավելի աղոտ կերպով են լուսավորվում նրա ուղեղում և ապա նրա հոգնած կոպերն աստիճանաբար, հանդարտ նստում են իրար վրա, ինքնաբերաբար փակում նրա աչքերը...

Բայց ահա այստեղ ե, վոր նա տեսնում ե այն բոլորը, ինչ վոր այդ վերջին որերը զբազեցնում եր նրա միտքը, ինչ վոր բորբոքում եր նրա հոգին:

Ահա պարզկա, արեսու որ ե: Արեի յերկար շողերն են բեկվել գալարուն գետի ջինջ ջրերի մեջ: Լայնանիստ գետի վրա, նրա փոքրիկ կոհակներից բացի ել ուրիշ վոչինչ չի յերեսում: Հեռվից գեղի այդ անդորր գետը սրաբշավ կերպով թշնամու ամբողջ գունդը ե գալիս. նրանք քունը են իրենց ձիերը, մերկացրած թրերը վեր ցցած, և չկա մեկը, վոր նրանց դեմը յենիի: Բայց ահա, յերբ հասնում են նրանք այդ հանդարտ գետին, նրա ալիքների տակից հանկարծ գուրս ե գալիս Զապայեվին իր քաջարի մարտիկների հետ, սկսում գնդակահարել թշնամու արշավող ամբողջ գունդը:

Թշնամու դունդը մի պահ շշմած կերպով կանգ ե առնում, նա հանկարծակիր յե գալիս և խուճապի մատնված հետ նահանջում: Զապայեվցիների գնդակներն այդ ժամանակ իրենց գործն են տեսնում: Նրանք մեկ առ մեկ իրենց ձիերից ներքեւ են գլորում թշնամու գնդի զինվորներին: Հետո, յերբ չապայեվցիների տեսողությունից կենդանի մնացածները հեռանում են, նրանք գուրս են գալիս գետի ջրերի մեջ, հեծնում իրենց նժույղներն ու գրոհում՝ արգեն նահանջած թշնամու վրա:

Զապայեվցիների վոգենրությանն ել սահման չըկա: Թուչունների պես ողի մեջ մն խաղում նր սնց ձիերը: Լայն, ընդարձակ տափաստաններով արշավում են նրանց նժույղները: Բոլորից առաջ վազում ե Զապակեի ձին, իսկ նրա վրա՝ լեզենդաք հերոսը: Ուժեղ արշավից առաջացած քամուց բացվել են նրա յափունջու փեշերը, ողի մեջ տատանելով իր մերկացրած սուրը, վոր արեգի շողերի տակ ավելի յե փայլ-

փէին տալիս :

Հերոսական դրոհից բարձրացել եւ վոռշու ամպը,
ձուլվել արևի չողերի հետ ու մաղվում եւ Զապայելի
դնդի վրա :

Տեսողությունից աստիճանաբար հեռանում են
նաև չապայելցիները, բայց նրանց բարձրացրած վո-
շին դեռ յերեռում եւ, դեռ լսվում եւ նրանց դրոհի և
ուրախ, մարտական յերգերի ձայնը...

Մի հեռու բլուրի կատարից այս բոլորը տեսնում
եւ Մեննին և նրա սիրտը ուռանում եւ չտեսնված ու-
րախությունից : Նա ինքն ել եւ ուզում վազել չապա-
յելցիների հետեւից, հասնել նրանց, նրանց հետ միա-
սին դրոհի անցնել, բայց չի կարողանում, նրանք ար-
դեն հեռացել են : Նա այդ բարձր բլուրից միայն իր
գլխարկն եւ վերև բռնած թափահարում և իր ամբողջ
ուժով բարձր բղավում .

— Այս, յես ասում եյի, նա չեր կարող պարտ-
վել, նա պետք եւ հաղթեր և նա հաղթեց...

ԿԱՐՈՏ

Յերբ Յուրկա Լուչենկոն կոմյերիտմիության քա-
ղաքային կոմիտե յեր զնում, յեղանակը պարզ եր,
ջինջ ու հստակ և տների թիթեղապատ տանիքների
վրա իջել եյին արևի վերջին ճառաղայթները : Իսկ
այժմ, ընդամենը յերկու ժամ անց, նույն տանիքների
վրա ծվարել եւ թանձր խավարն ու յերկնաձիգ պա-
տերից մեկնված թիթեղյա հորդաններից քամվում են
անձրեվաջրի կաթիլները

Յուրկային մի պահ թվում եւ, թե անձրեն արդեն
դադարել եւ ջրհորդաններից թափվող ջուրը՝ այդ
նրա վերջին կաթիլներն են . մինչդեռ անձրելը հենց նոր
և սկսում : Կոմյերիտմիության քաղաքային կոմիտեյի
դիմացն ընկած փողոցի ասֆալտն անձրեաջրի առա-
ջին խակ կաթիլներից պսպղին և տալիս : Ելեկտրական
լույսի ճառաղայթները բեկվում են ասֆալտի վրա և
այնտեղ յերեռում եւ լուչենկոյի մութ պատկերը :

Յուրկա Լուչենկոն մտախոհ կերպով զնում ե
ասֆալտած փողոցով և իր չվաքը կրնկակոխ հետե-
վում եւ նրան : Անձրել հետզհետե ուժեղանում եւ:
Յուրկայի մոտով անցնող մարդիկ բոլորն ել շտապում

են, վաղում՝ չիրջվելու համար։ Սակայն այդ բոլորը նա դեռ չի նկատում։ Ինքնամոռացության մեջ ընկած, զլիսահակ, քայլում են նա, կարծես ինքն ել չիմանալով թե ուր։

Ներքուստ սիրտն ուրախությունից ուզում եւ բոցավառվել։ Վաղը ճանապարհում ե այն քաղաքը, վորի ժաման տարիներ շարունակի յերազել ե, ցանկացել ե զնալ, բայց վոչ մի անդամ չի հաջողվել։ Իոկ հիմա անպայման կընա. ահա կարմիր մանդատը գըրպանում դրած և զնալու համար ել վոչ մի արդելք չի կարող լինել։ Կզնա կարմիր մայրաքաղաքը, իր յերազանքի որբանը, վստահ քայլերով ներս կմտնի կոմյերիտմիության համագումարի դահլիճը և այնտեղ կտեսնի . . .

Անձրել շարունակում ե տեղալ։ Զրհորդաներից բարակ ջրվեժի նման ցատկուելով թափում ե ջուրը և լայն փողոցներով առվակի պես խոխոջալով հեռանում։

Յուրկան սթափվում ե։ Նա փորձում ե վագել, հասնել ելեկարաքարչի կանգառի տեղը, բայց հորդանձրել նեղում է նրան. զլիսարկի ծայրերից հոսող ջուրն ըձիքից ներս ե ծծվում, անցնում մարմնի վրա և սարսուցնում։ Նա, առանց ժամանակ. կորցնելու, մտնում ե առաջին խել պատահած շքաղուոը և սովասում այստեղ մինչեւ անձրեկի դադարելը։

Շքաղուն մեջ մութ ե. Յուրկան վոչինչ չի տեսնում. նա կանգնում ե գոան մոտ, նայում դեպի փողոց, բայց հանկարծ իրեն շատ մոտ, իսկասոց ե վըսում։ Անմիջապես հետ ե նայում և տեսնում, վոր իրենից քիչ հեռու մեկը կուչ ե յեկել պատի տակ,

թրջված, ցեխու և դողդողում ե։ Լուչենկոն մթության մեջ մի ոլահ լուռ նայում ե դողդողացողին, ուղում ե խոսեցնել նրան, բայց մեկ ել միտքը փոխում ե և վոչինչ չի ասում։

Այդ ժամանակ տկամայից պատկերանում ե իր մոռայլ անցյալը։

Ինքն ել եր ահա նույն վիճակում։ Թափառում եր քաղաքից-քաղաք, կայարանից-կայարան, գողություն անում, վղողոմություն ինդրում, պառկում պատահած չքաղսան սանդուխներին և որը մի կերպ անցկացնում։ Պատահում եր՝ որերով մի կտոր հացի յերես չեր տեսնում։

Մի որ, սաստիկ քաղցած և անձրելից թրջված, մտել եր մի չքաղուռ և այստեղ մենակ կուչ յեկել։ Նա անձարակորեն հեկեկում եր ու խորը մղկտում։ Այդ ժամանակ չքաղունով անցնող մի յերիտասարդ, բայց նրա աղեկտուր լացը, կանդ առավ և մոտեցավ նրան։

Յերիտասարդն ուշադրությամբ նայեց նրան և հարցրեց, թե ինչու յե լաց լինում։ Յուրկան նախ վոչինչ չուղեց ասել, բայց հետո, նկատելով անձանոթի անկեղծ հետաքրքրությունը, պատմեց լաց լինելու պատճառը։

Մի պահ խոր լուռթյուն տիրեց. նրանք սկսեցին զննողաբար իրար նայել։ Հետո յերիտասարդն առաջարկեց նրան իրենց մոտ գնալ։

Այդ առաջարկը շատ արտասովոր թվաց Յուրկային և նա սկզբից չեր հավատում, թե յերիտասարդը լուրջ և ասում։ Իսկ հետո տեսնելով, վոր նա իրոք պնդում ե իր առաջարկը, համաձայնեց։

— Ինչ ուզում ե թող լինի, — մտածեց նա և
հետեւ յերիտասարդին:

Նրանք նույն շքաղբնով բարձրացան զերորդ
հարկը, անցան ելի մի քանի գոներ, մտան մի ընա-
կարան, ուր յերիտասարդը Յուրկային թողնելով նա-
խամեն յակում, ինքը գնաց մյուս սենյակը, յերեվի
մորն այդ մասին իմաց անելու համար:

Եեկալ յերիտասարդի մայրը, խղճահար դեմքով
նայեց Յուրկային և գնաց խոհանոց՝ նրա համար ու-
տելու բան բերելու, իսկ յերիտասարդն զրազվեց
Յուրկայով: Յերբ նա հարցնում եր, թե ով ե նա,
վորտեղից ե յեկել, քանի տարեկան ե և այն, Յուր-
կան հոնքի տակով ուշադրությամբ նրան եր նայում:
Դա շատ համակրելի գեղքով, վառվուն աչքերով և
հաղիվ Յուրկայի հասակին մի տղա յեր: Նրա պար-
զությունը տեսնելով, Յուրկան վոչինչ չեր ուզում
նրանից թագանել, սակայն քաղցը, վորեե բան ուտե-
լու անզուսպ ցանկությունը սղմում եր նրա կոկորդը:

Քիչ հետո խոհանոցից վերադարձավ մայրը, թեյ
ավեց նրան: Թեյլից հետո պառակը սիրալիրությամբ
նրա առաջ դրեց մի մեծ ափաէ տաք կերակուր, մի
կարմիր խնձոր և Յուրկայի տրամադրությունն ավելի
բացվեց:

Յուրկային շատ ուշադրությամբ լոելուց հետո,
յերիտասարդն սկսեց համոզել նրան, վոր թողնի
այդորինակ կյանքը: Նա ասում եր, վոր չի կերելի
այդպիսի կյանք վարել: Իսկ Յուրկան դեռ կյանքի
մեջ չի մտել: Գոյություն ունենալ և չնչել, այդ դեռ
կյանք չի նշանակում: Կյանքում իմաստ պետք ե
փնտուել, կարողանալ և սիրել, և սիրվել, ընկերներ

ունենալ, աշխատել կարողանալ: Իսկ վո՞րն ե Յուր-
կայի փնտուած իմաստը կյանքում: Ո՞վ ե սիրում
Յուրկային, ո՞ւմ ե սիրում ինքը՝ Յուրկան: Իսկ այս
բոլորի համար բավական ե միայն աշխատել: Աշխա-
տանքն ամեն ինչի մայրն ե: Աշխատանքի բովում
ամեն ինչ կծնվի Յուրկայի համար: Այդ ժամանակ
կյանքը նրա համար իմաստ կտանա... Իսկ այժմ
ծաղկում ե կյանքը Յուրկայի շուրջը — պայծառ,
փարթամ ու փառահեղ, իսկ Յուրկան դրան նայում է
մի խափար տեղից, ոտարի նման...

Հետո մեծ վողեռությամբ նա պատմեց մեր հայ-
րենիքի պայծառ յերիտասարդության մասին, վորի
համար ստեղծվել և յերջանիկ մի կյանք — իսկնդով
լեցուն, բուռն ապրումների հույզերով լեցուն, անո-
րինուկ սիրո և աշխատանքի խանդավառությամբ լե-
ցուն...

Յուրկան կլանվել եր յերիտասարդի պատմածով:
Նրա աչքերը հետաքրքրությունից վասվում ելին և
նրան թվում եր, թե իր ականջներին հասնողը վոչ թե
յերիտասարդի խոսքերն են, այլ Յուրկայի սրտին
շատ մոտ ինչ վոր գյութիչ յերաժշտություն, վորը
նա շատ վազուց եր ուզում լսել, բայց չկար մեկը,
վոր նվազեր նրա համար...

Գիշերն արդեն կիսվել եր. յերիտասարդը վոդե-
վորությամբ պատմում եր, իսկ Յուրկան չեր ուզում
և վոչ մի բանով ընդհատել նրան: Այդ գիշեր Յուր-
կան պառկեց նրանց նախասենյակում: Առալույան,
յերբ արթնացալ, նրան թվաց, թե իր կյանքում այն-
քան տաքուկ անկողնում և այդքան հանդիստ յերեք
չի քնել:

Արթնանալուց հետո ակամայից կրկին վերհիշեց
այն բոլորը, ինչ պատմել եր յերիտասարդը յերեկո-
յան: Հետո նա մտածեց, թե այդ ինչպես ե, վոր նը-
րանք համաձայնեցին Յուրկային իրենց սենյակում
թողնել և չվախեցան, վոր կարող ե գիշերն ամեն ինչ
դողանալ և փախչել:

Իսկ առավոտյան, յերբ ներսի սենյակից գուրս
յեկով յերիտասարդը, Յուրկան արթուն՝ ըլջլում եր
անկողնում անհանդիսատ:

— Հը, ի՞նչպես քնեցիր, — աչքը Յուրկային ընկ-
նելուն պես իսկույն հարցրեց յերիտասարդը:

— Լավ յերազներով . . .

— Եղ լավ ե, շատ լավ ե, միայն պետք ե այն-
պես անել, վոր այսուհետեւ ել այդպես լինի:

— Ինձ դործի կընդունե՞ն:

— Յեթև աշխատես, կընդունեն . . .

Գործի գնալուց առաջ յերիտասարդը մի գրու-
թյուն ավեց նրան, բացատրեց, թե ինչպես պետք և
դանի դործարանը և Յուրկայի հետ միասին տնից
գուրս յեկալ: Յերիտասարդը դնաց իր աշխատանքին,
իսկ Յուրկան՝ նրա ասած դործարանը գտնելու . . .

Մոտ հինգ տարի յէ անցել:

Այժմ այդ բոլորը Յուրկայի համար յերազ ե թր-
վում: Նրան թվում ե, թե իր հետ նման բան յերեք
չի յեղել, այլ մի ուրիշի պատմածն ե, վոր ինքը Առ-
սել ե:

Յերիտասարդի գրության համաձայն դործարանի
դիրեկտորը Յուրկային աշխատանքի ընդունեց: Իսկ
դրանից հետո Յուրկան այլևս չհանդիպեց այն յերի-
տասարդին: Ուղիղ մեկ տարի դործարանում աշխա-

տելուց հետո, մեկ որ վորոշեց գնալ նրա մոտ՝ տուն
և չնորհակալություն հայտնել նրա արած մեծ լավու-
թյան համար: Գործից հետո գնաց հանրակացարան
(այն ժամանակ առանձին սենյակ դեռ չեր ստացել),
փոխեց բանվորական հագուստը և ճանապարհվեց գե-
պի նրանց տուն:

Ճանապարհին նս մտածում եր այն մասին, թե
արդյոք յերիտասարդը կամ նրա մայրն իրեն կճանա-
չե՞ն, ի՞նչպես կընդունեն այժմ նրան: Իսկ յերբ հա-
սել եր նրանց տանը, յերկար ժամանակ չեր համար-
ձակիում գուռը ծեծել:

Ներսից նվազածության ձայներ եյին լսվում:
Ըստ յերեվույթին այնտեղ շատ մարդ կար և ինչ-վոր
քեզ եյին անում: Նա դռան առաջ վորոշ ժամանակ
անորոշ վիճակում կանգնելուց հետո, վերջապես ծե-
ծեց դուռը:

Դուռը բաց արակ յերիտասարդ մի կին և շատ
ուշադրությամբ նրան նայելուց հետո հարցրեց.

— Ո՞ւմ եք ուզում:

Յուրկան շվարեց: Ի՞նչ ասեք: Զե՞ վոր յերիտա-
սարդի անունը չգիտեք:

Արյունը խիեց Յուրկայի դեմքին: Նա մի պահ
այլայլած գրությամբ յերիտասարդ կնոջը նայելուց
հետո՝ կակաղելով հաղիս ասաց.

— Այստեղ մի յերիտասարդ եր ապրում . . .

— Հիմա յել յերիտասարդ ե ապրում, — տղայի
շփոթվածությունը նկատելով, սիրալիր պատասխա-
նեց այն կինը և նրա պատասխանը մի քիչ քաջալերեց
Յուրկային:

— Ճիշտն ասած նրա անունը յես մոռացել եմ:

Գուցե մի ըռպեյով իրեն դուրս կանչեք:

Կինը տարակուսանքով հետ զնաց և չանցած մի ըռպե—սենյակից դուրս յեկալ մի յերիտասարդ և ուշադիր նայելով մոտեցալ նրան:

Նրանք առանց խոսելու մի պահ ուշադրությամբ նայեցին իրար և ել ավելորդ հարցերի կարիք չեղավ: Դա ժիանդամայն ուրիշ մարդ եր: Յուրկան առանց վորեւ բան ասելու՝ լուռ հետ դարձավ:

— Ընկեր, իսկ ո՞ւմ եյիք ուղում, — նրա հետեւ վից կանչեց սենյակից դուրս յեկողը:

— Յես ուրիշ մարդու յեմ փնտրում, — անտարբերությամբ պատուախանեց Յուրկան ու լուռ հեռացավ:

Հաջորդ որը, ճաշի գաղարին, Յուրկան զնաց զործարանի դիրեկտորի մոտ.

— Ընկեր Բեսյուդ, դուք հիշո՞ւմ եք, վոր յես գործարանում ընդունվելու համար առաջին անդամ մի գրություն տվի ձեզ:

— Հորըս հարսանիքի նման. ինչո՞ւ յես հարցնում, լուչենկո:

— Յես ուղում եմ իմանալ, թե ինչպես եր այն յերիտասարդի անունը, վորից յես գրություն եյի բերել:

— Դու նրանից գրություն ես վերցրել, առանց անունն իմանալո՞ւ:

— Ըսկի չեմ ել իմացել, թե ով եր նա...

— Հետաքրքիր ե, չատ հետաքրքիր: Իսկ հիմտինչի՞դ ե պետք:

— Ուղում եմ նրան տեսության զնալ:

— Ե՞ւ, չես կարող. նա հիմա այստեղ չե: Նա

այն ժամանակ մեր կոմյերիտմիության շրջանային կոմիտեյի քարտուղարն եր: Իսկ այժմ Մոսկվա յէ գնացել սովորելու: Զբաշալի տղա յե, ով գիտե, մեկ ել այստեղ կվերադառնա յերեկի պրոֆեսորի կոչում ըստանալուց հետո...

Յուրկային թվաց, թե գլխին սառը ջուր թափեցին: Նա չվարեց և յերկար ժամանակ առանց մի խոսքի դիրեկտորի յերեսին նայեց:

Իսկ այնուհետեւ վորքան և լողձացել Յուրկան այն յերիտասարդին, վորպիսի անձուկ ցանկություն և ունեցել գեթ մի անդամ ել տեսնել նրան, ամուր, շատ ամուր սեղմել ձեռքը և սրտի անհուն խորքից մեծ չնորհակալություն հայտնել նրան...

Շքադրան մեջ Յուրկայի մոտ վախսացողը դուրս յեկալ և լուռ հեռացավ: Յուրկան նայեց նրա հետեւ վից և նրա մտածմունքների թելը կտրվեց...

Անձրեն արդեն գաղարել եր: Բարձր տների բաղմաթիլ պատուհանների փեղկերից կաթկիտում եյին անձրեղաջրի վերջին կաթիլները և ելեկտրական լույսերի ճառագայթների տակ փայլվլին եր տալիս լայնանիստ փողոցի ասֆալտը:

Յուրկան դուրս յեկալ մութ շքադրից և միացակի փողոցի բաղմաթիլ յերթեեկողներին: Նա քայլում եր մարդկանց հավասար, բայց այդ պահին նրա սրտում բորբոքվել եր իր լավ բարեկամին տեսնելու անշեղ կարսու, բոցավառ մի կարոտ, վոր ուղիղ հինգ տարի յեռում և նրա սրտում և յերբեք չի մարի...

ՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՃԱՇԱՑՈՒՑԱԿԻ ՎՐԱ

Լիդան գասուերից գեռ չի վերադարձել: Մինչեւ նա կդա, յես արդեն վերջացրած կլինեմ այս պատմությունը: Յերբ գրածս միասին կարդանք, թէրևս կըրկին անդրադառնանք յերեկվա մեր դիմկուսիային:

Յես ուզում եմ, վոր Լիդան անպայման խմանա այս պատմությունը, վորովհետեւ կեսորից սկսած դա ինձ հանգստություն չի տալիս, անընդհատ բորբոքում ե ուղեղս: Մինչեւ հիմա յես ուրիշ բանի մասին չեմ կարողանում մտածել: Մինչեւ հիմա յել աչքերիս առաջն ե նրա վերջին հայցքը, ավտոմեքենան, վոր թոցրեց նրան: Յես այժմ հիշում եմ, վոր ճշշտ արդարս եր նաև իմ նախորդ յերկու հանդիսումների ժամանել: Այն ժամանակ ել այդ աղջկանից հեռանալուց հետո՝ յերկար ժամանակ միայն նրա մասին եյի մտածում:

Դայց ավելի լավ ե հերթով պատմե՞մ:

Դա յերեք տարի սրանից առաջ եր: Իմ աշխատանքի գծով գործուղման եյի գնացել Խարկով: Զդիտեմ այն եր պատճառը, վոր առաջին անդամն եյի լինում այդ քաղաքում, թէ կար մի այլ պատճառ, վոր Խարկովն ինձ այդքան դուր եր գալիս:

Ժամերով ձրջում եյի քաղաքի մաքուր փողոցներով, բայց յերբեք հողնածություն չեյի զգում: Նույնքան հաճելի յեր ինձ համար լինել այն հրորանոցում, ուր իջևվանել եյի: Յես ուզզակի հիացած եյի նրա ծառայողների մարդավայրել, կուլառուրական մերաբերմունքից:

Ճաշում եյի նույն հյուրանոցի ճաշարանում: Յեթե պատահեր, վոր ճաշի ժամանակի ուրիշ տեղ լինելի, դարձյալ չեյի համաձայնի այլ ճաշարան մտնել: Հյուրանոցի ճաշարանում յես ինձ համար հատուկ տեղ եյի ընտրել: Նստում եյի թե չե՞ մտուցողուհին ճերմակ խալաթը հագին, ճաշացուցակը բռնած, խկույն մոտենում եր ինձ և սպասում իմ առաջարկին:

Դա բարձրահասակ, գրավիչ աքչերով մի աղջիկ եր: Նրա մոտ մի քանի անգամ ճաշելուց հետո ինձ թվաց, թէ առաջին անգամը չեյի հանդիպում նրա հետ: Բայց թէ վորտեղ եյի տեսել, այդ ել չեյի հիշում: Շատ մտածեցի այդ մասին, աշխատեցի հիշել, բայց չկարողացաւ:

Մեկ որ, ընթրիքից հետո, ճաշի գինը վճարելիս, չգիտեմ ինչ մտածեցի, հաշվից ավել հինգ ուուրի դրի փողերի արանքում և այնպես տվի նրան, վոր ինքը չիմացավ:

Հաջորդ որը, յերբ կրկին իմ վորոշակի սեղանին մոտեցա, սովորականի պես առաջ յեկավ նույն մատուցողուհին և ճաշացուցակը մեկնեց ինձ, սակայն այնտեղ փոխանակ ճաշի անունների, յես հետեւյալ մակաղերությունը կարդացի:

«Քաղաքացի, պատահաբար խմացա, վոր դուք

մեր հյուրանոցումն եք ապրում : Յերեկ դուք ընթրե-
տվ՝ հաշվից ավել հինգ ոռոբլի թեյի փող եյիք թո-
ղել ինձ համար : Զխոսելով այն մտսին, վոր առհա-
սարակ յես թեյ չեմ խմում, այլ խմում եմ միայն
կոթով սուրճ, և նման թեյափող ընդունելը համա-
րում եմ սուրովթյուն : Ինքո վաստակում եմ բավա-
կանաչափ և վողորմության կարիք չեմ դուռ:

Զեր հինգ ոռոբլին կցում եմ սույն գրությանը .
սուսազործեցեք ավելի հարմար ձեզով և հետազա-
յում հիշեցեք, վոր ձեզ մատուցող աղջիկը տղա-
մարդկանց վողորմությամբ ասլրող ինչ վոր մի ան-
ձարակ արարած չե, այլ խորհրդային քաղաքացի,
ժողոնունդիության անդամ և ոտարերկրյա լեզու-
ների պետական ինստիտուտի Փրանսիական բաժնի
ուսանողուհի :

Մատուցողուհի՝ Ա.» :

Դեռ մակագրության լինթերցումը չվերջացրած,
քրտինքն արդեն պատել եր ինձ : Վերջացնելուց հե-
տո յել յերկար ժամանակ չեյի համարձակվում դլու-
խը բարձրացնել, նայել աղջկան : Ինձ սթափեցրեց
նրա հարցը :

— Ձեզ համար ի՞նչ թե՞րել :

— Ես... յես վոչինչ, յես այսոր չեմ ճաշելու...

Նա առանց մի խոսքի շրջվեց ինձնից, հեռացավ,
բայց հենց նույն պահին յես հիշեցի, թե առաջին
անգամ վորտեղ եմ հանդիպել այդ աղջկա հետ :

Դա 1931 թվին եր, քիչ առաջ պատմածս դեպքից
յերկու տարի առաջ : Գնում եյի «Մոսկա-Թբիլիսի»
վնացքով : Միամյա եքակուրսիայի ժամանակ այնքան
անքուն դիշերներ եյի անցկացրել, վոր այդ դիշեր

գնացք նստելուն պես անմիջապես քննեցի : Առավոտ-
յան արթնացա գնացքին ուղեկցող աղջկա ձայնից :
— Զե՞րն ե այս ժամացույցը :

Նայեցի, իմ ժամացույցն եր : Գիշերն ընկել եր
գրպանից, յես չեյի իմացել : Շնորհակալություն
հայտնեցի աղջկան, վերցրի ժամացույցս և յերբ գր-
նում եյի լվացվելու՝ մտա նրա ոթյակը, ինքն այնտեղ
չեր, քսան ոռոբլի դրի նրա սեղանի վրա ու դուրս
յեկա :

Ես արգեն հասել եյի այն քաղաքը, ուր զնում
եյի : Իրերս վերցրել, վաղոնից դուրս եյի յեկել և
զնում եյի : Պերոնում հանկարծ թևիցս բռնեց ուղեկ-
ցող աղջկին ու մեկնեց իմ քսան ոռոբլիանոցը, վոր
յես թողել եյի նրա սեղանի վրա :

— Խնդրեմ հետ վերցրեք ձեր փողը :

— Բայց...

— Վոչ մի բայց, — իսկույն ընդհատեց աղջիկը, —
յես վոչ մի արտակարգ բան չեմ կատարել . վերցրել
եմ դետին ընկած ձեր ժամացույցն ու հանձնել ձեզ :

...Մատուցողուհին մոտեցել եր մի այլ սեղանի .
յես լուռ, ճաշարանից դուրս գնացի : Լավ ե, վոր
Խարկովում գործերս արդեն վերջացրել եյի : Նույն ու-
րը դուրս յեկա հյուրանոցից և ճամբար ընկա, կարծե-
լով, վոր այլևս ինձ չի վիճակվի, հանդիպել նույն մա-
տուցողուհու հետ : Բայց հաշիվներիս մեջ սիսակե-
ցի : Այսոր յերբորդ անդամ հանդիպեցի նրա հետ :

Դա իսպանական դեպքերի առթիվ գումարված
բազմահաղար մարդկանց միտինգումն եր : Սկզբում
խոսում եյին ինձ ծանոթ մարդիկ : Հետո խոսք տրը-
վեց Ֆրանսիայից յեկած ինչ վոր պատվիրակու-

թշան ներկայացուցչին, վորի հետ ամբիոն բարձրացավ նաև բարձրահասակ, մաքուր հաղնված մի կին: Յես խոկույն հասկացա, վոր նա պետք է թարգմանի պատվիրակի առաջը և միայն այդքանը: Այնուհետեւ տարվեցի պատվիրակի ճառով, թեև նրա խոսքերից վո չմի բառ ել չեյի հասկանում: Պատվիրակից հետո խոսքը տրվեց թարգմանիչին: Ամբիոնի մոտ կանգնած կինը, վորը մինչև այդ գրում եր, ձայն ստանալուն պես մի քանի քայլ առաջ յեկալ և ակաց: Սակայն դժվար է արտահայտել, թե ինչպիսի կրակ մը թափվում նրա բերանից: Վոչ վոք չեր կարող կարծել, թե նա թարգմանում է, այլ վոչ թե ասում է այն, ինչ իր սիրոն է թելադրում, ինչ իր սրտիցն է բղխում: Դժվար է պատմել, թե նա ինչպես եր գրավել վոտնկայս լող տասնյակ հազարավոր մարդկանց: Նրա խոսքերը ռադիոյի ալիքները թույնում եյին միտինգի ամենավերջին շարքերը, վոչ վոք ամենավորքիկ շարժում անդամ չեր անում, վորպեսդի բաց չթողնի նրա խոսքերը: Բոլորն ել իրենց հայացքները գեղի առաջ եյին հառել, բոլորն ել ուզում եյին ավելի լավ տեսնել այդքան կրակոտ խոսող աղջկան: Իսկ աղջիկը թափում եր իր խոսքերի հոսանքը, հետազահետեւ ավելի վոգելով:

Ինձ հայոնի չե, թե նա վորքանով եր ճիշտ թարգմանում պատվիրակի խոսքերը: Բայց յես բացի բաց տեսա, վոր մինչ նա խոսողներից վոչ վոք այնքան չհուղեց, վոչ վոք այնքան չներշնչեց վորքան այդ աղջիկը: Նա ըստած արտահայտել խոսքերով եր պատմում Փաշխտական գաղանությունների մասին,

իսպանական քաջարի մարտիկների մասին, վորոնք իրենց արյան վերջին կաթիկներն անդամ չեն խնայում իրենց հայրենիքն արնախում Փաշխտաներից աղատելու համար:

Վերջում նա Դոլորես իրարրուրիի անունը ուղղվեց: Նա ամենավառ գույներով պատմեց, թե վորպիսի յեռանդով, վորպիսի անվեհերությամբ և աշխատում այդ քաջակորով կինը, ինչպիսի թափով և նա հազարավոր, տասնյակ հազարավոր մարդկանց վոտքի հանում, մարտի կոչում հանուն ազատ իսպանիայի:

Աղջիկը վերջացրել եր իր խոսքը: Թնդում եր գորոտավից «ուռուան»: Ամենը ել ցանկանում եյին կրկին անդամ ամբիոնի վրա տեսնել կրակոտ աղջրկան: Յես չեռ չեյի կրառանում ուշքի դալ. ինձ թփում եր, թե ամբիոնի վրայից իջալ ինքը՝ իրարուրին...

Հետո հետեւվեցի յես նրան մինչև միտինվերջը: Ավտոմեքենաները մոտեցան Փրանսիական սրատվիրակությանը: Պատվիրակության բոլոր անդամներն ել բարձրացան մեքենաները: Վերջում, ամենից հետո, թարգմանող աղջիկը մի խոսք ևս ձբդեց գեղի վամբվածներն ու մտավ մեքենան: Մեքենայի հետեւվի խողովակից յելավ թանձք ծուխը. նու ոլացավ, իսկ յես միայն այդ ժամանակ հիշեցի աղջրկան, իմ ժամացույցի պատմությունը, ճաշացույցի վրայի ժակադրությունը...

ԸՆԴՀԱՏՎԱԾ ՈՐԱԳԻՐԸ

Այդ որը վոչ վոք չեր բացակայում։ Նախորդք իմանալով զբաղմունքի հետաքրքիր նյութի մասին՝ բոլոր կոմյերիտականներն ել ժամանակից շուտ հավաքվել, ցեսի կոմյերիտակազմակերպչին ելին սպասում, վորի մոտ դժունում եր Լեռկադ Բյուրգերի որագիրը։ Կոմյերիտակազմակերպչի գալուց հետո ել կարիք չկար սպասելու. անցան կոմյերիտանկյունն ու սկսեցին ընթերցանությունը։ Ահա այդ որագիրը։

Հիմա արեւ նստել ե Դինարի ուսին։ Քիչ հետո կղլորվի սարի մյուս կողմը և դա իմ վերջին հրաժեշտը կլինի արելին։ Բայց մի՞թե այսքան ուշ ե։ Ժամիարներն արդեն իրենց պաշտոնին անցան։ Ա՛խ, յերեի մայրիկս ել ե պատրաստվում յեկեղեցի գնաւու. . . Խե՞զ պառակ, մի ամբողջ շարաթ փնտուցիր քո Լեռկադին՝ չդտար. Հիմա յեկեղեցի զնա, աղոթիր, վոր աստված պահի նրան։ Կորած վորդուդ վշտից այս որերին աստծուն ել ելիր մոռացել։ Իսկ այժմ աղոթիր. անձարակ մարդը սին մտքերով շուտ ե տարվում։ Յեթե փրկության ուրիշ յելք ունենալիր,

ինքդ կտնորինելին քո բախտը, առանց ճերմակամիթուքի վրա հույս դնելու. . .

Բայց ինչո՞ւ յեմ յես այսպես ցրվում։ ԶԵ՞ վոր ժամանակն արդեն անցնում է, իսկ յես Երիկի մասին գեռ բան չեմ դրել։ Արդյոք, ավելի լավ չի լինի, յեթե այստեղ դնեմ բանում դրած որագիրս ահա այսպես. . .

1936 թ. բանտում

Մայիսի 2

ՄԵՆՔ կարծես թե ժամանակից չուտ եյինք գնացել։ Դատարանի առջևի հրապարակում չատ քիչ մարդ կար։

Թեև թոռւցիկները բավականին խնամքով եյինք դարսել արկղում՝ ծխախոտի տուփերի տակ, բայց և այնպիս անհանդիսա եյինք։ Վախենում եյինք վոստիկանական հոտառու լրտեսներից։ Ինձ թվում եր, վոր այդ անհանդասությունն ավելի նկատելի յեր Երիկի դեմքի վրա։ Դրա համար ել յես փորձում եյի կատակել, սրախոսել, ցրել նրա յերկյուղը։

Դատավարությունը դեռ չեր սկսվել։

— Աչքիս մարդ չի յերեվում, — հուսահատորեն շշնչաց Երիկը։

— Սպասիր, — ասացի յես, — դեռ շուտ ե, կդան։

Յեկ փրոք, քիչ հետո յեկողների թիվն արդեն շատացավ։ Յերբ ելեկտրական լույսերը վառվեցին՝ հրապարակում այլևս կանոնելու տեղ չկար։

— Տեսա՞ր, վոր ասում եյի դեռ կհավաքվեն։

— Հավաքվելու — հայտաբեկցին, — ասաց Երիկը, — բայց ոլանակներս վերջանում են. ի՞նչ պետք ե անեմ։

— Եղ լավ չի, չատ ել մի շտապիր ծախելու. . .

143

այստեղ պարագ կանդնած տեսնելով՝ կկասկածեն:

Վոստիկանական խմբեր դեռ չեյին յերեվում:
Երիկն ասաց.

— Բոռերը գեռ չեն հավաքվել. հարկավոր ե շրջապետ, թե չե հետո դժվար կլինի:

— Այժմ շուտ ե. թող մի քիչ անցնի, մարդիկ շատանան, հետո:

Հետո մենք պայմանավորվեցինք այլևս չմոտենալ իրար: Նա հրապարակի մի ծայրից, յես մյուս ծայրից պետք ե ցրելինք թուոցիկները հավաքվածների մեջ ու ծածուկ փախէլինք: Այդպես պայմանավորվելուց հետո Երիկը բարձրածայն յերգելով ինձնից հեռացավ:

— Զի լինի^o, վոր ձեր մտքում յերգեք, հերր*), հրապարակը ձեզ համար Հո բեմ չի, — ինչ վոր տեղից հանկարծ հայտնվելով ասաց մի վոստիկան և մոտեցավ Երիկին:

— Խելոք խորհուրդներին մենք միշտ հնազանդվել ենք, — կեղծ քաղաքավարությամբ և խոնարհարար պատասխանեց Երիկը, արկղից վերցրեց բաց ծընթախտառութը, և, սիրալիր մեկնելով վոստիկանին, ամելացրեց. — Շատ յերջանիկ կղղամ, յեթե չըհրաժարվեք:

— Ձեր խնդիրը չպետք ե մերժենք, — ասաց վոստիկան և չորս կողմը նայեց: Տեսնելով, վոր իրեն վոչ վոք չի նայով, վերցրեց մի ամբողջ տուի և լուր հեռացավ: Բայց մի քանի քայլ չանցած, մեկ ել կարծես թե մի նոր բան հիշելով, կրկին հետ դարձավ, նայեց Երիկին ու ամելացրեց.

* Հերր—պարոն:

— Ավելի լավ ե ձեր մտքում յերգեք, հերր, այստեղ բնմ չե...

Հետզհետե ամբողջ հրապարակն ավելի յեր լցվում մարդկանցով: Հրապարակի ուղիո-բարձրախոսը ըսկակ հաղորդումը: Յես փորձեցի մոտենալ դատարանի գոնսերին, ուր մարդկային խմբերն ավելի խիտ ելին, բայց տեսնելով, վոր Փաշիստ վոստիկաններն ել են շատ, մեկ ել լուր հետ դառա:

Այդ նույն ժամանակ արգեն ոդի մեջ, մարդկանց գլխավերեվում որատիկեցին Երիկի ցրած թուոցիկները: Մարդիկ խոնվեցին իրար: Նրանց մի մասն իսկույն հարձակվեց թուոցիկների վրա, մի քանիսն ել վախեցած հետ քաշվեցին, վորպեսզի իրենց կասկածի չենթարկեն: Վոմանք ել ապշած նայում եյին խոնվաճներին: Այստեղ իմ մնալն ավելորդ եր, յես լուր հետ գարձած: Տեսնելով իբրամնցումը գատարանի գոների մոտ, հրապարակում կանգնածներն ել վազեցին դեսի այնտեղ: Առիթից հարկավոր եր ոգտվել: Յես արկրղիցս իսկույն հանեցի թուոցիկներն ու ամբողջ թափով շաբաթեցի առաջ վազող մարդկանց վրա: Նրանք վախեցած մի պահ կանգ առան, վորպես թե նրանց վրա ոռումբ նետած լինեյին, բայց, տեսնելով ոդի մեջ պատվող թռուցիկները, հարձակվեցին հավաքելու խակ յես շտապեցի արանքից դուրս պրծնել, աակայն, մի քանի քայլ դեռ չարած, ուժեղ հարվածն իշավ ուսիս: յես վայր ընկա...

Յերբ վոստիկանատան գոները բացվեցին իմ առաջ, Երիկն այստեղ լուր կանգնած եր... Նրան ինձն չեց չուտ եյին տեղ հասցրել:

— Այսպես, սրանք ամբողջ աշխարհում ավելի
լավ տեղ չեյին կարող դանել, — ինձ տեսնելուն պես
առաջ անքնությունից, կամ ակահոլից ուռած աչքե-
րով, կարծահասակ վոստիկանապետն ու մոտեցավ
ինձ. — ինչպես տեսնում եմ, դու ևս դլանակ ծախող
ես:

— Ճիշտ այդպես, հերթ:

— Այս յերիտասարդի հետ միասին եք ծախում,
թե ջոկ-ջոկ, — մատնացույց անելով Երիկին, առ
սաց նա և ուղիղ աչքերիս նայեց:

— Մենք ժողովրդական այդու առաջ ենք լինում:
իմանալով, վոր այսորվա դատավարությունը շատ
մարդ կդրամի, գնացինք այնտեղ:

— Իսկ այստեղից ել՝ ահա այստեղ: Դե լավ, առ
ույժմ չենք հարցաքննի: Գուգո, — դիմեց նա իրենից
քիչ հեռու կանգնած վոստիկաններից մեկին, — տար
յերիտասարդներին, թող քիչ հանդառանան: Կը
հարցաքննենք առավկոտյան:

Այս ասելով, նա իսկույն դուրս գնաց, իսկ Գու-
զոն՝ ուռած վորով մեկը, մոտեցավ մեզ, կանգնեց
մեր յերկուսի արանքում, մեկ ձեռքով բռնեց իմ ա-
կանջից, մյուսով՝ Երիկի և ամուր քաշելով առաց.

— Դե, զուտ արեք, հրամանը չլսեցի՞ք:

Վոստիկանատան դռներից մեկը բաց անելով՝
Գուգոն տարավ մեղ աղոտ լույսով լուսավորված մի
նեղ տեղով, ապա բաց արեց ինչ վոր մի դուռ, յեր-
կաթե սանդուխներով իջանք ներքև, դեպի գետնի
տակը, վորտեղ վոչ լույսի շող կար և վոչ ել կարող
եր այստեղ մարդկային վորեվե ձայն լսվել:

Հեղձուցիչ և խոնավ ողը ծանրացավ մեզ վրա:

Սառը քրտինքն ամբողջապես պատեց մեղ: Վոստիկա-
նի դուրս գնալուն պես յերկուս ել թուլացած փըռ-
վեցինք ցեմենտի վրա, առանց իրար հետ վորեւ խոսք
վորիանակելու:

Մայիսի 5

Վոստիկանատան նկուղում յերկու որ պահելուց
հետո՝ յերեկ այնտեղից մեղ բանտ վոխադրեցին:

— Այստեղ գոնե արելի յերես կտեսնենք, — ա-
սաց Երիկը վոստիկանի գուրս գնալուն պես, յերք
բանտում յերկուսով եյինք մնացել:

— Այս, կարծ ժամանակով:

— Մի՞թե կարծում ես, վոր այստեղից ել ուրիշ
կտմերա կտեղափոխեն:

— Բւրիշ կամ՞թե մա... Այս, վորտեղ վոչ արել կա,
վոչ ել կյանք...

Ի՞նչու թաղցնելի: Հարկալոր եր, վոր նա յել
ընտելանար այդ մտքի հետ:

Մայիսի 6

Յերեկ Երիկը միայն մի խոսք ասաց: Այսուհետեւ
յերկուս ել լուցինք: Ել ինչի՞ մասին խոսելինք: Մի-
այն այսոր, կեսորից հետո, ինձնից հարցրեց.

— Այսոր ամսի քանի՞ոն ե:

— Վեցը: Իսկ ինչի՞դ ե պետք:

— Հենց այնպես:

Հստ յերեւութին ինչ վոր բան կար ասելու,
բայց նա տատանվում եր: Յես նորից հարց չովի,
զիտելի, վոր միկնույն ե, խոսելու յե:

— Յերեկ պետք ե հանդիպելի իզորդայի հետ, —

քիչ լոելուց հետո, կարծես թե միայն իր համար, ցածը ձայնով ասաց նա:

— Յերեվի խեղճ աղջիկը յեկել, յերկար սպասել եւ ու մենակ վերադարձել, — լոռությունը խզելու համար ասացի յես:

— Այդ վոչինչ, միայն յես վախենում եմ, վոր...

Հետո նա պատմեց, վոր ժամադրությունը վատ տեղ է նշանակել — Հասուլենի այգում, վորտեղ ամեն յերեկո հավաքվում էն Փաշխատ յերիտասարդները...

Յես ճանաչում եյի իղուդային: Նա աշխատում եր կենտրոնական փոստում, գրոշմանիներ եր ծախում: Երիկն եր մեզ ծանոթացրել: ‘Նրանք հաճախակի եյին հանդիպում և ամեն անդամ ժամադրությունից վերադառնալուց հետո Երիկը ժամերով պատմում եր ինձ իղուդայի մասին:

Վերջերս տալրանում շատ զբաղված լինելով, Երիկը հնարավորություն չեր ունենում հաճախակի հանդիպելու իր սիրած աղջկա հետ: Ամսիս 5-ի ժամադրությանը նա մոտ յերկու շաբաթ եր, վոր սպասում եր, իսկ այն ել այսպիսի տիսուր վախճան ունեցալ:

Երիկին հանգոտացնելու համար յես ասացի.

— Թաշխատ յերիտասարդներին չի հաջողվի իդուրային մոտենալ. նա զգուշ աղջիկ է: Մի քիչ կըս՝ պատի, տեսնելով, վոր գուշ չկատ, կթողնի ու կդնա:

Սակայն իմ խոսքերը կարծես թե ամելի բորբոքեցին Երիկին:

— Դու յե՞ս ինձ իղուդայի հետ ծանոթացնում: Ի՞նչու, յես նրա բնափորությունը չգիտե՞մ, — քիչ

լոելուց հետո պոռթկաց նա, յերեսը չքջեց ինձնից և յես նկատեցի, վոր նա լաց է լինում...

Մայիսի 7

Առավոտյան յերկուսիս ել հարցաքննության տարան, սակայն ջոկ-ջոկ: Յերբ ինձ կրկին վերադրձրին կամերան, Երիկն արդեն այնտեղ եր՝ լուս, յերեսնիվար դետնին փոված: Յես մոտեցա նրան, բայց նա ուշագնաց եր: Թեպեա արյան վոչ մի հետք չկար, բայց մարմինն այնտես եր ուռել ու կապտել, վոր գժվար եր նրան ճանաչելը...

Մայիսի 8

Հիմա արդեն մուլթ է: Այսոր յերեվի ել չեն տանի հարցաքննության:

Յերկրորդ որն է, վոր Երիկը վոչինչ չի ուտում: Շարունակ լուս է: Ինչո՞վ է սա վերջանալու...

Մայիսի 9

Այսոր նույնպես հարցաքննության չտարան:

Առավոտից Երիկի ուշքը մի քիչ զլուսը յեկավ: Կեսորին պղտոր ապուրի ջրից մի քանի գդալ խմելուց հետո՝ կարծես թե տրամադրություն պիտի ունենար մի բան ասելու, բայց դարձյալ լուս եր, և յես վոչինչ չհարցըրի:

Իրիկնադեմին հազիվ մի կերպ հանեց շապիկը, նայեց մարմնի ուռուցքներին:

Սարսափելի յեր:

Մայիսի 10

Առավոտյան յերկուսով պատուհանից դուրս ելինք

նայում : Հորիզոնը շառագումել եր , արեգակը դուրս
եր դալիս զբոսանքի :

— Սրեկաները կարծես թե դիտավորյալ կերպով
են մեզ այս կամերան դցել , վորպեսպի բնության գե-
ղեցկությունն այստեղից տեսնելով՝ այլի ընկըճ-
վենք :

Երիկն իսկույն չարձագանքնց իմ ասածին : Նա
դարձյալ մի պահ լուս նայելով դեպի դուրս , հան-
կարծ , առանց գլուխը բարձրացնելու , պատասխանեց .

— Ինչո՞ւ պետք ե յես այստեղից դիտեմ արելի
ծագումը . մի՞թե մեր դյուզում արել չկար , մեր ան-
տառներում , մեր գաշտերում մի՞թե դործ չկար : Ա-
վելի լավ եր բարբակ լինելի Շտենդերի մոտ , նրա
ֆերմայում , քան տառապելի այս մութ բանտում ,
քան թե կրելի դաժան վոստիկանի հարվածները ...
Ո՞վ հասցրեց ինձ մահվան դուռը ...

— Արդեն սկսվեց , — մտածեցի յես , — բայց վորո-
շեցի լոել . ավելորդ եր վորելին հարցով նրան դրդ-
ուել :

Մայիսի 16

— Վոչ , նա յե թուլամորթ , ով կամովին իր վի-
զը կդնի դիլյոտինի տակ : Յեկ վոչ ել դավաճանու-
թյուն ե սա : Ինձ մի մեղադրելո դու , սիրելիս , յես
չեմ կարող դեռևս կյանքի յերես չտեսած՝ կյանքից
զրկվել : Հասկացիր , յես միայն քսան տարեկան եմ ,
յես գեռ ապրել եմ ուղում , հասկանում ե՞ս , ապրել ..
Գուցե դու և ուրիշները կարող եք դիմանալ այս բո-
լորին , իսկ յես անկարող եմ դիմանալ , յես այլես ուժ-
չունեմ :

— Բայց մի՞թե դու ուժ կունենաս դավաճանե-
լու : Դու դիտե՞ս , վոր կրոնագրավիեն տպարանը , կը-
ձերբակալեն ընկերներին , կտանջեն մեզ պես , կկոտո-
րեն նրանց ես :

— Այդ միննույն ե , յես իմ վճիռը կայացրել եմ :
Ել վոչ վոք այս մտքից ինձ հետ չի կանգնեցնի : Յես
կիւրաղառնամ մեր դյուզը , յես այնտեղ կմնամ , յես
ապրել եմ ուղում :

— Իսկ դու հաստատ համոզված ե՞ս , վոր մատ-
նելուց հետո քեզ ազատ կարձակեն :

— Նա խոստացավ , ամեն ինչով յերդվեց ազա-
տել : Նա կազատի :

— Միամիտ ես դու , Երիկ : Նա քեզ չի ազա-
տի ... Դու նրա յերդումին մի հավատա : Նրան հար-
կավոր ե քեզնից միայն հասցեներն իմանալ , վորից
հետո մի գնդակն անդամ նա քեզ կիմնայի . ոեզինի ճի-
պոտներով քեզ արնաքամ կանեն , կսպանեն :

— Ոյ , մի գժվեցնի ինձ , ել չեմ կարող , չեմ
կարող այլես դիմանալ այս տանջանքներին : Ինձնից
հետո ինչ ուղում ե , թող լինի , այսքանն ել բավական
ե , վորքան տանջվեցի , վորքան դիմացա : Յես խոստա-
ցա հայտնել ամեն ինչ և առավոտյան հայտնելու յեմ :
Նրանց տանջանքներին ել չեմ կարող դիմանալ , ել
բավական ե ...

... Սարսափելի յե , ո՞ , սարսափելի : Նա առա-
վոտյան իրոք կմատնի մեզ : Ել վոչ մի բան նրան
այդ մտքից յետ չի պահի : Ամեն ինչ կորավ : Կորան
ընկերները , կորավ տպարանը , կորան մեր բոլոր աշ-
խատանքները :

Միթե՞ յես չեցի կաբող սկզբից իմանալ, վոր նրա
խոսքերը փքուն են ու սին ո՛, վոքրոգի...

Մեկ ժամ, «խորհելու համար միայն մեկ ժամ»..
Ուրեմն այդքան չուտ, ամեն ինչ վերջացավ... Սա-
կայն միննույն ե, յես կդեմ, քանի գեռ նրանք ներս
չեն յեկել: Թեև այդ այնքան ել յերկար չի տելի,
միայն մեկ ժամ, բայց յես կդեմ, հարկավոր ե վեր-
ջացնել:

Առավոտյան հարցաքննողը կրկին նույն ակնոցա-
վոր չեկն եր: Յերբ ներս մտա, նա մեջքը գեպի գու-
ռն արած, ուշադրությամբ նայում եր պատից փակ-
ցրած ինչ վոր նկարի: Բացվող դուսն ճռոցից իս-
կույն յետ դարձալ, աղվեսային աչքերը հառեց
ինձ վրա և գեմքին ուրախ տեսք տալով ասաց.

— Ահա և գուք... բայց սպասիր, ի՞նչու յես դու
յեկել... Ապա դիմելով ինձ բերող վոստիկանին՝
զայրացած ասաց. — յես քեզ չասացի՞ մյուսին րեր:

— Այո՛, ձերդ գերազանցություն, այդպես հրա-
մայեցեք, բայց յերիտասարդը կարծեմ ինչ վոր գաղտ-
նիք ունի ձեզ հայտնելու, խնդրեց և...

— Հա՛, այդ հետաքրքիր ե, — ասաց ակնոցավոր
չեկն ու ուղիղ ինձ նայեց. — հ՛ը, նստե՞նք, համեցեք.
կարող եմ լսել, — կրկին անդամ աչքերը գեպի ինձ
հառելով ասաց չեկը:

— Յես ուզում եմ ամեն ինչ պատմել ձեզ, — ահ-
տարբերությամբ հայտնեցի յես:

— Ը՛նը, վերջապես խելքի յեկաք. միայն այժմ
կարծես թե ուզում ե ձեզ մոտ յերեվան դալ իսկա-
կան գերմանացու ազնվությունն ու խիզախությունը,

վորն անկասկած, չեր կարող յերեվան չգալ: Բայց
ցավոք սրտի, գուրք այդ մի քիչ ուշացրիք և ստիպե-
ցիք մեղ ավելորդ խստությունների դիմել:

— Սակայն այն պայմանով յես ձեզ կսպամմեմ, —
աւեսնելով, վոր նա դեռ յերկար պետք ե պատմի գեր-
մանացիների առաքինությունների մասին, — ընդհա-
տեցի յես:

— Ցեթե ձեր ազատության մասին ե խոսքը...

— Այդ ինքնըստինքյան:

— Ել ուրիշ:

— Նաև այն, վոր վերաբերում ե իմ ընկերոջը:

— Ազատելո՞ւն:

— Ընդհակառակը, յես ուզում եմ, վոր նրան
գնդակահարեք հենց այժմ յեվեթ իմ աչքի առաջ, ա-
ռանց ավելորդ հարցաքննության, ապա նոր լսեք
ինձ:

— Իսկ այդ ինչո՞ւ յե պետք, — հանկարծակի յե-
կած ասաց չեկն ու սուր հայացքով ինձ նայեց:

— Վորպեսզի նա ինձ չմատնի իմ ընկերներին:

— Բայց մի՞թե...

— Այո՛, յես այսպես եմ մտածում. յես ամեն
ինչ ձեզ կպատմեմ... գուրք ինձ բանտից կազատեք,
իսկ նա կմատնի, իմ ընկերները չեն ինայի ինձ, կը-
վոչնչացնեն վորպես պրովակատորի:

Ակնոցավոր չեկն սկսեց խորհել: Հստյերեվույթին
ասածներս լուրջ խորհրդածության առիթ տվին:

Իհարկե մի բանտարկյալի գնդակահարելու միտ-
քը չեր անհանգստացնում նրան: Նման փաստերն այ-
ժըմ այստեղ անհամար են և սովորական: Նա թերեւ-
ուրիշ բան եր մտածում:

— Բայց և այնպես յես ձեզ չեմ հասկանում։ Զե
վոր նա այստեղից, միենույն է, կենդանի դուրս չի
դնա, քանի վոր վոչինչ չի խոստովանում։

— Յեվ չի յել խոստովանի։ Յեթե դուք արդեն
վճռել եք սպանել նրան, ուրեմն թույլ տվեք, վոր
գրանում յես ել համոզիմ։

Մի պահ ընդհատվեց մեր խոսակցությունը։ Ակ-
նոցավոր շեկը վերցրեց հեռախոսի փողը, զանդահա-
րեց ինչ վոր մեկին, հայտնեց իմ առաջարկությունը,
և կարծ զրուցից հետո, ըստ յերեսութին, համաձայ-
նության յեկան։

— Ինչպե՞ս, դուք այդ կամենում եք հենց հիմա։

— Գերադասում եմ հենց հիմա։ Հետո գուցե
մտքերս փոխվեն և յես ձեզ վոչինչ ել չեմ ասի։

Ակնոցավոր շեկը վոտքի կանգնեց, հրամայեց
յերկու վոստիկանի՝ բերել Երիկին։ Վոստիկանների
դուրս դալուց հետո նա սեղմեց երեկորական կոճա-
կը։ Քիչ հետո յեկալ յերկարածիս կոչիկներով, սե-
վազգեստ մեկը։ Ակնոցավոր շեկը նրան մի կողմ քա-
չեց և կամաց հրաման տվեց։ Այդ Երիկին գնդակա-
հարելու հրամանն եր։

Սեազգեստ մարդը դուրս դնաց։ Քիչ հետո յեր-
կու վոստիկանները բերեցին Երիկին։ Նա ավելի դեղ-
նել եր, խեղճացել։ Ներս մանելիս դանդաղորեն բարձ-
րացրեց գլուխը, մեր հայացքները հանդիպեցին իրար
և նա ելի աչքերը գետնին հառեց։

Վոստիկաններն ու ակնոցավոր շեկը մեզ յերկու-
սիս ել լուր դուրս տարան, իսկ բանտի պատերի տա-
կովն անցնելիս շեկը մի քանի քայլ մեղանից հետ մը-
նաց, իր հետ կանգնեցնելով նաև մի վոստիկանի,

վորի ականջին ինչ վոր բան փակություց հետո դար-
ձյալ հավասարվեց մեզ։

Մտանք բանտի մութ անկյուններից մեկը, վոր-
տեղից այլևս վոչ բանտի կամերաներն եյին յերեւում
և վոչ ել նրանց լուսամուսներից դուրս նայող բան-
տարկալները։

Մենք գնում եյինք հավասարաքայլ — յես մի
ծայրից, ակնոցավոր շեկն իմ ու Երիկի արանքով։

Հանկարծ մեր յետեից լավեց կրակոց։ Երիկը
կանգ առավ, ուղղվեց, ուզեց հետ նայել, բայց չկա-
րողացավ, որովքեց և վայր ընկապ։ Ակնոցավոր շեկի
հրամանով վոստիկանը մի անդամ ել կրակեց և այս
անդամ՝ ուղիղ ճակատին։

Երիկը վոչ մի խոսք ել չկարողացավ ասել…

Ակնոցավոր շեկը նույն ճանապարհով մեզ յետ
բերեց։ Իր առանձնասենյակը մտնելուց հետո նորից
նստեց սեղանի մոտ, ակնոցներն ուղղեց և դիմեց ինձ։

— Դե, ինչ կասե՞ք, — և ապա տեսնելով իմ յեր-
կար լուսությունը՝ հարցը կրկնեց։

— Յես վոչինչ չունեմ ասելու։ Ամեն ինչ նա գի-
տեր, նա յեր ուղղում ձեզ պատմել, իսկ նրան դուք
սպանեցիք։

Ակնոցավոր շեկը ցնցվեց, նստած տեղը հետ դը-
նաց աթոռի վրա և ակնապիչ նայեց ինձ, բայց ել
ուրիշ հարց չտվեց։ Այլպես մի պահ լուր ինձ նայե-
լուց հետո, միայն վերջում չատ հանդիսատ տոնով
ասաց։

— Ըստ յերելութին ընկերոջդ սպանությունը
քեզ չատ դուր յեկավ…

Յես ասելու ուրիշ բան չունեյի. լուռ վոտքի
կանգնեցի:

Ակնոցախոր չեկը սեղմեց ելեկտրական կոճակը,
ներս մտան յերկու վոստիկաններ:

— Քեզ տրվում ե միայն մեկ ժամ, մտածիր,
կատարէր խոստումդ ու փրկիր կյանքը յեթե ապրել
ես ուզում: Դու դեռ շատ քիչ ես ապրել... ուրեմն
մեկ ժամ: Տարեք սրան կամերա, — դիմելով վոստի-
կաններին, ասաց նա, ինքը դուրս դնաց ու...

Բայց այս կ'նէ ե. այդ դուռն ե՞ն բացում: Այս-
քան չո՞ւտ... Ե՛ս, միենույն ե, թող այստեղ հատվի
որագիրս...

ՅԵՐԶԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Բարսամ ապոր ձայնը կիսեց իրեկնային խավա-
րը: Նա արդիների դիմաց բարձր բլուրի վրա սարքած
իր քողովիկում նստած ժամանակ իսկույն զգաց, վոր
առվից վերեկի այդիներով մարդ ե անցնում:

— Արա ՀԵՇ, եղ ո՞վ անցավ Խաչատուրենց բա-
ղերով, սրա ձեն տուռ, Եհե՛յ...

Պատասխանը մի քիչ ուշացավ:

Բարսամ ապերն անհանգստացած՝ դուրս յեկալ
քողովիկից, մի քանի քայլ առաջ յեկավ, վորտեղից
ամելի լավ ելին յերեկում բոլոր այգիներն ել և կը-
կին անդամ սպառնագին կանչեց:

Սյուտեղ բոլորն ել շատ լավ գիտեյին ծեր այգե-
պանի բնավորությունը, նա մինչև չիմանար, թե ով ե
մտել այգիները, ինչու յե յեկել այդտեղ, չեր հան-
գըստանալու: Դրա համար ել անցնողն չտապեց պա-
տասխանել.

— Յես եմ, Բարսամ ապեր, նոր բաղատեղեցն եմ
գնում:

Բարսամ ապերը հանգստացավ. կոլտնտեսության
տրակտորիստ Միքաթն եր: Կոլտնտեսությունը խաղո-

զի նոր այգիներ գցելու համար ահագին հողամաս եր հատկացրել։ Հարկավոր եր աշնանից հերկել այդ հոգամառը, յերբ տրակտորն այնքան ել դրազված չէ, վորպեսզի գարունը բացվելուն պես տնկեն խաղողի ջյուղերը։ Սմբաթը գնում եր ծանոթանալու նոր հոգամասի հետ։

— Արա Սմբաթ, ի՞նչ թաղա խաբար կա աշխարհում, դեղականը վո՞նց և, — հարցը Բարսամ ապերը, բայց Սմբաթից շատ սովորական պատասխան ստանալով՝ առանձնապես գոհ չմնաց և կրկին հարցը։

— Քամու ջաղացից ի՞նչ են պատմում, հայա տեղ չհասա՞վ։

— Կոլխոզի նախագահը գնացել և չըջկենտրոն գրահամար, ասում են ես յերկու որը կատանանք, — պատասխանեց տրակտորիստն ու շարունակեց ճանապարհը։

Բարսամ ապերը յերկար ժամանակ դյուղից կրտը րված եր։ Խաղողը հասնելու որից նա յեկել եր այդաեղ և դեռ դյուղ չեր վերադարձել։ Նրա համար և՛ հաց, և՛ կերակուր բերում ելին այգիները յեկողները և ամեն մի նորություն ել իմանում եր հենց նրանցից։ Բայց հատ ու կենտ մարդկանցից կըցկը տեղեկություններ ստանալով նրա հարցասիրությունը չեր բավարարվում։ Նա շատ հետաքըրքը վող մարդ եր և ամեն անդամ ավելի յեր ուզում իմանալ, քան թե զրուցակիցն եր հայտնում։ Այս անդամ ևս նա ուզում եր դեռ մի քանի հարցեր ել տալ Սմբաթին, բայց նա արդեն բավականաչափ հետացել եր և Բարսամ ապօր ձայն չեր կարող լսել։

Բարսամ ապերը լոեց, մտքով սլացավ գեպի հողմաղացը, վոր շուտով պետք ե ստանար իրենց կորտնտեսությունը։ Նրա մտքի թելք կտրեց Սահակ բեծան, վորն այդիներից՝ ձայն տալով Բարսամ ապորն իր մոտ հրավիրեց։

Սահակ բիծան այգեկութիւ բրիդագի ամենահստակավոր անդամն եր։ Ամեն որ աշխատանքները վերջացնելուց հետո, յերբ բրիդագի մյուս անդամները Փուրգոնները կամ բենակիր ավտոմեքենան նստած ճանապարհում ելին դեպի դյուղ, Սահակ բիծան և եր դալիս «Զարաղը»—այդիներից վերեվ կալաչափ մի բացատ, վորը վաղուց ի վեր բոլոր այգեկանների գիշերավայրն եր, և այդտեղ թիկնելով իր անկողնաշորերին, Բարսամ ապօրն եր ապաստում։ Նա ևս իրիկունները դյուղ չեր գնում։ Գիշերում եր հենց այգիներում, ուր ավելի խաղաղ եր, զով եր ու բուրումնավետ։

Բարսամ ապերը հավաստիանալով, վոր բոլորն ել իրոք քաշվեցին գյուղը, այդ ժամանակ ինքն ել վոտքի կանգնեց, դուրս յեկամ քողովիկից և այդիներով զնաց Սահակ բիծայի մոտ։

Ճանապարհին նա մեծ դժվարությամբ եր անցնում դեղձի, նոան, սերկելիլի պտուղների ծանրության տակ կըված ծառերի տակով։ Դեղին լուսնագույն սերկելիլի բուրմունքով լցվել ելին այդիները։ Լուսնի պայծառ լույսի տակ վայլիվին ելին տալիս խաղողի ճերմակ վողկույզները, վորոնք կախվել ելին ծառերի վրա վոլորապառույտ բարձրացած յերկար վաղերից։

Ժեռ, մանրիկ քարերի տակով խոխոջալով հոսում
եր առուն: Ջրի կարկաչյունը ձայնակցելով դալար
սաղարթների սոսափյունին, Բարսամ ապորը թվում
եր, թե նա ինչ վոր գիշերային համերգ ե լսում:

Նա հասնելով Զարաղը, տեսավ խաղողի լիքը
կողովների յերկարածիք շարքն ու բացականչեց.

— Այ տա, ես ի՞նչ ե. խաղողի դեղը թամամ
լուսնին եք հասցրել:

— Եղան ե, քիչ բանի հետ մենք դործ չու-
նենք, — նրա ձայնը լսելուն պես պատասխանեց Սահակ
թիժան, վոր քիչ հեռու նստած, բարակ առվակի մեջ
վոտներն եր լվանում:

— Ասում եմ այս տարվա բերքին բերք չի հաս-
նի, չը՞ , ի՞նչ կասես, քայլոր Սահակ:

— Խոսք չունեմ, բերքը լավ ե ես տարի, են ել
ենքան լավ, ենքան լիքը, ենքան մեծ-մեծ ճիթեր կան,
վոր թամամ վիտստավիկի դործ ե: Եղ տեսակ բան իմ
հասակում հալա չեմ տեսել:

— Մարդ վերցնի, քավոր Սահակ, եղ խաղողից մի
քանի ջվարան հենց Մոսկով ուղարկի...

— Ի՞նչու ուղարկել, քանի վոր հենց ինքդ ել կա-
րող ես տանել. մի բան, վոր չուտով զնալու յես,—
ասաց Սահակ թիժան և հանկարծ, կարծես նոր
ժիայն չիշելով, ավելացրեց, — Բարսամ քավոր, քո
զնալդ ել թամամ շահի գյաղդի-դյալդին դառավ: Հը-
րես խելա վախտ ե լսել եմ, վոր Մոսկով ես զնում,
համա տեղիցդ սկի ժամ չես դալիս:

— Գնալը—գնում եմ, քավոր Սահակ, համա ա-
սում եմ ես խաղողաքաղը մի վերջացնենք՝ հետո: Հո

չի կարելի գործը կիսատ թողնել ու դուրս դալ գնալ:
Հենց դրա մաթալն եմ: Բաղերը քաղենք, դիմին տա-
նենք, ես անդամ արդեն...

Բարսամ ապերը խոսքը չվերջացրեց: Յերջանկա-
վետ ճանապարհորդության կարութը մի պահ վառվեց
նրա սրտում, նա խանդաղատանքով սկսեց մտքուժ
հաշվել, թե քանի որ ե մնում մինչեւ այդ:

— Բարսամ քավոր, մենակ դո՞ւ յես գնալու,
թե՞...

— Զե՞ , Յարհաղն ել ե գնալու ինձ հետ: Մենակ
վո՞նց կարող եմ գնալ. խամ մարդ եմ: Ես հասակին
եմ հասել, մեր գեղի քյավշանից են կողմը չեմ ան-
ցել, հիմի վեր եմ կենում ու մեն-մենակ Մոսկով
զնա՞մ...

— Ե՞հ, ի՞նչ կա վոր, հեր որհնած, տոմսակն
առ, զիր ջերտ, պոեզդը քեղ թուշ Մոսկով ե տանելու:
Եսունդ վախունալու ի՞նչ բան կա:

— Բա՛, ենպես ես խոսում, վոր կարծես թե տը-
րեխներդ Մոսկովի ճամբին մաշված լինեն: Մի մտա-
ծիր ե, թե վորտեղից-վորտեղ պետք ե զնամ. հեշտ
դործ ե՞ :

— Դուդ ե, հեշտ դործ չի, — համաձայնեց Սա-
հակ թիժան, — համա դե եղ տեսակ մի նապատակի հա-
մար ամեն դժվարություն ել կարելի յե հաղթել.
Մոսկվա ես ասում ե, հանաք-մասիարա չի... Մի՞,
Բարսամ քավոր, մեռած ըլինեմ, սաղ լինեմ, դու
Մոսկովից դաս ու ինձ քո լեզվով բոլ-բոլ պատմես
տեսածներիդ մասին:

— Հես մեռնի, ի՞նչու յես մեռնում, դիժ չո

չես, վոր մեռնես, —հաստատ համոզված ասաց Բարսամ ապերը, —կդամ և ամեն ինչ կպատմեմ քեզ...

Տիրեց վայրկենական լոռություն : Յերկու ծերուենիներն ել մի պահ մտասուզվեցին ու ամեն մեկն ունեցավ իր ապրումները : Հետո լոռությունը խախտեց Սահակ բիձան :

— Տէ՛ս, Բարսամ քավոր, աղջիկը չեյիր ուղում մարդու տալ տեսա՞լ վեսադ ինչ լավ աղա դուրս յեկավ, քեզ թամամ բախտավորացըեց :

Բարսամ ապերն իսկույն չպատասխանեց իր քառին : Նա մի պահ լուեց, մտածեց նրա ասածների մասին, ուղեց հասկանալ, թե ինչի համար նա ասաց այդ խոսքերը : Արդյոք նախանձից, չար դիտավորությումք, թե՞ անկեղծորեն դուրս յեկան այդ խոսքերը Սահակ բիձայի բերանից : Հետո նա հարցրեց .

— Ի՞նչ ե, դու յել ես նախանձո՞ւմ, Սահակ քավոր :

— Վայ, ի՞նչ ես ասում, Բարսամ քավոր, քեզ նախանձովն ես բարի գիշերը վոչ լիսացնի . յես քեզ չեմ նախանձում : Յես սրտով ուրախ եմ, վոր դու բախտավոր ես : Ամեն անդամ, յերբ տեսնում եմ Ռուսին ֆարհաղի հետ ուրախ, թեփ-թեփի դցած դաւիս, հոգիս փառավորպում ե, ուրախությունից սիրտս ուղում ե թեվեր առնել թոշել : Նրանց տեսնելիս յես կարծում եմ, թե իմ կուտիկին եմ տեսնում աչքերիս առաջ արդեն մեծացած, հասունացած...

Այս խոսքերն ասելիս Սահակ բիձայի աչքերը ջըրակալեցին : Նա հիշեց Բարսամ ապոր աղջկա—Ռուսին հասակակաից իր աղջկանը, հիշեց կնոջը, վորոնք

վախճանվեցին միկնույն որը՝ մնալով տան փլվածքի տակ : Սահակ բիձան իր առաջին կնոջ մահից հետո յերկու անդամ ել ամուսնացավ, բայց յերեխա չունեցավ, իսկ յերեխայի կարոտը յերբեք չանցավ նրա սրտից ...

Սահակ բիձան հանեց թաշկինակը, մոտեցրեց աչքերին, իսկ Բարսամ ապերն իր խոսքերից զղջալով՝ ասաց .

— Դե դոււլ յել աքչերդ մրգիլ մի . հանաք արեցի . իմանում եմ, վոր իմ Ռուսին ել, Ֆարհաղին ել դու ինձանից պակաս չես սիրում :

Բարսամ ապերն իրոք ընկճվեց իր ասածից : Նըրանք բարեկամ լինելուց բացի հարեվաններ ել եյին : Յերկար տարիներ նրանց միջեվ ամենափոքրիկ դըժուկություն չի յեղել : Նրանք միշտ ել հաշտ ու սիրով են յեղել, միշտ ել իրար մեջ անկեղծորեն բաժանել են և՛ վիշտ, և՛ ուրախություն : Բարսամ ապօր նախանձովներ, ի հարկե, կային, բայց Սահակ բիձան այդ մարդկանցից չեր : Նա Բարսամ ապօր ամենամըսերիմ բարեկամն եր, իսկ նախանձովները շատ հաճախ եյին այստեղ ու այստեղ, պատատակերին փըսփըսում այդ մասին մանավանդ այն որից հետո, յերբ լսել եյին, վոր Բարսամ ապերն իր փեսայի հետ պատրաստվում ե Մոսկվա զնալ :

Փողոցով կամ մի այլ տեղից անցնելիս Բարսամ ապերը մի քանի անդամ իր ականջով լսել ե, թե ինչ պես պարոն Աղալոյի կինն ու տիրոխնին բամբասում են իրեն :

— Առաջ մի կտոր հաց չեր ճարում ուտելու, իսկ

Հիմա հինդ-վեց սենյակից բաղկացած նոր տուն է շինել:

— Սրա-նրա հացի վշրանքներով աղջիկ մեծացրավ, հիմա աղջիկը շքանշանը դոչից տված է մանդալիս:

— Աղջիկը չեր ուղում մարդի տալ, իսկ հիմա փեսայի հետ Մոսկվա յե դնում:

Այս և նման խոսակցությունները սկզբում շատ երին մտատանջում Բարսամ ապորը: Իսկ ավելի շատ տանջվում եր աղջկա և փեսայի հասցեին ավել-պահակաս խոսակցություններ լսելիս: Նման դեմքերում նա ուղում եր կռվի բանվել նրանց հետ, հայհոյել, բայց մի կերպ զսպում եր իրեն, չլսելու տեղ դնում և բորբոքված հեռանում այստեղից:

Ոսանը Բարսամ ապոր միակ զավակն եր: Նրանից զատ ել վոչ վոք չուներ: Իր կնոջ — Գյողալենց Յեսթերի հետ ընդամենը յերեք տարի ապրեց. Յեսթերը վախճանվեց ամուսնության յերրորդ տարում: Կնոջ մահվանից հետո շատերը հորդորեցին Բարսամ ապօրը, վոր նա կրկին ամուսնանա, իր բախտը կապի մի նոր կնոջ հետ, բայց նա հավատարիմ մնաց Յեսթերի հետ ամուսնանալու հենց առաջին որը նրան տըված խոստումին — կյանքում ճանաչել միայն մի կնոջ և այն ել Յեսթերին:

Անցան տարիներ, ճերմակեցին Բարսամ ապօր մազերը, բայց նա վոչ մի վայրկյան չմոռացավ կնոջը և յերեք չդրժեց խոստումը: Նա ծերության այդ տարիներին ել անչափ վառ կերպով է հիշում իր կնո-

ջը և կարծես թե հենց հիմա Յեսթերն իր վառվուն աչքերով, կլոր հասակով, թեթեվ քայլերով շրջելիս լինի նրա աչքերի առաջ: Ահա Յեսթերը, ա՛յ, յեթե ձեռքը մեկնի՝ կարող ե բռնել նրան, խոսել հետը և...

Բայց տասն և իննը տարի յե, ինչ Յեսթերը մեռել ե: Տասն և իննը տարի յե անցել այն որից, ինչ Բարսամ ապերը նրա բերնից կենդանի խոսք չի լսալ...

Չեսթերը վախճանվեց իր ամուսնության յերրորդ տարում՝ վորը թողնելով դեռ թոթովախոս իր Ուսանին: Նրան մեծացնելու հոգսն ընկալ միայն հոր վրա: Հայրն իր ամբողջ սերը նվիրեց աղջկանը: Նա գյուղի այգեպահն եր: Ամառները շարունակ լինում եր այդիներում, իսկ Ուսանը՝ նրա մոտ: Յեթե պատահեր, վոր մեկ որ չտեսներ իր աղջկան, չեր հանգստանա:

Անցյալում նյութական շատ գժվարություններ եկրել Բարսամ ապերը: Այդեպահնությունը նրան որվահաց ել չեր տալիս: Բայց նա վոչ մի ջանք չեր խնայում իր աղջկան լավ պահելու համար: Ինքն որերով քաղցած ե մնացել և ձեռքի վերջին վշուր հացը տվել աղջկան:

Ամեն տարի այդեքաղը վերջացնելուց հետո, յերբ նա ընկնում եր դռնեղուռ իր աշխատավարձը հավաքելու, մարդիկ յերբեմն նրան թաղա հաց ելին տալիս, թխվածքի կտորներ և կտմ մի այլ բան: Նա վոչ մի բանի ձեռք չեր տալիս. պահում եր միայն Ուսանի համար, իսկ Ուսանը մեծանում եր, միարժամանում և հայրը միայն իր աղջկանով եր միիթարվում:

Ուսանը վոչ միայն իր գեղեցկությամբ, այլ և աշխատանքով հայտնի յեր ամբողջ շրջանում: Նա շը-

ջանի անվանի մարդկանցից եր: Յեղավ մի ժամանակ, վոր այդտեղ շարունակ նրա մասին եյին խոսում, նըրան եյին որինակ քերում վորպես լավագույն բրիգադավարի, վորպես աշխատանքների գերազանց կազմակերպողի: Յեկ դրա համար ել նա դնացել եր Մոսկվա մասնակցելու յերկրի առաջակոր կանանց խորհրդակցությանը:

Նրա բացակայության ժամանակ հայրն իրեն կորցրել եր, վոչ քուն ուներ, վոչ դադար: Նա գիշերները յերբ փակում եր աչքերը, խսկույն խառը յերադներն եյին պատում: Սարսափում եր իր տեսած յերագներից և տեղում վեր թռչում:

Մոսկվայից Ռասնը վերադարձավ կարմիր Պատվանշան շքանշանը կրծքին խիած: Ամբողջ որը Բարսամ ապոր նորակառույց տանը քեֆ եր: Յեկել եյին Հարևան դյուլերից, շրջանային կենտրոնից: Շրջանացին կենտրոնից Ռասնը կուսչը զկոմի քարտուղարի մեքենայով եր գյուղ յեկել: Բարսամ ապերն ուրախությունից իրեն կորցրել եր: Շրջկոմի քարտուղարը ճառ եր ասում Ռասնի մասին, խոսում եյին իրենց շրջանի բոլոր հայտնի մարդիկ, իսկ Բարսամ ապերը լուս լսում եր նրանց և ուրախությունից դողդում...

Հետո սկսեցին դյուլում լուրեր պտտվել, թե Ռասնն ամուսնանում ե, վոր նրան առաջարկություն և արել դյուղատնտես ֆարհադը:

Նա սարսափեց այդ լուրը լսելուց, լեզուն պապանձից և ինչ վոր անհամողիստ դողոց ընկավ մարմինը:

— Վո՞նց թե ամուսնանում ե, — լսելուն պես սարսափահար բացականչեց հայրը և հարձակվեց այդ ասողի վրա, — այ մարդ, դու սկի հասկանո՞ւմ ես ասած խոսքերիդ միտքը. խելքը կորցրե՞լ ես, ինչ ե:

— Այ Բարսամ ապեր, յես ել լսել եմ, ի՞նչու պետք է խելքս կորցնեմ. — իր ասածից զղալով պատասխանեց մարդն ու չփարած հեռացավ:

Ֆարհադը կոլտնտեսության գյուղատնտեսն եր: Յերկու տարի յեր, վոր նա աշխատում եր այդ գյուղում և այդ ժամանակամիջոցում արժանացել եր կոլտնտեսականներից շատերի ամենաջերմ սիրուն: Այդտեղ անչափ հարգում եյին ֆարհադին նրա խոհեմ բնավորության, համեստության, ընկերական պարզ վերաբերմունքի, նվիրվածության, աշխատասիրության համար:

Գյուղում բոլորն ել արդեն գիտեյին, վոր նա մինչև տասնութ տարեկան հասակը մեծացել ե վորբանոցում, ինստիտուտում յեղել և ամենաառաջադեմ ուսանողներից մեկն ու ավարտելուն պես նշանակվել ե այդ գյուղում աշխատելու: Գիտեյին նաև, վոր նա վոչ հարազատներ ունի, վոչ ել վորեւ մտերիմ մի այլ տեղ, վորպիսի հանդամանքն առիթ եր տալիս կոլտըն տեսականներից շատերին ավելի ուշադիր, ավելի հոգատար լինել դեպի նա, վորպեսզի նա իրեն այդտեղ ոտար չզգա, մենակ չզգա:

Մինչև այդ լուրը լսելը Բարսամ ապերը ևս չառ լավ եր տրամադրված դեպի ֆարհադը: Դեռ ավելին, նա յեթէ մեկ որ ֆարհադին չեր տեսնում այդիներում, իսկույն հետաքրքրվում եր, նրա մասին հարց

նում եր ուրիշներից, թե նա ինչու չի յերեվացել այդ
որը, ուր կարող ե զնացած լինել: Ֆարհադը յեփս մեծ
հաճույքով եր հանդիպում Բարսամ ապոր հետ. Ժա-
մերով լսում եր նրան, յերբեմն ել նույնիսկ վիճում
եյն այս կամ այն ծառի պատվաստի, պառզեների և
այլ խնդիրների մասին: Ֆարհադը բարձրագույն կըր-
թություն ունենալով հանդերձ յերբեք անուշադրու-
թյան չեր մատնում ծեր այդեպանի դիտողություննե-
րը. միշտ ել ուշադրությամբ եր լսում նրան, վորով-
հետև տեսնում եր, թե Բարսամ ապերը յերբեմն ինչ
ճիշտ դիտողություններ ե անում, ինչ ճշմարիտ կար-
ծիքներ ե հայտնում. նա տեսնում եր, վոր ծեր այդե-
պանն իր բազմամյա կյանքն իզուր չի անցկացրել այդ
ծառերի տակ, այդ այդիներում. նա դիտել ե, իր ու-
ժերի չափ ուսումնասիրել բազմաթիվ յերեվութներ,
վորոնք շատ ուշագրավ են իրա—համալսարանավարտ
Ֆարհադի համար:

Նրանց մտերմությունը մի կողմից ել ամրապնդու-
ում եր այն հանդամանքը, վոր Բարսամ ապերը դի-
տեր բազմաթիվ հեքիաթներ, առակներ, պատմու-
թյուններ, իսկ Ֆարհադը սիրահար եր նման դրույց-
ներ լսելու և նրանք նստում եյին ժամերով, խոսում
ու զրուցում:

Բայց Բարսամ ապերը, իհարկե, չեր յենթադը-
րում, վոր իրենց բարեկամությունը հետապայում այլ
բնութ կկրի, վոր նա առաջարկություն կանի իր աղ-
ջըկանը: Այդիսկ պատճառով ել նա վորոշ ժամանակ
սկսեց խոսապել Ֆարհադից, չհանդիպել նրա հետ:
Նա տեսավ, վոր հանձին Ֆարհադի յերեան ե յեկել

մեկը, վոր ուզում ե անջատել աղջկանն իրենից, վոր
ուզում ե գրավել Ուսանի սիրութ... իսկ դա սարսափե-
լի յեր Բարսամ ապոր համար: Նա տարիներ շարունակ
իր սերը նվիրելով իր միակ զավակին, չեր ուզում,
վոր աղջիկն իրենից զատ մի այլ բանի մասին ել մը-
տածի, վոր նրա զգացմունքները հայրական սիրուց
բացի այլ ուղղություն ել ունենա: Մանավանդ այն
հարցը, թե հետապայում ինչպես կվերաբերվի իր հետ
փեսան, ավելի սկսեց տանջել նրան, առիթ տալ բաղ-
մապիսի մարումների...

Ապա տեսնելով, վոր իր աղջկա ամուսնանալու
մասին խոսակցությունները հետզհետե ավելի յեն շա-
տանում, նա չկարողացավ զսպել իրեն և վորոցն ինո-
սել Ուսանի հետ:

Մի որ, կեսորից հետո, նա մոտեցավ աղջկան,
քիչ պատվեց նրա չուրջը, խոսեց շատ հեռավոր բանե-
րի մասին, բայց աղջիկն իսկույն հասկացավ հոր
միտքը: Նա թույլ լսալոց հորը յերկար տանջվելու և
առաջինն ինքը խոսեց այդ մասին.

— Ի՞նչ անենք, հայրիկ, դու տղա չես ունեցել,
ենպես իմացիր, թե դա յել քո տղան ե: Դու պետք է
հալա ինքը ուրախ լինես...

— Վոչինչ չունեմ, Ուսան ջան,—սրտապնդած ա-
սաց հայրը,—համա զե տղա ել կա, տղա յել... տղա
կա, վոր հոր պատիվը բարձր կպահի, տղա կա, վոր
հոր անունը կիսայտառակի: Յես ինչ իմանամ, թե ով
ե իմ շեմքից վոտը ներս դնում: Ի՞նչ իմանամ՝ հալալ
կաթնակե՞ր ե, թե հարամզադայի մեկը:

— Ինչո՞ւ, դու չե՞ս իմանում, — ընդհատեց
աղջիկը, — առաջ միշտ զալիս եյին առև թե չե, նրա

մասին եյիր խոսում, թե լավ տղա յե, վոսկի տղա
յե, համեստ տղա յե: Հիմա յել...

— Աղջիկ չամ, ախր հասկացիր ե, են ժամանակ-
փա բանն ուրիշ եր, հիմա՝ ուրիշ: Են ժամանակ յես
չեյի իմանում, վոր նա խմ...քո... մեր...

Բարսամ ապերն սկսեց կակաղել. նա չիմացալ
ինչպես վերջացնել միտքը: Այդ նկատելով՝ աղջիկը
դիտավորյալ կերպով լռեց, վոր տեսնի, թե հայրն
ինչ բառ կգործածի դրա համար, բայց հայրն այն-
պես ել չասաց այդ բառը և միտքը փոխեց:

— Յես վոչինչ չոմնեմ, լավ տղա յե. բայց դըր-
սում ե եղան յերեվում: Բալքի տանն ուրիշ տեսակ
ե. վո՞նց իմանաս...

— Իմանում եմ, հայրիկ, իմանում եմ, առանց
իմանալու յես իմ բախոր չեմ կապի անծանոթ մար-
դու հետ: Դու մի նեղասրտի, հանդիսա մնա. ամեն
ինչ քո արտով կլինի, —հուսաղբեց աղջիկը:

Ոսանը չուզեց այդ մասին յերկար խոսել հոր
հետ: Նա գիտեր վոր այդ հարցը կյանքից ամելի յե
հետաքրքրում հորը և յեթե ամբողջ որն ել խոսի այդ
մասին, հայրը դարձյալ չի բավարարվելու: Դրա հա-
մար ել թողեց հորն ու դուրս դնաց, կրկին անդամ
հավաստիացնելով նրան, վոր չանհանդստանա, ամեն
ինչ իր կամքով կլինի և չի դժգոհի...

Ոսանի դուրս դնալուց հետո Բարսամ ապերն ի-
րեն մի պահ այնպես մենակ զգաց, վոր քիչ մնաց
մանկան նման հեկեկար: Նրան թվաց, թե աղջիկն այ-
լեվս չի վերադառնալու, վոր նա հավիտյան հեռա-
ցակ իր մոտից:

Բարսամ ապերը լուր ե դլխահակ դնաց տան առ-

ջեվի պարտեղը, նստեց առվակի խոխոջող ջրի մոտ,
մի քանի բուռ խմեց ջրից, վոր հուզմունքն անցնի,
բայց իզուր: Նրա սիրտն ավելի կծկվեց, ավելի մըդ-
կըտաց և արցունքի կաթիւներն ինքնաբերաբար հոսե-
ցին նրա աչքերից...

Նա մտքում սկսեց անիծել բնության սահմանած
որենքները, վոր աղջիկը հասունանալուն պես պետք է
ամուսնանա, վոր ուրիշի տղան կարող ե ավելի դրա-
վել մարդու հարազատ աղջկան, քան թե ինքը—հայ-
րը, վոր ծնողների փայփայած աղջիկը կարող ե մեկ
որ թռչնի նման թռչել տնից ու այլեվս չվերադառ-
նալ ծնողների մոտ, վոր...

Ու այնքան շատ խորհեց Բարսամ ապերն այդ
որը առվի ամիսն, վոր ինքն ել չնկատեց, թե ինչպես
արդեն արելին անցել ե սարի մյուս կողմն ու ընկնուժ
ե իրիկնամութը:

Մի չարաթ հետո Յարհադը ամբողջովին տեղա-
փոխվեց նրանց մոտ:

Սկզբում Բարսամ ապերը շատ պաշտոնական եր
իր փեսայի հետ: Առավոտները չուտ տնից դուրս եր
դալիս, ուշ յերեկոյան տուն վերադառնում: Շատ
կարճ, համառոտակի պատասխանում եր այն հարցե-
րին, վոր տալիս եր փեսան: Իսկ ինքը վոչ հարց եր
տալիս և վոչ ել առիթ եր տալիս նոր խոսակցության:

Այդպես տեվեց ամելի քան մեկ ամիս: Հանոր
ոտարոտիությունները փեսան ել նկատեց, բայց նա
դրանից վոչ զարմացավ և վոչ ել վախեցալ: Նա գի-
տեր, վոր հայրն անչափ սիրում ե աղջկան: Այժմ յե-
րեվանի ե յեկել մեկը, վորն իրա և հոր միջել բաժա-

նում ե աղջկա սերը: Ուրեմն չպետք ե խրտնել այդ
ուսարութիւններից, այլ ընդհակառակը, աստի-
ճանաբար դրավել հոր սիրու, համոզել նրան, վոր
ինքն այդ շենքն ե մտել վոչ վորպես ոտար մարդ, այլ
վորպես այդ ընտանիքի հարազատ անդամը, վոր նա
այդտեղ ե մտել ամենաբարի, ամենաաղնիվ ցանկու-
թյուններով, վոր նա աղջկանը վոչ միայն չի սառեց-
նի դեպի հայրը, այլ ընդհակառակը, ինքը մա կսիրի
նրան, վորպես իր հարազատ հորը, վորովհետև ինքը
գիտե ծերունու ի բնե բարի սիրու, ազնիվ բնավո-
րությունը:

Ֆարհադը վոչ մի առիթ չտվեց Բարսամ ապորը
վորեկ վատ կարծիք անելու իր մասին: Ընդհակառա-
կը, նա ամեն մի առիթ ողտադորձեց իր անկեղծու-
թյունն ու հարազատությունը ցուցաբերելու համար
և նա ցուտով հասավ իր նախատակին: Զանցավ յերկար
ժամանակ, Բարսամ ապերը խորապես համոզվեց
Ֆարհադի անկեղծության մեջ, տեսավ նրա ազնվու-
թյունն ու աստիճանաբար սկսեց սիրել նրան:

Յեղավ, վոր նա առանց փեսային տեսնելու, ա-
ռանց նրա հետ մի քիչ խոսելու — անկողին չեր մըտ-
նում: Ամեն անդամ, յերբ տեսնում եր Ռոսանին ու
Ֆարհադին ուրախ կատակելով, ջերմ զրուցելով տնից
դուրս գալիս կամ տուն գալիս, սիրու փառավոր-
վում եր. նա հրճվանքը չեր կարողանում թաղցնել և
յերեմն ել կանչում եր նրանց, պատմում, թե նրանց
ամուսնանալու լուրն առնելու որերին ինքն իզուր
տեղից ինչպես եր տանջլում: Այդպիսի խոսակցու-
թյունների ժամանակ Բարսամ ապոր աչքերը կրկին
արցունքակալում եյին, բայց զա ուրախության ար-
ցունք եր...

Այդ որը, յերեկոյան, յերբ Սահակ բիծան խոսք
բացարեց նրա և Ֆարհադի Մոսկվա զնալու մասին,
այս բոլորը մի պահ կայծկլտացին Բարսամ ապոր հի-
շողության մեջ և նա վոտքի կանգնելով ասաց.

— Եհ, վոչինչ, Սահակ քայլոր, կդա մեկ որ,
դու յել Մոսկով կղնաս. ճանապարհը բոլորիս հա-
մար բաց է. մի նեղասրտի, —սփոփեց նա քավորին և
ավելացրեց, —գիշերն արդեն անցնում է, բոլ ե ինչ-
քան խոսեցինք, վեր կաց մտնենք տեղներս...

Լուսնի շողերն արդեն անցել եյին այդիներից,
կովկել դիմացի վողորկ սարալանջի վրա: Լանջն ան-
ձայր ծովի պես ալեկոծվում եր լուսնի շողերի տակ և
մեղմիկ որորվում: Հեռվից, այդիների մթության մի-
ջեց, պարզորոշ կերպով գծադրվում եր լանջի ամեն
մի թուփը, ամեն մի քարը:

Բարսամ ապերն իր հայացքը Մջելով լանջից,
հետ դարձավ և ամբողջ ուժով կանչեց.

— Արա ե՛յ, եղ ո՞վ ես...

Զայնն արձադանքեց դիմացի լեռներում և տեվեց
այնքան յերկար, վոր Բարսամ ապերն ինքն ել զար-
մացալ ձայնի ուժովությունից:

— Ի՞նչ կարիք կար եղակես դոռալու, —ինքն իրեն
ասաց նա և մի պահ շվարած մնաց կանգնած:

Այդ նրա հին սովորությունն եր, վոր դեռ չեր
կարողացել թողնել:

Առաջներում, այգեպանություն անելիս, յերբ
մութն ընկնում եր, նրա հոգսը կրկնապատկում եր:
Յերեկներն իր քողտիկից տեսնում եր բոլոր այդինե-

Ի՞շն ել և նրա ահից վոչ վոք չեր կարող մտնել մեկն
ու մեկի այդին, գողություն անել: Իսկ զիշերները,
յերբ նա իր աչքերի առաջից հինգ քայլ այն կողմը
չեր տեսնում, դրությունը սաստիկ բարդանում եր:
Նա ամբողջ զիշերը պետք ե ըլջեր այդիները, կան-
չեր ամընդհատ, ձայն տար, վոր իմանային թե քնած-
չե այգեստանը, արթուն ե և յեթե վորեւ գողություն
կատարվի, նա կարող է խսկույն բոնել ու խայտառա-
կել գովին: Դա, իհարկե, մասսամբ կանխում եր գո-
ղությունները, վոր այն ժամանակ շատ տարածված ու
սովորական յերեսույթ եր, բայց ամբողջովին վերջ
տալ՝ չեր կարողանում: Զեր պատահի մի զիշեր, վոր
սարերից չգային հոտաղները, չմտնելին որա - նրա
այդիներն ու տանելին այն բոլորը, ինչ վոր նրանց
ձեռքը կնկներ զիշերվա խավարի մեջ: Բացի հո-
տաղներից, հենց իրենք, գյուղացիներն ել եյին հա-
ճախ գողության զնում, մտնում հարեվանի այդին,
հավաքում, ինչ վոր կարողանում եյին: Այդպիսի
գեղքերում անտանելի յեր լինում Բարսամ ապօր վի-
ճակը: Հաջորդ որը գալիս եր այգեսերը, տեսնում
այդին տակն ու վրա արված և ինչքան լրւտանք կար,
թափում եր այգեստանի դլիսին:

Հետաքրքիր ե մի գեաք, վոր Բարսամ ապերը
բնույլ չի կարողանում մոռանալ: Դա ավելի քան քսան-
հինգ տարի առաջ եր: Մեկ որ, կեսորվա տաքին,
Բարսամ ապերն իր քողուիկում նստած, տեսավ, վոր
Հակոբյանենց Համբարձում աղան ձին նստած գալիս
և գեաքի իր այդին: Բարսամ ապերը հեռվից իսկույն
հանաչեց նրան և կանչեց.

— Բարով, հազար բարով ես զալիս մեր բաղերը,
այ Համբարձում աղա:

— Բարով մնաս, Բարսամ, վո՞նց ես, — անտար-
բերությամբ պատասխանեց Համբարձում աղան և ա-
սանց իր հարցի պատասխանը լսելու՝ ձին քչեց դեպի
այդին:

Զանցած մի քանի ըուպե՝ Համբարձում աղան
փրփրած դուրս յեկավ այգուց և սկսեց վրա տալ.

— Այ հարամ լինի քո բարովն ել, դու յել, դու-
ռումսադ, շունշան վորդի: Հալա մի լավ գործ ես
կատարել, վոր բարովում ել ե՞ս:

— Ի՞նչ ե, ի՞նչ ե պատահել, Համբարձում ա-
ղա, — զորմացած հարցրեց այգեպանը:

— Չոռ ու գահրումար ե պատահել, ավազակի մե-
կը, վեր կաց, յեկ տես թե ինչ ե պատահել:

Բարսամ ապերը դլուխը տարակուանքով շար-
ժելով վերկացավ, յեկավ գեաքի Համբարձում աղան,
բայց դեռ վոտը չգրած այդին, Համբարձում աղան
յերկու անդամ բուռնցքով այնպես ուժգնորեն խփեց
այդեպանին, վոր նրա զլուխը պտուա յեկավ ու նա
փովեց գետնին:

Հետո Համբարձում աղան ինքն իր ձեռքով բարձ-
րացրեց Բարսամ ապորը, քաչեց իր հետեւից, տարավ
այդին և այնտեղ ցույց տալով գեղձի ու սերկեվիլի
մի քանի կոտրոված, կիսաչոր ճյուղեր և զետնին
թափոված մի քանի տերեվ տասց.

— Ես ո՞վ ե արել, հը, ավազակ, ո՞վ ե արել,
ի՞նչու յես ես նմանի բազս ավերակ, բրիչակ դարձ-
րել:

— Ի՞նչ ե յեղել, Համբարձում աղա, ի՞նչ...

— Աչքերդ քոռ ե՞ն, տեսնում չե՞ս, թէ ինչ ե յեղել, զերան ես դարձրել բաղը, հալա խոսում ել ե՞ս:

Այդտեղ Համբարձում աղմն մի քանի բոռնցք ել խփեց Բարսամ ապորը, կապտացրեց նրա աչքերի տակը, թուք ու լուսանք թափելով նա յերեսին թողեց ու դուրս յեկավ այլուց:

Անան վերջին աղմն վոչ մի կոպեկ փող և վոչ ել մի դրվանքա ցորեն չտվեց Բարսամ ապորը: Նա մերժեց տալ այգեպանի աշխատավարձը, ասելով, վոր նա, իր թէ, թալանել ե այդին: Իսկ հետո պարզվեց, վոր նա հենց ինքն ե կոտրատել ծառերից մի քանի չոր և անպետք չյուղեր, վորակեսզի մեղադրի այլհպանին և չտա նրա աշխատավարձը...

Անցել են տարիներ: Բարսամ ապերը չի մոռացել այդ գեղքը և չի յել կարողացել թողնել իր այն սովորությունը, վոր զողերին փախցնելու համար անվերջ շրջում եր այդիներն ու ամրնդհատ ծայն տալիս.

— Արա հե՛յ, ո՞վ մտավ բաղերը. արա շուտ դուրս յեկ, թէ չե...

Այս անդամ, յերբ ձայնն այնքան ուժգնորեն արձագանքեց լմոների մեջ, նա ինքն իրեն ասաց.

— Ի՞նչ եմ եսպես գործոուում. ո՞վ ե հիմի դալու մեր կոլիսովի բաղերը զողության. կուլակ Համբարձո՞ւմը, յես նրա շուն հերն անիծեմ...

Հետո նա շրջվելով գնաց մտավ անկողինը, բայց քունը չտարավ: Բազմաթիվ անդամ շլջվեց կողերի վրա և սկսեց մտաքերել առաջիկա իր ճանապարհորդությունը: Փորձեց պատկերացնել, թէ ինչպիսի ճանապարհներով պետք ե անցնի, ինչպիսի տեղեր պետք ե տեսնի: Այդ ժամանակ նրա միտքն առաջին հերթին

կանգ առավ ծովի վրա: Շա՛տ, անչափ շատ եր իսկ ծովի մասին, ամենից շատ ծովի մասին և հետաքրքր քըրպիկ, բայց և այնպես վոչ մի անդամ չեր կարողացել կոնկրետ կերպով պատկերացնել ծովը: Ամեն անդամ ծովի մասին լսելիս նա տարբեր պատկերացում եռ ունեցել և այժմ նրա մտապատկերների մեջ ծովին անձեվ, անգույն, անորոշ մի հասկացողություն ե, վորը տարբեր ժամանակ տարբեր տեսակ և յերեսում: Հետո նրա միտքը կանգ առավ չողեզմացքի, չողենավի վըրա, անցավ բազմաթիվ ձորեր, յերկար ու բազմապիսի ճանապարհներ, ողի մեջ կանգնած կամուրջներ, անցավ անտառներով, անցավ քաղաքներով, հասավ Մոսկվա — տանիքները թիթեղապատ, բազմահարկ տներով, լայն ու ընդարձակ փողոցներով, անծայրածիր տարածության մեջ վուլած, արշալույսի շողերի մեջ հուրճուրալիս: Մոսկվա...

Վերջին ժամանակներս Բարսամ ապերը վորքա՞ն ե փորձել նախորով գեթ աղոտ կերպով պատկերացնել այն, ինչ պետք ե անձամբ տեսնի հետո: Մոսկվա...

Ահա ինքը Մոսկվայումն ե: Գնում և առաջին հերթին տեսնելու Արեվ մարդու — լենինի դամբարանը:

— Լենինը մարդկության անշեղ արելն ե, ով վար Մոսկվա յե գնում, չի կարող առանց նրա դամբարանը տեսնելու հետ գնալ, — Մոսկվայից վերադառնալու հենց առաջին որն ասել ե Ոսանը և այդ խոսքերը Բարսամ ապերը չի մոռացել:

Նա այժմ ահա Արեվ մարդու դամբարանի մոտ է: Բարձր կամարների տակից ներս մտնելիս նրան ընկերանում ե բարձրահասակ, թիկնեղ, պարծառ

դիմքով, հրավառ աչքերով մի մարդ: Բարսամ ապոր աչքերը յերբ հանդիպում են այդ մարդուն, նրա մարմինն ինչ վոր անսովոր գդացում է պատում: Նա մի պահ կանգ է առնում, նայում բարձրահասակ, թիկնեղ մարդուն: Նա մեկնում է ձեռքը, ուզում է ինչ վոր բան ասել պայծառադեմ մարդուն, այդ ժամանակ Մարդն ինքն է ընդառաջ գալիս Բարսամ ապօրը, ուղիղ նայում նրա աչքերին և մտերմաբար հարցնում.

— Ուսանի հայրն ե՞ս:

— Հա՛, յես եմ. Արդումանենց Բարսամը... կակաղելով ասում է Բարսամ աչքերն ու ապշած նայում Մարդուն, վորի գեմքն անչափ ծանոթ է իրեն, բայց չի համարձակվում տալ նրա անունը:

— Շատ ուրախ եմ,—ասում է Մարդը, —յես գետելի, վոր դու պիտաք է Մոսկվա գտու, ինձ քո աղջիկը՝ Ուսանի և ասել գեռ անցյալ տարի:

Ու նրանք կողք-կողքի քայլում են սյունազարդ տեղերով, հասնում դամբարանին: Բարսամ ապերը այստեղ մի պահ կանգ է առնում, նայում Սորիկ հրակ գեմքին, աչքերը լցվում են արցունքով...

— Լաց մի լինի, —ասում է պայծառադեմ Մարդը և նրանք լուս՝ հեռանում են դամբարանի մոստից:

Քիչ հետո նրանց դեմ բացվում է յերկար, տերբեկախիտ ծառուղիներով չքնաղ մի այգի, վորի մըրբական ծառուղից այնպիսի պատկներ կան կախված, վորոն անունն անդամ չի լսել Բարսամ ապերը:

— Այ քեզ բաղ, ինչ եմ ասել: Մարդ նսպես մի տեղ պետք է բաղվանչություն անի, վոր ասեմ...

— Զեր այդիներում այսպիսի պատկներ կա՞ն, —

Բարսամ ապոր մտքի թելը կտրելով հարցնում ե պայծառադեմ Մարդը:

— Զե՛, մեր այդիներում եղ տեսակ պտուղներ հալա չկան, ընկեր...

Բարսամ ապոր լիզուն դարձյալ չի գալիս տալու Մարդու անունը, թեպետ և արդեն հաստատ գիտե, թե ում հետ է փոստ:

— Սրանք շատ լավ պտուղներ են, —ասում ե Մարդը, —դուք ել ձեր այդիներում աճեցրեք այսպիսի ծառեր: Մենք այժմ մեր կոլտնտեսություններում պետք է ունենանք այնպիսի մրգատու ծառեր, վորպիսիք գեռ չի տեսել ամբողջ աշխարհը:

— Կունենանք, կունենանք, ընկեր Սուալին, — վերջապես ասում է Բարսամ ապերն ու ավելի մոռենալով նրան՝ համընթաց անցնում են գալարազեղ ծառուղիների արանքով, գեղին, բազմագույն մրգերի տակ կըված ծառերի տակով:

Վերջալույափ շողերի տակ հուրհրում են փարթամ ծառերի ճյուղերից կախված վոսկեգույն մրգերը, իսկ նրանք, յերկու հողով, քայլում են անփերջ, խոսում անհագ ու իրար տալիս բազմաթիվ հարցեր...

...Վորքա՞ն քազզը են այս ապրումները, վորքա՞ն դրավիչ: Բարսամ ապերը չի ուզում շեղել իր զգացմունքների հունը: Նա այժմ ել պատկերացնում է, թե ինչպես արդեն վերադարձել է Մոսկվայից: Գյուղացիք—մեծ ու փոքր, ըշապատել են նրան, բազմաթիվ ու բազմապիսի հարցեր են տալիս նրան, իսկ ինքն առանց շտապելու, մեկ առ մեկ պատմում ե իր տեսածների մասին, զարմացնում ունկնդիրներին:

Անցնում են տարիներ, ինքն ավելի յէ ծերանում. քայլում է ձեռնափայտի ողնությամբ, թոռնիկի ձեռ-

քից բոնած գնում ե այդիներն ու ճանապարհին
Մոսկվայի մասին պատմում թոռանը, ասում, վոր
ինքն իր աչքով տեսել ե Արեվ մարդու դամբարանն
ու անձամբ խոսել պայծառապեմ Մարդու հետ:

Բարսամ ապօր միտքն այդտեղ նորից այլ հար-
ցի յե անցնեմ, զբաղվում թոռնիկով...

— Յարաբ, աղջիկ կլինի^o, թե տղա: Տեսնես
Մոսկվայից վերադառնալուց հետո արդեն կլինի^o...
Յարաբ ո՞ւմ կնմանի...

Ենալ այսպես անվերջ նորանոր պատկերներ, նոր
ժամորումներ, մինչև կոպերն ինքնաթերաբար իջնում
են իրար վրա և փակում աչքերը:

Լուսադեմին Բարսամ ապօրն արթնացրեց ֆար-
շագը:

— Եղ ինչ պինդ ես քնել, հայրիկ, կանչում եմ
կանչում չես արթնանում:

— Աչքս հենց նոր կողավ, սկի քնել չեմ, իր
դիմավերելում հանկարծ տեսնելով վեսային՝ չիոթ-
ված ատաց Բարսամ ապերն ու ավելացրեց, — Ի՞նչ
կա, եսպես առավոտը ծեղ ու ծեղ ի՞նչ խաբար ե.

— Հիմա պետք ե գյուղ դնալ, եսոր ճանապարհ-
վում ենք:

Բարսամ ապերը ձեռքերը տարավ դեպի աչքերը,
որորից ունքերը և առանց տեղից շարժվելու ասաց.

— Բա բաղերին ո՞վ կնայի.

— Քեզ կփսարինի Սահակ բիձան. այդ մասին
լուսել ենք կոլտնտեսության վարչությունում:

Բարսամ ապերն ուրախացած, առանց ժամանակ
կորցնելու, վաղեց Սահակ բիձայի մոտ, արթնացրեց
նրան և հայտնեց լուրը:

— Ճիշտ, —ուրախացած բացականչեց Սահակ
բիձան:

— Ճշտից ել հալա մի քիչ ավել, —պատասխա-
նեց Բարսամ ապերը, ձեռք տվեց Սահակ բիձային և
պատրաստվեց հեռանալու, բայց վերջինս վոտքի
կանգնեց, գրկեց իր քավորին և աշխուժորեն ձեռքը
նրա ուսին խփելով ասաց.

— Գնա, Բարսամ քավոր, թող ճանապարհող ծաղ-
կագարդ լինի: Ասել եմ, ելի ասում եմ, որամուտդ-
լավ տեղ վերջացավ: Դա մեծ յերջանկություն ե:
Գնա, բարի ճանապարհ: Բայց տես, յես անհամբերու-
թյամբ սպասում եմ քեզ:

— Արխային մնա. կգամ ամեն ինչ մեկ-մեկ կը-
պատմեմ քեզ, —վերջին անգամ ասաց Բարսամ ապե-
րը, կրկին անգամ գրկվեց Սահակ բիձայի հետ և այ-
դիներից դուրս յեկան:

ՑԱՆԿ

Երնդի ձևայնը	5
Իղձ	33
Աղփականը	7
Պատասխանը	84
Բնուանիքը	92
Ապրիլիագա	108
«Աստղագետ» Մուկուչը	15
Հավատ	122
Կարոտ	127
Մակագրություն ճաշացուցակի վրա	136
Բնդհատված որագիրը	142
Ցերծանկություն	157

ՀՆԹԵՐՑՈՂԻՆ

Խնդրվում է հայտնել ձեր կարծիքն ու տպավորություններն այս պատմվածքների մասին, ինչպես և ձեր հասցեն ու տեղեկություններ ձեր զբաղմունքի մասին
հետեւյալ հասցեյով. Բայ, ոլ. Փիոլետովա, 8

Դետյոնիզատ.



27.10.44.
Պատ. Խմբագիր՝ Պ. Սեվունց Ա.
Տեխ. Խմբագիր՝ Մ. Ս. Ս. Խոսնդով
Սըբագրիչ՝ Մ. Գևորգյան

Հանձնված ե արտադրության Զ/1 1939 թ.
Սառըագրված ե տպագրության 8/VII 1939 թ.
Տպագր. Նշանների քանակը՝ 437272;
Տպագր. թերթերի քանակը՝ 11¹/2.
Գլավլիսի լիազոր № 4484. Ստ. Բ-6
Պատվեր № 96, տիրաժ 3000;
Գինը 2 ոուբ., կազմը՝ 1 ո 50 կ.



2 №. 50 4.

2 + 0 90